

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА
BULLETIN OF YEREVAN UNIVERSITY

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ОБЩЕСТВЕННЫЕ НАУКИ
SOCIAL SCIENCES

ՀԱՐՔ 2 **ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**
СЕРИЯ 2 **ФИЛОЛОГИЯ**
VOLUME 2 **PHILOLOGY**

№ 3 (144)

ԵՐԵՎԱՆ - 2014

Հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 1967 թվականից:
Журнал выходит три раза в год. Издается с 1967 года.
The Bulletin is published thrice a year. It has been published since 1967.

**«ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ»
“ԲАНБЕР ЕРЕВАНИ АМАЛСАРАНИ”
"BANBER YEREVANI HAMALSARANI"**

Գլխավոր խմբագիր՝ Միրզոյան Հ. Ռ.
խմբագրական խորհուրդ.
Ալեքսանյան Ա. Ս., Ավետիսյան Լ. Վ. (գլխ. խմբագրի տեղակալ), Փարուզյան Ա. Հ.,
Գոնչար Ն. Ա. (գլխ. խմբագրի տեղակալ), Խաչատրյան Ա. Կ., Հարությունյան Է. Ա.,
Հովակիմյան Ա. Է. (պատասխ. քարտուղար), Հովսեփյան Լ. Ս., Սիմոնյան Ա. Հ.

Главный редактор: Мирзоян Г. К.
Редакционная коллегия:
Аветисян Л. В. (зам. главного редактора), Алексанян А. С., Арутюнян Э. А.,
Габузян А. А., Гончар Н. А. (зам. главного редактора), Овакимян А. Э.
(ответ. секретарь), Овсепян Л. С., Симонян А. Г., Хачатрян А. К.

Editor-in-chief: Mirzoyan H. Gh.
Editorial Board:
Aleksanyan A. S., Avetisyan L. V. (Deputy editor-in-chief), Gabuzyan A. H.,
Gonchar N. A. (Deputy editor-in-chief), Harutyunyan E. A., Hovakimyan A. E. (Ex-
ecutive Secretary), Hovsepyan L. S., Khachatryan A. K., Simonyan A. H.

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ - ФИЛОЛОГИЯ - PHILOLOGY

խմբագրական խորհուրդ - Հովսեփյան Լ. Ս. (պատասխանատու խմբագիր),
Ասատրյան Գ. Ս., Ավետիսյան Յու. Ս., Բրուտյան Լ. Գ., Փարրիելյան Յու. Ս.,
Փասպարյան Ս. Զ., Դիլբարյան Ն. Հ., Հակոբյան Լ. Գ., Պետրոսյան Դ. Վ.,
Սաֆարյան Վ. Հ.

Редакционная коллегия: Овсепян Л. С. (ответственный редактор),
Аветисян Ю. С., Акопян Л. Г., Асатрян Г. С., Брутян Л. Г., Габриелян Ю. М.,
Гаспарян С. Х., Дилбарян Н. А., Петросян Д. В., Сафарян В. А.

Editorial Board: Hovsepyan L. S. (managing editor), Asatryan G. S., Avetisyan Y. S.,
Brutyanyan L. G., Dilbaryan N. H., Gabrielyan Y. M., Gasparyan S. Q., Hakobyan L. G.,
Petrosyan D. V., Safaryan V. H.

© Բանբեր երևանի համալսարանի - 2014
© երևանի պետական համալսարանի հրատարակչություն - 2014

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՈՎՅԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ

ՎԱՋԳԵՆ ՍԱՖԱՐՅԱՆ

Խաչատուր Աբովյանին բնորոշ է եղել ոչ միայն անձնական երկվորությունների ընդհանրական դրաման, այլև դարակազմիկ մեծ անհատին հատուկ ազգային-հասարակական հակասությունների ողբերգությունը, որոնք վերածվում են ստեղծագործական հարաշարժ ներհակությունների: Քանաքեռցի գյուղական պատանին ուներ հայոց անցյալից ժառանգած բարձր քաղաքակրթական լույսը. կայծառաճանձր այն ժամանակակից եվրոպական մշակույթի ազդեցությամբ, թե ոչ՝ դա ճակատագրի տնօրինության խնդիրն էր: Նրա ստեղծագործական կյանքի նախադրյալային – դրոպային – հետդրոպային՝ շատ խոսուն պարբերաբաժանմանը քաջատեղյակ են բոլորը, ընդհանուր առմամբ գիտեն դրանց բովանդակային և լեզվական առանձնահատկությունները: Մի կարևոր շեշտադրում. «Պատանի Խաչատուրի առաջին փորձը լուրջ նախադրյալ էր նրա ինքնատիպ մտածողության... Ու երբ աչքի ենք անցկացնում և միմյանց հետ բաղդատում Աբովյանի այս և կյանքի վերջին տարիների ստեղծագործությունները՝ գրված գրական որոշակի հայացքներով, նկատում ենք, որ հետագայում նա ոչ թե շեղվել է իր ընտրած առաջին ուղուց, այլ ընդհակառակը՝ ավելի խորացրել և լայնացրել է այն»¹:

Եվ այսպես՝ էջմիածնի եկեղեցական և Թիֆլիսի Ներսիսյան դպրոցների ավանդական ազգային կրթության ուղին անցած պատանի Աբովյանի առաջին գործերն են *տաղերը*, որոնց մեջ առկա է միջնադարյան հայ քնարերգության ամենատարածված ու ընդգրկուն ժանրի՝ տաղի և արդեն մոտ երեք դար հայոց հոգևոր-մշակութային կյանքի մաս դարձած աշուղական երգի համադրությունը: Աբովյանի համար ևս տաղը երգվող բանաստեղծություն է, ինչպես որ ժանրին նորոպի ծնունդ տված Գրիգոր Նարեկացին էր այն հոմանիշում «մեղեդի», «երգ» տեսակներին՝ անկախ տաղի եկեղեցագործառական ծագումից: Եվ ինչպես սկզբում է տաղը ունեցել եկեղեցու ծիսակարգային կոչում, այնպես էլ Աբովյանը և իր սերնդակիցները շատ ավելի սովոր էին այն լսել վանքերում, նաև ուսումնականների միջավայրում: Ըստ էության ծանոթ չլինելով հետնարեկացիական տաղերգուներին (Ֆրիկ, Կոստանդին Երզնկացի, Յովհաննես Թլկուրանցի, Գրիգորիս Աղթամարցի և այլք) և իմանալով Պետրոս Ղափանցու, Պաղդասար Դպիրի երկերը (Ղափանցու մասին գրում է, թե նա «ուներ զքնքուշ և զգորովալից սիրտս»)՝ Աբովյանը պահպանում է միջնադարյան տաղի ոճական ինչ-ինչ կողմեր, բնապատկերի զուգահեռումներով արտահայտված իր մեծ նվիրումի, տառապանքի զգայացուցիչ պատկերներ:

¹ Պ. Յ. Յակոբյան, Խաչատուր Աբովյան, Եր., 1967, էջ 187:

Սիրոյ քո հուր մտեալ հոգիս իմ մաշէ,
Յամենայն ժամ եռանդութեամբ տոչորէ.
Ո՞ւր արդէօք կաս, ով նագելի ի սրտէ.
Զի տեսլեամբ քո դադարիցեն յայրմանէ²:

Որքան էլ քերթվածը վերնագրվել է «Տաղ ուրախութեան ի գոյն առաւօտեան», բայց սկսնակի որոշ պատկերային վեհերոտության մեջ նկատելի է Աբովյանի ստեղծագործական խառնվածքին մինչև վերջ բնորոշ մնացած ողբային վիճակների զգացմունքային արտացոլանքը: Դեր են խաղացել, անշուշտ, միջավայրը հագեցրած բայաթին ու աշուղական երգը ևս: Աբովյանը իր այս առաջին տաղերում երբեմն ուղղակի տեղադրում է «ոհ, աւաղ», հետո նաև՝ «ախ, աման» սգային ապրումներ տրամադրող ծայնարկությունները, տաղերի վերջին տների մեջ միջնադարյան հեղինակների և աշուղների նման նշում հեղինակի անունը՝ «Խաչատուր, Խաչիկ, Խաչուկ»: «Ուրախութեան...» այս տաղի ավարտը ևս այդպիսին է.

Ի դուռն մահու մերձեալ ահա տեսանիմ,
Գերեալ սիրովդ այսր անդր անկանիմ,
Խաչատուրս ցաւօք սիրոյդ տատանիմ,
Զի գէթ տացես դու մխիթար սրտի իմ: (էջ 33)

Մտովի վերհիշելով ու անցնելով ստեղծագործության ամբողջ ընթացքում շարունակվող նման ապրումների գրաբարյան ու աշխարհաբարյան օրինակները, որոնց շեշտադրումը հետզհետե հայրենասիրական է դառնալու, անդրադառնանք արևելյան երգի տարածված տեսակին՝ բայաթին: Այն հիմնավոր էր կարծրացել հայոց հոգու վրա, և «հարիր հագարին» մեծ ասելիքի առաքելություն ունեցող լուսավորիչը եվրոպական արվեստի ու գիտության բարձունքներին տիրելուց հետո գրականին մոտ աշխարհաբարով անդրադառնում է այդ ժանրին, որ հայը գոնե հայերեն երգի: Ինչպես աշուղությունը ծնվեց պարսկա-արաբական սուֆիական պոեզիայի խորքերից և «թուրքանալով» ինչ-որ չափով աղարտեց նրա խոհաքնարական խորքը, այնպես էլ բայաթին, ըստ Աբեդյանի, առաջ է եկել «բեյթ» բանաստեղծական տեսակից, որի երկտողանի կառուցվածքի միավորումը ծնունդ է տվել չորստողանի «դուբեյթին»՝ 1-2-4 տողերի հանգավորումով և 3-րդ անհանգ տողով, որով այս տեսակը բավականին մոտ է քառյակին: Դուբեյթ-քառյակին բնորոշ զվարթությունը (ժողովրդական՝ «Էսօր ուրբաթ ա, պաս ա, //Ծոցինդ էրժաթ թաս ա. //Տո սրտամեռ վարդապետ //Խի՞ էիր ասում՝ չհաս ա»), սիրածին և սիրուն հասնելու պայծառությունը, միջավայրի կենդանի շունչը այստեղ փոխվում են, և «Աբովյանի բայաթիները ցույց են տալիս մեղմ տխրություն, սիրածից անջատման վշտահար դրություն, սրտի հանդարտ ցավ»³.

² **Խաչատուր Աբովյան**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, Եր., 1948, էջ 36: Սույն աղբյուրից հետագա մեջբերումների էջերը կնշվեն շարադրանքում:

³ **Խաչատուր Աբովյան**, Բայաթիներ, Եր., 1941 (Մ. Աբեդյանի Առաջաբանը), էջ 4:

Սիրտս պատկեր չի, քաշեն
Քեզ տամ, ինձ էլ չմաշեն,
Միս ա, թուր էլ խփում ես,
Ի՞նչ անեն, ախ չի քաշեն⁴:

Ակնհայտ է ժողովրդական լեզվի, ոգու, էպիկական մտածողության հարազատությունը՝ հեղինակային ապրումի մեղմությամբ՝ «Գնացիր, ախ, եղ արի, //Ես մեռնում եմ, եղ արի: //Դու իմ յարես կապեցիր, //Էն էլ դարդու եղ արի» (էջ 15), որը անձնական սիրո տառապանքից վերաճում է ազգային-քաղաքական վշտի՝ «Անի, Անի, ախ Անի, //Քանդողիդ տունը քանդվի. //Քեզ որ ազգը չպահեց, //Մեկ սուգ անողն ինչ անի» (էջ 16), ձեռք բերում նաև սոցիալական շեշտադրում՝ «Տար էս հավին, այ ուրուր, //Աշխարքս դանակ ա ու սուր: //Ձոռ մարդի թուրն ա կտրում, //Խեղճն ո՞ւր կորչի, ախ, ո՞ւր, ո՞ւր» (էջ 17), ստանում անգամ հումորային բովանդակավորում՝ «Միրքիդ դուրբան, այ տերտեր, //Բոյըդ բարդի, չալ բեղեր, //Խելքս տարան՝ բենուրվաթ, //Քանի՞ կանչեն՝ ախ, տեր, տեր» (էջ 20), և, անշուշտ, իմաստավորվում կյանքի մասին խոհական ընդհանրացումներով՝ «Մարդուս կյանքն է առուտուր, //Մեկ խեր կըզա, մեկ՝ շառ-շուռ: //Դու քո ճամփեդ մի ծռիր, //Թե պարտք ունիս, առ ու տուր» (էջ 24): Այսինքն՝ սրանք բովանդակային առումով բազմաշերտ են:

Մեկ որ Աբովյանի բայաթիները՝ ողբային ապրումների շեշտադրումով հակված են ընդլայնելու բովանդակային շրջանակը, ժանրային հատկանիշները ևս առածգական են դառնում, և ինչպես ժողովրդի մեջ, այստեղ ևս բայաթին շատ ավելի ընկալվում է որպես սգերգ, ողբային երգ ընդհանրապես: Այս երկրորդ առումով ժանրի առկայությունը տեսնում ենք Աբովյանի տարբեր գործերում, հենց «Վերք Յայաստանի»-ում, և սրանք ներառում են առաջին շրջանի տաղերի, դորպատյան էլեգիաների ու ներբողների և ռոմանտիկական բանաստեղծական պոռթկումների ոճամտածողական տարրեր, ուր գրաբարը եղել է յուրօրինակ հարազատացնող կապ եվրոպական բանաստեղծության ազդեցությունը ևս կրող գրաբար քերթվածների և արևելյան շեշտադրումներ ունեցող, ժողովրդին մատչելի աշխարհաբար երգերի միջև: «Վերք»-ի բանաստեղծական ընդմիջարկումներից հիշենք մի քանի դրվագ: «Միառլամի սուգը» բառային համատեքստի մեջ զգացնել է տալիս բայաթի-երգի արևելյան ծորացող-սգային, բայց ոչ այնքան բանաստեղծական պատկերային բնույթը. թուրքերենին ու ժանրին լավ ծանոթ Աբովյանը կարծես որոշում է ցույց տալ այն նստվածքը, որից ոչ թե կտրուկ, այլ հանգիստ անցումով պիտի ձգտի հեռացնել իր ազգին. այդպիսի բարդ անցումների գիտական, մշակութային, ազգաբանական հիմնավորումներ լայն առումով նրան տվել էր եվրոպական Դորպատուն ուսումնառությունը.

Վայ, ես քոռանամ, վայ...վայ, ջանս դուրս գա, վայ...
Երեսս ոտիդ տակը փիհանդագ, մադաթ...

⁴ Նույն տեղում, էջ 12:

Եթմներիդ գլխովն պտիտ կտամ, աղա ջան...
Սրանց ի՞նչ ջուղաբ տամ, ջանմ ջան, վայ...⁵

Իսկ օրինակ՝ Վարդանի եղերական մահվան առթիվ բերված չափածո ողբը պատկերի ու զգացմունքի արտահայտչաձևերով զարմանալի խորունկ աղերսներ ունի միջնադարյան հայ ողբին, ասենք՝ Ներսես Շնորհալու «Ողբ Եղեսիոյ»-ին, նաև ընդհանուր երանգներ կան Ֆրիկի «Գանգատ»-ի հետ, որոնք, պարզ է, որ չեն կարող լինել ազդեցություն այնպիսի հեղինակներից, ում ծանոթ չէր գրողը, այլ ծագումնաբանական լիցքերի արտահայտություններ են: Այստեղ «մնաք բարով»-ները սրում են զգացմունքը կրկնվող ժխտումներով՝ «Ոչ հոր ոտ կգա մեր գերեզմանը, //Ոչ մոր արտասուք կթափի մեր տանը» (էջ 151). հիշենք Շնորհալու պոեմը. «Ոչ պատանօք զոք պատէին, / ոչ վերարկուս արկանէին. // Օրինաւոր ոչ թաղէին / և ոչ կոծովք յուղարկէին»⁶: Հրաժեշտը վերաբերում է նաև բնութայնը («Մեր երեսին էլ ծաղկիք, կանաչիք»), և կանոնական պահանջով՝ պատիժն ու ողբային վիճակը, որպես սեփական մեղքերի պատասխան, հասնում «ֆրիկյան» զանգատի («Ախ, տեր իմ Աստված, թե մենք առաջիդ //Մեղավոր էինք, որ պատվիրանիդ //Չհնազանդեցանք, անիրավ էինք, //Մեզ սպանեիր, ընչի՞ մեզ թողիր»⁷), և ավարտվում հայրենիքը պահելու գոյատևական պահանջով, որ որդիները՝ «Էս օրին չհասնին, էս ցավը չտեսնին, //Տան իրենց կյանքն ու պահեն աշխարհը» (էջ 153): Իսկ եթե անգամ հեղինակը հիշեցնում է, որ սա բայաթի է, որոշողը մնում է զգացմունքի ու պատկերի հաղորդած տրամադրությունը: Մի դեպքում հուշվում է, թե Աղասին «սկսեց բարակ ձենով էս բայաթին ասել. «Բարով մնաք, բարով, սարեր ու ձորեր, //Ալվան ծաղկներ, սիրուն աղբրներ, //Որ ինձ պահեցիք դուք էսքան օրեր» (էջ 201), մի այլ դեպքում ամեն ինչ ուղղակի ամբողջացնում է ապրումը.

Ծնող, ազգականք հեռու ինձանից.
Լուսնին նայելով, ձեր սերն հիշելով՝
Երաբ, ե՞րբ կըլի, որ ես ձեզանից
Իմ կարոտս առնիմ, ձեզ ջան ասելով: (էջ 181)

Կարոտի ու բնութայն ընկալումների նույն համադրությունները երևում են «Նազլվի սուգ»-ի, նաև Մուսեի երգի մեջ, որն ունի «Բայաթու գունով» հուշումը:

Դորպատն ու Եվրոպան, ուրեմն, Արովյանին նոր քաղաքակրթության մեջ էին առել իր երկրի խավարն ու տգիտությունը ոչ թե հիմնովին մերժելու, այլ այդ երկրի անցյալի հոգևոր-մշակութային թռիչքների ծանոթությամբ կամ զենետիկ փոխանցումներով, դրանց համահունչ ու հասկանալի եվրոպականը բերելու թուրք-պարսկական աղարտանքի նստվածքը աստիճանաբար, զիջումներով մաքրելու նպատակով: Այս բարդ եռախորհուրդը (անցյալի հայոց հոգևոր-մշակութային վերելքներ – դրան համա-

⁵ Խաչատուր Աբովյան, Երկեր, Եր., 1984, էջ 92:

⁶ Ներսես Շնորհալի, Ողբ Եղեսիոյ, Եր., 1973, էջ 78:

⁷ Խաչատուր Աբովյան, Երկեր, էջ 152:

հունչ նոր եվրոպական քաղաքակրթություն – դրանցից դարերով հետ շարտված Հայաստանը վերածնելու ուղղությամբ լուսավորյալ գործչի ներքին ու արտաքին տվյալանքներ) Աբովյանը մարմնավորում է ոչ միայն գեղարվեստական գործերում, այլև դրա ծրագրային էությունը բացում-բացատրում է հողվածներում, նամակներում ու խնդրագրերում և այլ առիթներով: Դորպատ գնալու իրավունքի համար Նիկոլայ Առաջին ցարին հղած խնդրագրում ստիպված է լինում «լուսաւորեալ համալսարան»-ում սովորելու կարևորությունը հիմնավորել նաև նրանով, որ «Սինօդն էջմիածնի ամենևին ոչ հոգայ զագգային լուսաւորութենէ»⁸:

Այս կամ այն առիթով անընդհատ ներքին տվյալանքներով նշելով իր ժամանակներում հայոց մեջ տիրող մղձավանջային խավարն ու տգիտությունը՝ Աբովյանը ստիպված է լինում հիշեցնել նաև, որ դա արդյունք է թուրք-պարսկական 600-ամյա ծանր լծի: Իր բարեկամ հայագետ Յ. Պետերմանին է ուղարկում «Երևակայութիւն ի վերայ ճանապարհորդութեան ի լեառն Արարատ» 36 քառատողից բաղկացած երկարաշունչ քերթվածը (գրված 1829 թ. սեպտեմբերին՝ վերելքից անմիջապես հետո)՝ այս առումով շատ բնորոշ մեկնություններով: Նախ՝ այս երկը կարծես հետագա դատողությունները հիմնավորող, ականատեսի անկեղծ նվիրումով, գրաբարի հարստությունը վկայող ճոխ պատկերավորությամբ, զգացմունքի և ճանապարհի ու տեսածի իրական տպավորչականությամբ հատկանշվող արժեքավոր ստեղծագործություն է (այլ առիթով՝ արժանի հիմնավոր քննության), և հետո՝ կարևոր են նամակում արված դատողությունները (այն ուղարկվել է Դորպատից Բեռլին 1835 թ.՝ ուսումնառության վերջերում), ուր կարծես արևմտյան, ավելի որոշակի՝ գերմանական քաղաքակրթության երկու կարևոր կենտրոններում հնչեցվում է յուրօրինակ ահազանգ, որին պիտի հաջորդի ծրագիրը: Աբովյանը իր քերթվածով անուղղակի փաստարկելով սասածը՝ ցավով նկատում է, թե ինչո՞ւ «եվրոպացիք զարմանան, թե Հայք չունին օրինաւոր բանաստեղծութիւնս» և հետևյալ կերպ հիմնավորում հակառակը. «...Այս յորդութիւն, այս *անհուն շեղջ միանշան բառից՝* որով յայտնեն նոքա զգացումն իւրեանց, զորօրինակ՝ զխնդութիւն, զտրտմութիւն, զսէր, զգանազան պատկերս և ներգործութիւնս բնութեան, – այս բարդութիւն բաւական ապացոյց են բանաստեղծական հոգւոյ նոցա» (էջ 177. հիշենք, որ «Վերք»-ի Հառաջաբանում դժգոհում էր վերոնշյալի բացակայությունից՝ «հարիր հազարին» անհասկանալի լինելու հիմունքներով: Ուրեմն՝ կան, բայց օտարված են ու անհասկանալի): Էմիլյա Պարրոտին գրած նամակում Աբովյանը ոչ միայն հիշեցնում է հայոց անցյալում բանաստեղծության և երաժշտության գոյությունը, այլև նրբորեն զուգահեռում է դա ներկայիս եվրոպականին. «Մեր եկեղեցական երաժշտությունն ամենակատարյալն է... Հայրնի, Հենդելի, Վեբերի, Մոցարտի ամենագեղեցիկ երկերը դժվար թե կարողանային իմ աչքերից այնպիսի արցունքներ, իմ հոգու խորքից այնպիսի խոր հառաչանքներ հանել, ինչպես այս պարզ թոթովանքները» (էջ 242):

Հ. Պետերմանին գրած վերոհիշյալ նամակի գերմաներեն շարունակության մեջ ուղղակի հաստատում է այն, թե «որքան առարկաներ, որքան

⁸ Խաչատուր Աբովյան, ԵԼԺ, հ. 10, Եր., 1961, էջ 172:

նյութեր ունի Չայաստանը, որոնք կարող էին բանաստեղծության վերին թռիչք տալ» (էջ 185): Բնական է, որ երկու համազոր քաղաքակրթական ուրակների՝ հայոց օտարված անցյալի և գործող եվրոպական ներկայի խորքային համադրումը պիտի դեռևս Դորպատում մարմնավորեր գործելու ծրագիրն ու նպատակը: 1835-ին Վ. Ա. Ժուկովսկուն գրած գերմաներեն նամակում դա ձևակերպվում է այսպես. «Որոշ չափով հայտնի են իմ *արևելյան* հայրենակիցների՝ հայերի և ուրիշների մտածելակերպը և կյանքը, ուստի բազմակողմանի փորձերով ապացուցված են համարում, որ նրանք ուրիշ ոչ մի այլ միջոցով չեն կարող ամենից լավ և արագ իսկական կրթության և լուսավորության հասնել, քան գեղեցիկ արվեստների՝ *բանաստեղծության, երաժշտության և նկարչության* միջոցով (ընդգծումը հեղինակինն է - Վ.Ա.)... Իմ առաջին և ամենագեղեցիկ ցանկությունն այն եղավ, որ ես աշխատեմ տարածել այդ արվեստներն իմ հայրենի երկրում» (էջ 166):

Ազգի գոյությունն ու զարգացումը հոգևոր-մշակութային գոյահիմքերի մեջ տեսնելը, իսկ հայերի համար դրանք *վերածնելը* դժվարագույն առաքելություն են, և դա հստակ պատկերացնող Աբովյանը հայրենիքում պիտի ապրեր թանձր ու աներևակայելի մղձավանջը: Դորպատից հետդարձի ճանապարհին կարոտի ու բաժանման տվայտանքներով իր մտերիմ, պետական խորհրդական, ակադեմիկոս Խ. Ֆրենին 1836-ի փետրվարին գրում է. «Այժմ, երբ ես համարյա թե իմ թանկագին հայրենիքի կես ճանապարհին եմ... չէի կարծում, իսկապես, թե այսպես կթողնեմ Եվրոպան» (էջ 198), իսկ մեկ ամիս անց Մ. Մսերյանին գրում է, թե երազի նման անցան «աուրք իմ ի մեջ ազնուամիտ գերմանացուց», և թեկուզ իր հայրենակիցներից քչերն են տեսել «գքաղցրութիւն Եւրոպիոյ, որպէս ես», բայց դա այդպես էր, քանի որ «Սէրն առ Չայրենիս պատրաստեաց ինձ զայն չգոյութիւն... Փոքր մի, և լուիցես զձայն իմ ի Չայրենեաց անտի» (էջ 202): Ավա՞ղ, ընդամենը մեկ հնգամյակ հետո այդ ձայնը հնչեց որպես «Ողբ հայրենասիրի»: Երեք տարի անց՝ 1839-ի փետրվարին, Թիֆլիսից նույն Խ. Ֆրենին ահագանգում է արդեն խորտակված պատրանքների դրաման. «Պետք է կրկին արտահայտեմ այն միտքը, որ իմ ճանապարհորդությունը Եվրոպա, եթե միայն աշխարհում չվնասեց իմ թշվառ կյանքին, ապա օգուտ էլ չբերեց» (էջ 213):

Նախապես նշված ներհակությունների եռաշերտ խորհուրդը (անձնական-ազգային-ստեղծագործական) համադրվում է երեք կառուցվածքային բևեռների առաջադրած դրամատիզմով. 1) հայոց անցյալի հոգևոր-մշակութային թռիչքները, 2) որոնք անհասանելի են լեզվի անհաղորդության և այլ աղարտանքների մեջ, 3) ինչը հիմնավորեց, որ ազգի վերածնունդ-լուսավորումը պիտի արվի եվրոպական քաղաքակրթության խոր յուրացվածությամբ, այդ միջավայրի տարբեր շառավիղներով: Նախադրպատյան տաղերին, հայրենանվեր երկարաշունչ գրաբար բանաստեղծություններին պիտի հարազատ մնան և ժանրապատկերային առաջընթաց նշեն դորպատյան գրաբար քերթվածները՝ ապրումի և պատումի ավելի իրական եզրերով, երկու շրջանում էլ իրենց հետ մտերմիկ ու վեհերոտ շշունջի նման բերեն աշխարհաբար երկեր, որոնք հետդորպատյան գրականու-

թյան մեջ պիտի ծրագրված իշխող դառնան, բայց հավասարապես պահպանեն գրաբար գործերը, քանի որ սկզբից մինչև վերջ Աբովյանի համար այս հարուստ և հրաշալիորեն կազմակերպված լեզուն գիտության ու արվեստի հաղորդակցական բարձր հնարավորություններ ունի, գրողի միտքն ու հոգին լավ են զգում այս լեզվի նրբերանգները, բայց նա պիտի հարազատորեն հեռանա գրաբարից (որը նաև եվրոպականի հետ կապի ուժեղ միջոց է)՝ իր բուն ծրագրի ու գործի անձնագրի առաքելությամբ:

Դորպատում հայրենիքի ողբերգության, նրա նկատմամբ կարոտի ու նվիրումի ընկալումները կլասիցիստական արտահայտչաձևերով կարծես միտում ունենին ցուցանելու գրաբարի ճոխությունն ու հախումն թափը («Սեր առ Հայրենիս», «Առ նահատակութիւն Սրբոց Վարդանանց» և այլն), ոճական նույն տիրույթը պահպանվում է էլեգիա-եղերերգություններում: Այստեղ կարելի է նկատել, որ «Սուգ ի վերայ մահուան սիրելոյն իմոյ և ուսուցչի Վալտերի» էլեգիայում զգացմունքը գերմանական նմանաբանությամբ արտահայտվում է զուսպ՝ ապրումն ու կերպարը կրկին բնության հետ ներդաշնակելով: Լուռ գիշերը իրեն մղում է ուսուցչի «տրտմալից դեմքի» հանդիման մորմոքելու՝ վստահանալով նրա երկնային անմահությանը. «Եղիցին առաջնորդ քեզ հրեշտակք //Յայս ուղի անձանօք վերնական, //Յոր երթաս լի լոյսով խնդութեան»⁹: Իսկ «Ողբերգութիւն ի վերայ մահուան բազմերախտ ուսուցչին իմոյ Յարութիւն վարդապետի Ալամդարեանց» էլեգիայում պատկեր-ապրումը ոչ միայն գրաբարյան պերճության ցուցադրանք ունի, այլև ավանդական մղումներով ձգտում է հայրենիքի ճակատագրի հետ բնական համադրումների՝ «Ի կողմանց տարածի՞գ ի վայրաց հայրենեաց //Յնչի հողմն դժնդակ, մոլեխանձ երկրակործան» (էջ 88), ցավն էլ է սուր և արևելյան զգայացունց որակներով՝ «Քայքային իմ կազմուածք, իմ աղիք գալարին, //Մինչ զգամ զայս աղէտ, դառնաթոր զայս հարուած» (էջ 89): Այս առումով խոսում է երրորդ սգերգը՝ գրված հոր մահվան լուրն ստանալու առիթով, որտեղ վերհուշի, ցավի անմիջականությունը բերում է պատկերի պարզություն՝ հայրենի տան ու բնության համադրումներով. երազի թևերով՝

Վերացեալ դառնամ յայն հարկ մեր խաղաղ,
Ուր զիս սիրեցեր, գրկեցեր ջերմին.
Խղճիկ այն խրճիթ, անզարդ այն սրահ,
Երկերդիկ այն տուն, ծխածեփ քարեաց... (էջ 95)

Այստեղ՝ «Եւ ի գիրկս անկեալ ծնողական գթով //Յամբոյր քո կնքեր զիմ քուն քաղցրանիւք» (էջ 97): Էլեգիայի և ներբողի ժանրերի արևմտյան կանոնով բանաստեղծը դիմում է Մուսային. այս պահանջը պահպանվում է դորպատյան և հետդորպատյան գրաբար քերթվածներում: Վարդանանց նվիրված վերոհիշյալ բանաստեղծությունն սկսվում է այսպես.

Շնորհածիր դուստր արդարութեան, չքնաղ Մուզայդ դու նազաբան.
Դու մերձեցո ի սիրտս իմ լոյս զարփին այն ջինջ առաւօտեան... (էջ 135)

⁹ Խաչատուր Աբովյան, ԵԼԺ, հ. 1, էջ 62:

Թիֆլիսյան երկերում Մուսայի հետ տրամախոսությունը վեհ հանդիսավորության մեջ ձեռք է բերում նաև պարզ անմիջականություն: «Աղերս առ Մուսայն» երկի մեջ, տեսնելով ծյունափայլ ամպերի թեթև թևերին Մուսայի «երկնապարիկ թռիչքը», խնդրում է.

Շփեա, իմ Մուսայ, թևովք քո հեզիկ,
Թող՝ ժանդ այս մթեր ամպոց թանձրածիզ
Խռնեսցի ի մի կոհակ, յոյզ մրրիկ... (էջ 211)

Թիֆլիսում, աշխարհաբար երկերի գերակայության շրջանում, Աբովյանը գրաբար բանաստեղծություններում ստեղծագործական վերհուշով միշտ անդրադառնում է դորպատյան ավանդներին, արևելյան նստվածքի մեջ «ասկետանում» եվրոպական մտածողությամբ՝ պահպանելով զգացմունքային անկաշկանդ պոռթկումների իր խառնվածքը, ինչը տեսնում ենք «Մտածունք ի տեսիլ Չայրենեաց», «Մուտ ի Չայրենիս», «Կարօտութիւն առ սիրելին», «Յունայնութիւն աշխարհի», «Առաջի պատկերի բազմերախտ իմ բարերարի՝ Ֆրիդրիխայ Պարրօտի» տարամոտիվ երկերի մեջ՝ հայրենիք – սեր – խոհ – ուսուցիչ: Ուսուցչին ձոնած էլեգիա-ներբողում, իր համար լույսի աղբյուր ու սփոփանք գտնելով նրա կերպարում, «Արամեանց կրթութեան սատար» լինելու մեր գործին արժանի հատուցում է փնտրում. «Զի՞նչ այլ նոր արձան կանգնեսցին քեզ աստ, //Քան մեր Արարատ՝ վեհ և ամպասաստ» (էջ 238): Այս և այլ մեծ նվիրումների մեջ անխուսափելի է դիմումը Մուսային.

Ջարթիր, իմ Մուսայ, ի տես Չայրենեաց.
Ջարթիր ի բուրումն խնկածին դաշտաց,
Եւ զքոյդ դաշնակել օրհնաբան նուազ
Ի դէմս սրբազան Չայրենեաց վայրաց: (էջ 242)

Ժանրի և ոճի եվրոպական խորքային չափավորություն, որը բացասելու էր, հետո նաև համադրելու արևելյան զարդանախշ զգացմունքայնությանը, նկատելի է սիրո երգ-ներբողների ռոմանսային արտահայտչաձևերում: Բոլոր կապերի մեջ մաքուր, ներքին հզոր պոռթկումների տեր և ունակ երիտասարդը այստեղ ևս Չայրց անցյալի քաղաքակրթությանը բնորոշ՝ կնոջը վերապահված անխորշոմ ազատությանը¹⁰ փոխարինած պիտի տեսներ երեսփակ խոնարհությունը, անկամ ենթարկվածությունը: Եվ ինչպես լայն մշակութային հարաբերություններում, այստեղ ևս եվրոպական վիճակների բերած բացասման բացասումը պիտի մղեր արևմտյան նոր և հայկական հին քաղաքակրթական որակների համադրման՝ ոճի մեջ երկուսի բնորոշ տարրեր պահպանելով, շաղախելով բնապատկերի նույն զգացողությանը: Բնության պերճաբան ընկալումով սկսվող՝ «Պռնկնտեալ ամոք արև մայիս զաչս իւր ծիծաղկոտ» երգի մեջ եվրոպական մի-

¹⁰ Չիչենք «Սասնա ծռեր» էպոսը, ժողովրդական խաղիկները, միջնադարի տաղերգուներին, որոնք, ցավոք, տպագիր գոյություն չէին ստացել Աբովյանի ժամանակ, և նա ժառանգել էր որպես ծագումնաբանական բառամտածողություն և վիճակ:

ջավայր է ներկայացվում հաջորդ պատկերով, երբ զբոսայգում «զբոլոր ուշ իմ անկենդան» գրավում է ծիծաղկոտ պահը.

Անդ ի մէջ թփոց, ի ներքոյ ուռեաց ինձ ակն յանդիման
Օրիորդք երեք կայտռին ոսոտսմամբ ի միայնութեան: (էջ 77)

Կինը երևում ու գրավում է նվագի, պարի, զբոսանքի բնական ազատ վիճակներում, իսկ բանաստեղծի զգացմունքը պատկերի խորքային ասկետիզմին ներդաշնակում է նաև արևելյան գունագեղությունը: «Օրիորդ ֆոն Շվեբս ի վերայ երգեհոնի» բանաստեղծության մեջ նվագով ու հմայքով զմայլված՝ տենչում է «Համբուրել զշրթունս քո մեղրածորան», և իսկույն զգացմունքը չափավորում է ասպետական էթիկետով.

Չմատունս շարժես
Քո նուրբ, ոսկեծոյլ,
Ինձ շիջուցանես
Չսրտիս նշոյլ:
Ոհ, մի հարկաներ զքո նուագարան
Սինչ իմ հարուածոց ոչ տաս ինձ դարման: (էջ 72)

Չքնաղ վերջալույս է, գիշերվա աստղերը կարծես բոլորում են օրիորդին, և նրա այտերի շառավիղից խավարն է ընկնում, իսկ հայացքից՝ «ես նուաղին», ուստի տենչում է, որ իր տխուր երեսին «Թևովք քո մեղմիկ //Բերել զեղեմայ շունչ կենդանարար» (էջ 73). պատրաստ է ամեն մի հարվածի ու տառապանքի և վստահ է, որ նրա սիրով անդունդից էլ իր համար լույս կելնի: Արևելյան ոճի սիրերգերում այդ տառապանքը հասցնում է մահվան, ցավի արտահայտության ձև են ստանում «ախ, ոխ» բացականչությունները. լույսն է բացվում, իսկ իր սիրտը մթնած է, աշխարհը խնդում է, իսկ ինքը լալիս է ու սգում՝ «Ա՛խ, ո՛խ ես քաշելով՝ հոգիս մաշվեցաւ» (էջ 107), այդ կսկիծից հողը կմտնի, ոչինչ, միայն թե նա գա և «սուրբ ոտով» շրջի գերեզմանի վրա:

Աբովյանի դորպատյան կյանքի ռոմանտիկ ու կրքոտ միջավայրում եղել են կանայք՝ Պարրոտի քենին՝ Յուլիե Կրաուզեն, Ադելինա Էրդմանը, Յուլիա Դորոթեա Սոկոլովսկայան, Աննա Ֆրիդլենդերը, օրիորդ ֆոն Շվեբսը, Շառլոտե Շուլցը, Էմմա Կայը: Սանավանդ վերջինիս նկատմամբ բուռն է եղել երիտասարդ արևելցու զգացմունքը, իսկ բոլոր այդ կապերի շնորհիվ հայ գրականությունն է բերվել եվրոպական պոեզիայում տարածում գտած ներքող-ռոմանսի տեսակը՝ «Առ Էմ. Կ.», «Առ Ն. Ն.» հղում-վերտառություններով: Առաջինում նորահաս զգացմունքը երևում է պերճաբան ձևերի մեջ.

Շարժեայ զմատունս քո ոսկեծոյլ,
Անբիծ կուսան երկնածնունդս...
Հան ի ներքին խորոց սրտիս
Ձերկնակարօտ իմ ցանկութիւն: (էջ 111)

Նույն անձին ձոնված երկրորդ «Առ Էմ. Կ.»-ում մտերմությունը բերում

է անմիջական ու պարզ ապրում –պատկեր, որտեղ նաև ցավն է՝ հայրենիքին ծառայելու կոչումից իր այս մեծ սիրուն հասնելու անհնարինության պատճառով, և ապրված ու անկեղծ են բոլոր պահերը, հոգեբանական վիճակները.

Հոգւոյս հրեշտակ, քաղցր իմ *էմմայ*,
Տեսի՞ց զքեզ այլևս յոյժ *կայ*,
Թէ մտից ի հող, կարօտ քո տեսւեան...
Սէրն հայրենեաց ընդ սիրոյ սրտի
Անհաշտ մոլութեամբ բուռն հարեալ միմեանց...
Սիրտս սիրելւոյդ, կեանքս հայրենւոյ: (էջ 113)

Ուրեմն՝ գերեզմանն էլ ոչ թե, ինչպես վերևում էր, ընդամենը այցի գալու պահանջ ունի, այլ որոշակիացնում է «սիրտը սիրուն» և «կյանքը հայրենիքին» հակադրության հոգեբանական դրաման: Սիրո պոռթկումները՝ պերճաբան թե պարզ, բերում են պատկերային խորքեր, ինչպես «Առ Ն. Ն.» ներբողում է, ուր կնոջը «գովաբան» իր սրտի լարերը կտրվեցին նրա ձեռքերով, մինչդեռ ինքը հավատում էր, որ նա «գթոտ ու ջերմին կյանքի» արեգակ կլինի, և ինքը կշնչի նրա «ազդու և բարերար լույսը», և ինչքան էլ հեռանա, կամ հեռացնեն, «ես քո մոլորակ... Սիրով քով ձգեալ զգայարանք և միտքս» (էջ 114): Տեսնում ենք ձևի ու բովանդակության առումով եվրոպական նոր բանաստեղծական որակ, որի ուսումնառության գործուն դպրոցը եղել են Շիլլերը (նրան համարում է «հոգուս պահապան», «իմ առաջնորդ»), Գյոթեն, Զերդերը գերմանական գրականությունից, ֆրանսիականից՝ Ռուսսոն, անգլիականից՝ Շեքսպիրը, Ռոբերտ Բյորնսը, Վալտեր Սկոտը և ուրիշներ, ռուսներից՝ Կարամզինը, Ժուկովսկին, Լոմոնոսովը, Դերժավինը (Պուշկինը արգելված էր): Աբովյանը ուսումնառության հենց սկզբից լեզուն սովորելու համար արտագրում, հետո նաև մշակութային կապերի՝ ազգային առաջընթաց որոշող դերի գիտակցությամբ թարգմանում էր այդ հեղինակների շատ գործեր. «Երկու հարյուրից անցնում են գերման և մյուս ազգերի գրողների այն քերթվածները, որոնք Աբովյանը արտագրել է ուսանողական տետրակներում, թարգմանել հայերեն կամ ընթերցել»¹¹: Ջուստ ազգային հոգսը հասնում է համամարդկային խոհի, և կարևոր է, որ եվրոպացիներին ապացուցելու համար, թե հայերն էլ բարձր արվեստ ու բանաստեղծություն են ստեղծել, «Աբովյանը նորից մատնանշում է գրաբար լեզուն» (էջ 635), որի հարստությունն ու ճկունությունը, ինչպես վերևում տեսանք, ըստ Աբովյանի՝ խոհական ու քնարական խոր դրսևորումների ապացույց են:

Աշխարհաբար գործերը ունեին այս ճշմարտությունը իրեն իսկ ժողովրդին հասցնելու և հասկացնելու պարզ ու հեռանկարային մտահոգություն: Կային խավարն ու աղարտանքը, և մեծ առաքելության համար եթե հարկ է, ինքը պիտի իջներ, որպեսզի բարձրացներ: Դեռևս Դորպատում և մինչ այդ նա գրում է աշխարհաբար գործեր, որոնք մի յուրօրինակ միջակա օղակ էին, այսպես կոչված, գրական և բարբառային աշխարհաբարներ:

¹¹ Պ. Յ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 634:

րի միջև: Նրանցից՝ «Ջանունս ջան չի մնաց» երգի բարբառաշունչ պատկերներում («Վարդի պես դուս ես եկել, հովն տալիս բաց ես ըլում, //Երկնքին ցողն երեսիդ, շաղակոլոլ թաց ես ըլում, //Չորս կուռդ գիշեր ցերեկ միշտ փշով պատած ես ըլում»)՝¹² և «Ականջ արա, նագանի, քո թարիֆն իմացիր» տաղի գրականացված արտահայտչաձևի մեջ («Շատ օր ու ժամանակ քո կարոտն քաշեցի, //Գիշեր, ցերեկ հանապազ զիս քո սիրովն մաշեցի», էջ 87), խորհրդավոր կերպով զգացվում է Սայաթ-Նովայի շունչը, և շատ հնարավոր է, որ մեծ աշուղ-բանաստեղծի մահից քառորդ դար հետո Թիֆլիսում Աբովյանը լսած լիներ նրա խաղերը:

Այսպիսի խոսուն համադրումներ կան նաև հետդորպատյան շրջանի շատ գործերում: 1837-ի փետրվարին Թիֆլիսում գրած «Սուգ հարազատ և ծնողատեր որդուց ի վերայ հանգուցեալ մօրն» էլեգիան դրա վկայությունն է.

Արյուն, արտասունք թափին իմ հաչաց,
Կրակն է ընկնում հոգիս ու մարմինս...
Միթե լա՞վ է հողն, որ հանգստանաս,
Քան զտուն ու տեղն, որ դու շինեցիր.
Միթե հա՞յր, որդի, քո զավակաց դաս
Այդքան դու շուտով մտքիցդ հանեցիր: (էջ 142)

Նույն ոճը, գրաբարի կամ բարբառի որոշ գերակայությամբ, տեսանելի է «Կարօտութիւն ծնողաց առ հեռաւոր որդիս» գործի («Էրնեկ կտամ են սիւթին, որ դու գաս բարով. //Աստված քեզ հետ ըլի, հոգույս սիրելի», էջ 144), նաև «Աղասու սրտի տխրությունը», «Աղասու սրտի փափագը» (որն ունի «Աշըղ Ղարիբի հանգով» հուշումը) և այլ երկերի մեջ: Եռաբևեռ հակադրամիասնության՝ անցյալի բարձր մշակույթ գրաբարով – նոր եվրոպական քաղաքակրթություն – նրանց համադրությամբ ազգին խավարից հանելու ծրագիր, ինքնատիպ խորհուրդներից մեկն այն է, որ բանաստեղծական գործերում, նոր գրականության հիմնաքար «Վերք Յայաստանի» վեպում, նաև նամակներում ու հոդվածներում Աբովյանը գրաբարն ու աշխարհաբարը երբեմն փոխատեղում է, դնում կողք կողքի, զրվածքը սկսում մեկով, ավարտում մյուսով, ինչպես որ դա անում է գրաբար և գերմաներեն նամակներում ու հոդվածներում՝ հաջորդափոխելով այդ լեզուները: Նա այս համադրությամբ է տեսնում լուսավորական գործի իրական ընթացքը՝ որքան էլ պարտադրված լինի երբեմն կարևոր տեղ տալ բարբառին և նրա հետ եկած օտար, մանավանդ թուրքերեն տարրին, ինչպես քաղաքակրթական երկու համագոր որակներով լուրջ բանաստեղծություն էր դարձնում բայաթին: Դա, ինչպես տեսանք, անձնական ու ստեղծագործական տվայտալից ճանապարհ է: Այս հարաբերությունների մեջ բնորոշ դիտարկում է այն, որ Աբովյանը «մինչև վերջ էլ մնաց այն համոզմանը, թե աշխարհաբարով ժողովրդին լուսավորելուց հետո, այնուամենայնիվ, պետք է վերադառնալ նորից գրաբարին»¹³: Այսպիսի հստակ մտայնություն ձևավորվել էր Դորպատում, իսկ հետագայում՝ Թիֆլիսում ու Երևանում իր ծրագրերի ի-

¹² **Խաչատուր Աբովյան**, ԵԼԺ, հ. 1, էջ 86:

¹³ **Պ. Յ. Յակոբյան**, նշվ. աշխ., էջ 638:

րագործման դրամատիկ ճանապարհին, ուր պիտի ավելանային սպասելի ու անսպասելի խուժ ու խորշերը, թվում է՝ պետք է վերանայվեին ինչ-ինչ քայլեր, խավարի միջավայրը անընդհատ պարտադրեր իրենը: Բայց, միևնույնն է, եռամիասնական համադրությունը՝ որպես մեծ ծրագրի ու գործի բուն էություն, պետք է մնար ու մնաց անխախտ, քանի որ շատ հիմնավոր էր կայունացված: Եվ ուրեմն՝ գրաբարն ու նրանով ստեղծված մշակույթը պիտի դառնային երկու բևեռների շարժիչ կապը՝ եվրոպականով նախկինը՝ հայկականը վերհառնել տալու նպատակների մեջ:

Բանալի բառեր – *դորպատյան շրջան, ներբողներ, արևելյան շեշտադրումներ, գրաբար քերթվածք, լուսավորականություն*

ВАЗГЕН САФАРЯН – У истоков поэзии Абовяна. – В стихотворениях Абовяна, написанных на габаре до обучения в Дерптском университете, сохраняются признаки, присущие жанрам средневековой поэзии. В студенческие годы в стихах на габаре появляются элементы, возникшие под влиянием европейской поэзии. Поставив перед собой цель сделать литературу понятной народу, Абовян старается писать на живом языке – ашхарабаре. Что касается жанра, то западные элегии и оды соединяются в его творчестве с восточными «баяти». Но Абовян продолжает пользоваться и габаром, потому что этот богатый, великолепно обработанный литературный язык оставался звеном, в котором сходились высокая литературная культура, свойственная в прошлом армянскому народу, и родственная ей культура современной Абовяну европейской поэзии.

Ключевые слова: *дерптский период, оды, восточные акценты, сочинения на габаре, просветительство*

VAZGEN SAFARYAN – At the Origins of Abovian's Poetry. – Khachatur Abovian preserved the medieval peculiarities of the genre in the classical (Old Armenian) poems prior to the Dorpat years. The classical poems at the Dorpat years contained visual elements of European poetry.

The aim of being comprehensible to people led the writer to simple and coherent representations. Western elegy and ode are combined with eastern ‘bayati’ (sorrowful music). Even though the classical works continued to be composed, the refined and rich Old Armenian referred as literary language, remained the liaison between Armenian high cultural past and European analogous present for Abovian.

Key words: *the Dorpat period, odes, Eastern accentuation, works in Grabar, enlightenment*

**ԲԱՌԻ ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄԸ
ՀՈՎՅ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՌՅԱԿՆԵՐՈՒՄ**

ԱՍՏՂԻԿ ԲԵՔՄԵՁՅԱԼ

Հովհ. Թումանյանը այն բացառիկ հայ հեղինակն է, որի գրական, հրապարակախոսական, քննադատական ժառանգությունը ենթարկվել է բազմաշերտ և բազմակողմանի վերլուծության, ուսումնասիրվել են նրա արտահայտած գրեթե բոլոր մտքերը, կարծիքները, հղումները: Առանձին հետազոտությունների նյութ են դարձել նրա գեղարվեստական արձակի և չափածոյի հնարավոր և ենթադրելի առանձնահատկությունները՝ ժանրային բնութագրականներով, կերպարային, քնարական հերոսի, թեմատիկ ընդգրկման հատկանիշներով, գեղարվեստական ճանաչողության, արտացոլման սկզբունքների մեկնաբանության տեսանկյունից, լեզվական, ոճական և ստեղծագործական աշխատանքի յուրահատկությունների վերհանման գիտական իմաստավորմամբ¹:

Գրականագիտական հետազոտությունների բազմաքանակության մեջ պատկառելի թիվ են կազմում անդրադարձները բանաստեղծի քառյակներին. ուսումնասիրվել են դրանց թեմատիկական, քնարական հերոսը, տաղաչափությունը, լեզուն, ոճը, քառյակաշարը որպես քնարական պոեմ և այլն: Ինչպես նշում է Լ. Հախվերդյանը. «Քառյակները Թումանյանի հոգու խոստովանությունն են, նրա մտածումներին խտացումն ու բյուրեղացումը: Ու եթե հոռետեսականն այս բանաստեղծական համակարգում առանձին շերտերն են, ապա ամբողջ համակարգը կեցության փառաբանումն է, կյանքի հիմն – ռեքվիեմը, որ բանաստեղծը հնչեցրել է անհունին ձուլվելուց առաջ»²: Գնահատելով բանաստեղծի ստեղծագործության այս ոլորտը՝ Ռ. Իշխանյանը գրում է. «Թումանյանի քառյակների... բովանդակության հիմքում ընկած է համընդհանուր սիրո զգացողությունն ու գաղափարը, որ ծնունդ է բանաստեղծի կենսափորձի, ինչպես և իր խոսքերով ասած՝ «Տիեզերքի խոր մեղեդին ու մրմունջը» լսելուն, «Աստեղային երազների աշխարհքներում» և «Մեծ խոհերի խոյանքների հեռուներում» հոգե-

¹ Այս առումով տես Լ. Հախվերդյան, Թումանյանի աշխարհը, Եր., 1966, **Նույնի՝** Թումանյանը և իր ժամանակը, Եր., 2000, **Ա. Ինձիկյան**, Հովհ. Թումանյան, Եր., 1969, **Զ. Ավետիսյան**, Թումանյանի ստեղծագործական լաբորատորիան, Եր., 1973, **Ռ. Իշխանյան**, Թումանյանի քառյակների լեզվական և տաղաչափական առանձնահատկությունները, Եր., 1976, **Էդ. Զրբաշյան**, Պոետիկայի հարցեր, Եր., 1976, **Նույնի՝** Չորս գագաթ, Եր., 1982, **Նույնի՝** Թումանյանի գրական ժառանգությունը, Եր., 2000, **Ա. Եղիազարյան**, Թումանյանի պոետիկան և նրա ժողովրդական ակունքները, Եր., 1990, **Հր. Թամրազյան**, Հովհաննես Թումանյան. բանաստեղծը և մտածողը, Եր., 1995, **Մ. Գ. Սանթրոյան**, **Ռ. Ս. Թումանյան**, Հովհաննես Թումանյան. պոետիկայի հարցեր, Եր., 2002, **Ս. Մելքոնյան**, Թումանյանի հոգու կենսագրությունը, Գյումրի, 2004, **Ա. Սարուխանյան**, Հովհաննես Թումանյանը և հայոց հնախոսությունը, Վանաձոր, 2006 և բազմաթիվ այլ գրքեր ու հոդվածներ:

² Լ. Հախվերդյան, Թումանյանի աշխարհը, Եր., 1966, էջ 493:

պես սուզվելուն, որը և «Վեհացրել և վերացրել է» բանաստեղծի հոգին, դարձրել «անհաղորդ» «երկրի փառքին» և երկրային այլ անցողիկ տենչերին, կանգնեցրել նրան՝ զայրույթը սիրով հաղթահարելու, չարը բարի ժպիտով դիմագրավելու, իրեն դավողին ու նենգողին ներելու ու սիրելու ճանապարհին»³: «Իրենց կենսական և փիլիսոփայական բացառիկ հարստությամբ, գեղարվեստական անթերի կատարելությամբ քառյակները թունանյանի բանաստեղծական հանճարի ամենաբարձր դրսևորումներից են: Ամբողջ հայ գրականության համապատկերում դժվար է ցույց տալ փոքր ձևի մեջ անպարփակորեն մեծ բովանդակություն արտահայտելու ավելի փայլուն օրինակ»⁴, - ընդհանրացնում է Էդ. Ջրբաշյանը:

Քառյակների վերլուծությունների առումով, կարծում ենք, ուշագրավ է նաև այս ժանրում Յովհ. Թումանյանի վերաբերմունքը բառի ընտրությանը, մշակմանը և իմաստավորմանը: Ինչպես նշում է Յու. Լոտմանը, բանաստեղծական տեքստը լեզուների ստորակարգության իրականացում է՝ տվյալ ազգային լեզուն, դարաշրջանի գրականության լեզուն, ստեղծագործողի լեզուն, պոետական շարքի լեզուն՝ իբրև ամբողջական համակարգ, առանձին բանաստեղծության լեզուն՝ որպես ինքնապարփակ ստեղծագործական աշխարհ, ընդ որում՝ յուրաքանչյուր ստեղծագործության համակարգում այս ստորակարգությունը տեքստային կայացման տարբեր աստիճաններ կարող է ընդգրկել՝ կոնկրետ համակարգային առանձնահատկություններից ելնելով: Իսկ լեզվական համակարգի մեջ առաջնային արժեք է բառը՝ թե՛ որպես հաղորդակցման գործառույթի հիմնական կրող և թե՛ որպես գեղարվեստական-պատկերավոր մտածողության կրիչ-մշակ⁵: Մի առիթով ինքը՝ Յովհ. Թումանյանը, ընդհանրացնում է, թե բանաստեղծի համար մի բառը մի աշխարհ է, և այս միտքը մերկապարանոց հայտարարություն չէ՝ պատեհ իրավիճակում ձևակերպված. իր ստեղծագործական կյանքի ողջ ընթացքում համարյա բոլոր ստեղծագործություններում էլ նա նախանձախնդիր է եղել գրված կամ գրվելիք յուրաքանչյուր արտահայտության, ամեն մի բառի նկատմամբ: Այս առումով եզակի հետաքրքրություն են ներկայացնում հեղինակի քառյակները ևս: Այն, որ «Անուշ»-ը, «Լոռեցի Սաքուն» և այլ ստեղծագործություններ ունեն մի շարք տարբերակներ, հեղինակը փոփոխություններ է կատարել կերպարային, ոճական, լեզվական հարցադրումներում, բնական և տրամաբանական է, սակայն ընդգծվածորեն միմիմալիստական այնպիսի մի ժանրում, ինչպիսին քառյակն է, կարող է թվալ, թե ինչ փոփոխության և վերամշակման մասին կարող է խոսք լինել:

Թումանյանական քառյակների և դրանց տարբերակների զուգարդումն ու ուսումնասիրությունը վեր են հանում մի ուշագրավ օրինաչափություն⁶. այս շատ կարճ և առաջին հայացքից ինքնաբուխ ու մեկ շնչով

³ **Ռ. Իշխանյան**, Թումանյանի քառյակների լեզվական և տաղաչափական առանձնահատկությունները, «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 1976, հ. 2, էջ 113:

⁴ **Էդ. Ջրբաշյան**, Թումանյանի գրական ժառանգությունը, Եր., 2000, էջ 68:

⁵ Տե՛ս **Лотман Ю. М.** Анализ поэтического текста. Л., 1972, էջ 85-89 // «Структура художественного текста». М., 1970, էջ 203-219:

⁶ Քառյակների և դրանց տարբերակների բոլոր մեջբերումներն ու հղումները՝ **Յովհաննես Թումանյան**, ԵԼԺ, տասը հատորով, հ. 2, Եր., 1990, էջ 7-64, 331-348:

գրված չորսական տողերը բանաստեղծի հետևողական ստեղծագործական աշխատանքի, տվյալտանքների և տքնանքի արդյունք են, որտեղ որևէ բառ, անգամ օժանդակ բայ իր տեղում տեսնելու հեռանկարով հեղինակը ոչ թե մեկ, այլ մի քանի տարբերակներ է ստեղծել, համադրել, փորձարկել և ի վերջո գրի առել վերջնական տարբերակը: Այլ կերպ ասած՝ բանաստեղծը քառյակները երկնելիս ծայրահեղ պատասխանատվությամբ է մոտեցել իր աշխատանքին՝ գիտակցելով յուրաքանչյուր մտքի, յուրաքանչյուր բառի ճակատագրական արժեքը այս ստեղծագործությունների մեջ: Իրավացի է գրականագետը. «Բառի միտք ու զգացմունք մատուցելու կարողությունը... դրսևորվում է միայն հեղինակային տողի ընդհանուր կոնտեքստում, այլ բառերի ֆունկցիոնալ համագործակցության մեջ»⁷: Մյուս հետաքրքրություն առաջացնող փաստն այն է, որ մշակումների ենթարկվել են ոչ բոլոր քառյակները, ընդ որում՝ 58 համեմատված քառյակներից տարբերակներ չունեն միայն 14-ը, որոնք հիմնականում գրվել են բանաստեղծի ստեղծագործական կյանքի առաջին շրջանում, իսկ 1920-ականներին գրվածներն ունեն ոչ թե մեկ կամ երկու, այլ մի շարք տարբերակներ, մշակումներ, զուգահեռ հնարավոր և հավանական ձևեր:

1890 թ. գրված երկու քառյակներն էլ տարբերակներ չունեն: Արդեն 1916 թ. երեք քառյակները գոնե մեկ բառի կամ տողի այլընթերցումներ են մեջտեղ բերում: 1917 թ. 13 քառյակներից 6-ը չունեն տարբերակներ, 1918 թ. 10 քառյակներից՝ 4-ը, իսկ 1919 թ. 7 քառյակն էլ ունեն տարբերակներ, 1920 թ. 5-ից 2-ը չունեն մշակումներ, իսկ արդեն 1921 -1922 թթ. գրված 18 քառյակներն էլ ունեն բավականին շատ և տարաբնույթ մշակումներ, տարբերակներ: Մշակում ունեցող առաջին իսկ քառյակում («Հիմի բացե՛լ են հանդես») ի հայտ է գալիս բանաստեղծի՝ բառիմաստի ուշագրավ զգացողությունը. վերջին տողը նախ ունեցել է երկու տարբերակ.

Ո՞վ է արդյոք լըսում ձեզ:

Ո՞վ է լըսում արդյոք ձեզ...

Վերջնական տարբերակում՝

Ո՞վ է լըսում հիմի ձեզ:

«Արդյոք»-ը՝ որպես հռետորական հարցի սաստկացման նրբերանգ պարունակող բառ, անհամեմատ կիրթ է, բարեհունչ է, քան «հիմի»-ն. պատահական չէ, որ Թումանյանը այն նախ բայից՝ գործողությունից առաջ է դնում, սակայն հետո ավելի կարևորում է ենթակայի և ստորոգյալի միասնական ընկալումը և «արդյոք»-ը հետ է տանում: Այնուամենայնիվ, սա էլ չի զոհացնում նրան, և ընտրում է «հիմի» տարբերակը՝ առաջին հայացքից պարզ կրկնություն կատարելով տեքստում.

Հիմի բացե՛լ են հանդես

Երգիչները իմ անտես.

Ջա՛ն, հայրենի ծրղրիդներ,

Ո՞վ է լսում հիմի ձեզ:

⁷ **Ձ. Ավետիսյան**, Թումանյանի ստեղծագործական լաբորատորիան, Եր., 1973, էջ 100:

Սակայն եթե ենթատեքստային շեշտադրումները կարևորենք, ի հայտ է գալիս մի ուշագրավ առանձնահատկություն. երբ ստեղծագործությունը սկսվում և վերջանում է նույն բառով՝ «հիմի», ընկալման մեջ առաջնային արժեք է ձեռք բերում կարոտի և կորցրած երանության այն իրավիճակը, որտեղ ծղրիդները անտես երգիչներ են և հանդես են բացում. ահա «հիմի»-ի կրկնության վերափնաստավորումը, երբ այն նույն տեղում դարձյալ կան երգիչները, կա հանդեսը, սակայն այդ նույն ներկայում («հիմի») ո՞վ է լսում նրանց: ... Այս համատեքստում «արդյոք»-ը ինքնաբերաբար ենթադրվում է, և տեքստային առումով մեկ անգամ ևս բառն օգտագործելը անշուշտ ավելորդ է: Թվում է՝ աննշան փոփոխություն է, բայց՝ որքա՞ն ըստ էության և իմաստակիր:

Ղետագայում բանաստեղծը շատ ավելի նախանձախնդիր է դառնում քառյակի մեջ բառի կամ ցանկացած ձևաբանական, շարահյուսական կառույցի թե՛ դիրքի, թե՛ իմաստի և թե՛ ենթիմաստի բացահայտման հարցում:

Ուշագրավ է հաջորդ քառյակի բարոյահոգեբանական դաշտի հաղթահարումը տարբերակային բացառիկ շատ այլաձևությունների պայմաններում.

Ե՛տ չեկա՛վ...
Գընա՛ց, գընա՛ց, ետ չեկավ,
Անկուշտ մահին, սև հողին
Գերի մընաց, ե՛տ չեկավ:

Պարզ է, թեման խիստ անձնական է, հոգեբանորեն անընկալելի, սակայն գեղարվեստական վերափնաստավորման մեջ ինչ-որ մխիթարություն, սփոփանք փնտրելու և գտնելու ողջ տառապանքը ի հայտ է գալիս տարբերակների ձևավորման գործընթացում: Նախ. որպես հիմնական իմաստակիր՝ երրորդ տողը մինչև վերջնական տարբերակը ունեցել է հետևյալ հինգ ձևակերպումները.

ա. Ո՛ր աշխարհքում, ինչ կապով:
բ. Անդարձ կապով սև հողում:
գ. Անդարձ կապով սև հողին:
դ. Լավ աշխարհքում լույս կապով:
ե. Անկուշտ հողին, սև հողին:

Վերջնական տարբերակը՝

Անկուշտ մահին, սև հողին:

Այստեղ նախ կարևոր է «կապ» բառի ենթատեքստային իմաստավորումը. բոլոր տարբերակներում (ոչ վերջնական) հեղինակը փորձում է այս բառն օգտագործել, բայց բառը չի տեղավորվում տեքստի մեջ, չի համակերպվում իմաստային համակարգի հետ, որովհետև բանաստեղծը մեծ ցանկություն ունի այս ողբերգական իրադրության մեջ «կապը»՝ տրամա-

բանությունը գտնել, ինչ-որ պատճառահետևանքային հիմնավորում հայտնաբերել, որ չկա. որևէ ձևով, որևէ կերպ որևէ արդարացում այդ «անկապ» պարագան չունի, և բանաստեղծը ի վերջո հրաժարվում է նաև բառից. մնում է միայն *անկուշտ* և *սև հողը*, բայց այստեղ էլ հողի կրկնակի բացասականությունը (*անկուշտ* և *սև*) չի արդարացվում և թուլացնում է զգացողությունը. մտքի ներդաշնակությունը կայանում է, երբ մահն է դառնում *անկուշտ*, իսկ հողն էլ մնում է լոկ սև: Հոգեբանական բացառիկ մեծ ինքնահաղթահարում է ապրում հեղինակը՝ բուն ճշմարտությունը գեղարվեստորեն ձևակերպելու համար. ահավասիկ զուտ մարդկային տառապանքի և բանաստեղծական ստեղծագործ մտքի աշխատանքային տքնանքի դասական օրինակ: Սակայն այս քառյակի վերջնական կայացման համար սա դեռ ամենը չէ. դեռ պետք է «հաղթահարվի» նաև չորրորդ տողը: Կա երեք տարբերակ.

- ա. *Կապվեց մընաց, ետ չեկավ:*
- բ. *Կապված մընաց, ետ չեկավ:*
- գ. *Գերվեց մընաց, ետ չեկավ:*

Վերջնական տարբերակը՝

Գերի մընաց, ե՛տ չեկավ:

Նորից նույն բառը՝ այս դեպքում ոչ գոյականական, այլ բայական ընկալմամբ (կապվեց, կապված). սա արդեն այլ իմաստային կառույց է՝ ոչ թե կապի, տրամաբանության փնտրտուքն է, այլ բռնվածության, բուն անելանելիության գիտակցության ընդունումը. պատահական չէ, որ բանաստեղծը սրանով չի բավարարվում, «գերվեց»-ը դարձնում է «գերի»՝ վերջնականություն հաղորդելով իրադրությանը: Բայական կառույցի պարագայում պրոցես նշանակող բառը՝ «գերվեց», մշտականություն, ավարտվածություն չի ենթադրում, իսկ «գերի մնաց» ձևակերպումը հետադարձ ընթացքը բացառում է ասես, ընդգծում է անելանելիության զգացողությունը: Այս քառյակում արժե անդրադառնալ նաև բացականչության կիրառման ձևին. մշակման տարբերակներում ընդամենը մեկ անգամ է հեղինակը բացականչում, սակայն վերջնական տեքստում՝ չորս անգամ՝ ետ չեկավ, գնա՛ց, գնա՛ց, ե՛տ չեկավ: Հետագա քառյակներում բացականչական նշան հեղինակը համարյա չի էլ օգտագործում, իսկ 1916 թ. քառյակները պարզապես գերհազեցած են դրանցով՝ «Ո՛ւր կորա՛ն...», «Վերջացավ...», «Հիմի բացե՛լ են հանդես»:

Այդ թվականի քառյակներում մի ուշագրավ երևույթ էլ է առկա. նույն միտքը «թափառում» է քառյակից քառյակ, սակայն վերջնական տարբերակներում հեղինակը հրաժարվում է դրանից: Օրինակ՝ «Ո՛ւր կորա՛ն...» քառյակի մշակումներում դարձյալ հանդիպում ենք «Անկուշտ մահին ու հողին» կառույցին, որը վերջնական տարբերակում արդարացիորեն բացակայում է՝ ավելորդ անգամ չծանրաբեռնելով մտքի ողբերգական երանգը:

Ուշագրավ մշակման է ենթարկվել «Քանի՞ մահ կա իմ սրբտուն» քառյակը. այստեղ նախ «ինչքան»-ը դարձել է «քանի», «անցավոր, անքուն» բառերը փոխարինվել են «մահացու, մահի ահ» ձևերով, և այս ամբողջը ստեղծել է բաղաձայնությային յուրահատուկ շերտ, որի մեջ «հ»-ն որոշակի հագագային կենտրոնացում է առաջացնում.

*Քանի՞ մահ կա իմ սրբտուն,
Թափուր գահ կա իմ սրբտուն.
Չէ՞ դու էլ ես մահացու.–
Մահի ահ կա իմ սրբտուն:*

«Հին աշխարհքը ամեն օր» քառյակում էլ հեղինակը ասես չի կողմնորոշվում հատկապես երկու բառերի իմաստների համակեցության առումով՝ «ամեն նոր, գալիս նոր, նորից նոր» և «կըրկընվում», թե՞ «ըսկըսվում», ի վերջո քառյակը հղկվում է և դառնում.

*Հին աշխարհքը ամեն օր
Հազար մարդ է մըտնում նոր,
Հազար տարվան փորձն ու գործ
Ըսկըսվում է ամեն օր:*

Կան քառյակներ, որոնցում հեղինակը ընդամենը մեկ, սակայն համատեքստի համար բախտորոշ փոփոխություն է կատարում (օր.՝ *Ամենքի հետ տառապում-ը* դառնում է *Ամենքի չափ տառապում*, կամ՝ *Ո՞նց էր միսը իմ ծագի-նը* դառնում է *Ո՞նց էր համը իմ ծագի...*, *Հե՛յ, հայրենի անտառներ-ը՝ Ձա՛ն, հայրենի անտառներ, Երբ տի ապրես ու վայելես էս աշխարհքը* (սրտալի)-ն՝ *Ե՞րբ տի ապրես ու վայելես էս աշխարհքը շեն ու լի, Աստված ինքն էլ (մոլորվել է), չի հասկանում ինչ անի-ն՝ Աստված ինքն էլ, տարակուսած, չի հասկանում ինչ անի, Տիեզերքում (ամենատենչ) մի ծամփորդ է իմ հոգին-ը՝ Տիեզերքում աստվածային մի ծամփորդ է իմ հոգին, Պոետները (տենչում են) ու անց կենում-ը՝ Պոետները կանչում են ու անց կենում: Հե՛յ ազահ մարդ, հե՛յ անգոհ մարդ, միտքըդ երկար, կյանքըդ կարճ քառյակում վերջին տողի վերջին բառերը ունեցել են հետևյալ տարբերակները՝ *կարճ ու անհայտ (էս) էդ ծամփեդ, կարճ ու անհետ էդ ծամփեդ*, իսկ վերջում դարձել է *երկու օրվա էս ծամփեդ. անհայտի, անհետի, նաև էդ (այդ)-ի անորոշությունը միանշանակ կոնկրետացել է երկու օրվա և էս (այս)-ի ներկայականությամբ: «-էս է, որ կա...»* քառյակի վերջին տողի ըսպասում-ը նախ եղել է *ըսպասվում*, ապա՝ *ըսպանվում*, սակայն «հաղթել» է քառյակի լուսավոր տրամադրությանը հարիր *ըսպասում* բառ-միտքը, որ միանգամայն ճիշտ ամփոփում է քառյակի հոգեբանական զարգացումը:*

Կան մի քանի քառյակներ էլ, որոնց տարբերակները ավելի աշխատանքային ծրագիր-նախագծեր են (օր.՝ «Երկու շիրիմ իրար կից»-ը): Քառյակը ինքը բարդ իրավիճակի նուրբ և բանաստեղծական դիտարկում է.

*Երկու շիրիմ իրար կից,
Հավերժական լուռ դրրկից,
Թախծում են պաղ ու խորհում
Թե՛ ի՞նչ տարան աշխարհքից:*

Եթե այն համեմատենք տարբերակ համարվող արձակ շարադրանքի հետ, առաջին հայացքից դժվար է անգամ ընդհանրություն գտնել այդ երկուսի միջև («Ահա երկու գերեզման լուռ, տխուր մրմուռներ հին – թշվառները իրար սիրտ մաշեցին, կյանքում քաղցրություն չտեսան – իրար կյանք մաշեցին և ահա այժմ – երկու գերեզման լուռ ու տխուր»): Սակայն համեմատությունը լավագույնս ցուցադրում է, թե ինչպես է ամենասովորական թվացող կենցաղային իրադրությունը գեղարվեստական մեկնաբանության միջոցով ձեռք բերում թե՛ գեղագիտական, թե՛ փիլիսոփայական արժեք:

Քառյակներ էլ կան, որոնց մշակումներից յուրաքանչյուրը կարող է առանձին ուսումնասիրության նյութ հանդիսանալ: Դրանցից են «Ո՛վ իմանա՛ ո՛ր ընկանք», «Արևելքի եղեմներին իջավ պայծառ իրիկուն», «Դու մի անհայտ Բանաստեղծ ես, չըտեսնըված մինչ էսօր», «Յե՛յ ազահ մարդ, հե՛յ անգոհ մարդ, միտքըդ երկար, կյանքըդ կարճ», «Երնեկ էսպես՝ անվերջ քեզ հետ – իմ կյանքի հետ լինեի», «Խայամն ասավ իր սիրուհուն. «Ոտըդ ըզգույշ դիր հողին», «Քուն թե արթուն՝ օրիս շատը երազ եղավ, անցկացավ», «Լուսը լուսին քո ժպիտն է իմ երեսին ճառագում», և հատկապես «Ամեն անգամ Քո տըվածից երբ մի բան ես Դու տանում», «Հազար տարով, հազար դարով առաջ թե ետ, ի՛նչ կա որ», և «Ասի. «Յենց լոկ էս աճյունն է ու անունը, որ ունեմ...» քառյակները: Կարելի է ենթադրել, որ բանաստեղծն ինքն էլ է ընդգծվածորեն կարևորել այս ստեղծագործությունների նշանակությունն ու արժեքը և հետևողականորեն բառ առ բառ, անգամ տառ առ տառ զրել, ձևափոխել, մշակել ու կատարելագործել է նրանցով աշխարհի հետ, ինչպես ինքը կասեր, «տիեզերական խոհերով» հարաբերակցվելու իր հնարավորությունների ողջ շտեմարանը:

Կարճ տողերով «Ո՛վ իմանա՛ ո՛ր ընկանք» քառյակի տարբերակներն են.

*Ո՛վ իմանա՛ ուր եկանք
Քանի օրվա հյուր եկանք
Սերն ու սիրտն էլ երբ չըկան
Ցավի եկանք՝ զուր եկանք:*

Կամ՝

*(Կըրակ ընկանք), հուր ընկանք:
անմար հուր ընկանք:
Անշեջ, անվերջ հուր ընկանք:
Անմար, վառման հուր ընկանք:*

Վերջնական տարբերակն է.

*Ո՛վ իմանա՝ ու՛ր ընկանք,
Քանի օրվա հյուր ընկանք,
Սերն ու սիրտն էլ երբ չկա՝
Կըրա՛կ ընկանք, զու՛ր ընկանք:*

«Եկել»-ը գալն է՝ մենք ենք եկել, «ընկնել»-ը մեր կամքից անկախ հայտնվելն է, «կրակն ընկնելը» անհամեմատ ազդեցիկ է «ցավի գալուց», «զուր ընկնելը» ավելի իմաստուն է «հուրն ընկնելուց», առավել ևս դրանից առաջ կրակն ընկնելը արդեն կա: Կրակից հետո հուրը իմաստային աստիճանավորում (գրադացիա) չի պարունակում, իսկ զուր ընկնելը ամփոփիչ, ընդհանրացնող ավարտ ունի: Նմանատիպ համատեքստային-իմաստային վերակառուցման է ենթարկված մեկ այլ քառյակ՝ «Լինե՛ր հեռու մի անկյուն»: Տարբերակները այսպիսի բառային շերտեր ունեն.

*Լինե՛ր դալար մի անկյուն,
Ու մանկական արդար քուն,
Երագի մեջ լուսավոր,
Ու երջանիկ մարդկություն:*

Անմիջապես ի հայտ է գալիս վերջնական տարբերակի խոր փիլիսոփայական ենթատեքստը.

*Լինե՛ր հեռու մի անկյուն,
Լինե՛ր մանկան արդար քուն,
Երագի մեջ երջանիկ,
Չաշտ ու խաղաղ մարդկություն:*

Ի՞նչ է արել բանաստեղծը. նախ՝ *դալար*-ը այս համատեքստում ոչինչ չասող բառ է, անգամ ինչ-որ քաղցր-մեղր երանգ ունի, իսկ *հեռու*-ն իրականությունից որոշակիորեն ոչ գոհ, այլընտրանքային իրականության ներկայություն է ենթադրում, ապա՝ *մանկական* բառը անորոշ վերաբերմունք է արտահայտում՝ ի տարբերություն *մանկանի*, որն ակնհայտորեն կոնկրետ է, շոշափելի, սիրելի և անպաշտպան, նաև՝ *երագի մեջ լուսավոր*-ը մարդկության բնորոշիչ չէ՝ որպես իմաստային արժեք, իսկ *երջանիկ*-ը արդեն կգումարվի *հաշտ ու խաղաղ*-ին և կվերաիմաստավորվի. *երջանիկ*-ը, որովհետև *հաշտ ու խաղաղ* է, *հաշտ ու խաղաղ*ն է երջանիկ լինելու նախապայմանը: Ահա և քառյակի մշակման փիլիսոփայական ողջ տրամաբանությունը: «Մանկական»-ը «մանկան»-ով փոխարինելու խնդրին առնչվում ենք մեկ այլ քառյակում ևս՝ «Կըլթացնում են, արտորում»-ի մեջ *իմ մանկական հոգու հետ*-ը վերջնական տարբերակում վերածվում է *թռչում մանուկ հոգուս հետ*, որն իսկապես ավելի տարողունակ է որպես պատկեր:

Կան քառյակներ, որոնց ոչ միայն բառերն են փոխվել, այլև շարադրման ողջ համակարգը, իրադրության մեկնաբանության սկզբունքները և գնահատման մոտեցումը: «Չազար տարով, հազար դարով առաջ թե ետ,

ի՞նչ կա որ» քառյակը ունի 28 տողերից բաղկացած այլաձև և այլիմաստ տարբերակներ. օր.՝ *ի՞նչ կա որ*-ը մերթ եղել է *մին է*, մերթ՝ *միևնույն է*, մերթ՝ *մին է դա*, կամ *հազար էսպես ձևեր փոխեն*-ը նախ հնչել է որպես *հազար էդպես ձևեր փոխես*, ապա՝ «*հազար էսպես ձևեր փոխեն*», կամ *հազար–հազար ձևեր փոխեն*, *ձևեր առնեն*, *ձևեր փոխեն*: Արժե տող առ տող ներկայացնել այս քառյակի ստեղծագործման ընթացք-հաջորդակա-նությունը, որը լավագույնս վեր է հանում բանաստեղծի մտքի զարգաց-ման տրամաբանությունն ու ամենակարևորի փնտրտուքի ժամանակ հան-ճարեղորեն ճիշտ կողմնորոշվելու օժտվածությունը:

Առաջին տող⁸

- ա. *Հազար տարով, հազար դարով առաջ թե ետ՝ մին է*
- բ. *(Էս օրվանից) հազար տարի առաջ թե ետ (մին է դա) միևնույն է*
- գ. *(Էս օրվանից) հազար տարի առաջ թե ետ (մին է դա)*

Հազար տարով, հազար դարով առաջ թե ետ, ի՞նչ կա որ,

Երկրորդ տող՝

- ա. *Դու եղել ես ու կլինես հար ու հավետ*
- բ. *Ես եղել եմ ու կլինեմ հար ու հավետ*
- գ. *(Որ) եղել եմ – պիտի լինեմ հար ու հավետ, մին է դա*

Ես եղել եմ, կա՛մ, կլլինեմ հար ու հավետ, ի՞նչ կա որ,

Երրորդ տող՝

- ա. *Հազար էդպես ձևեր փոխես ձևը խաղ է լույս նյութի*
- բ. *Հազար էսպես ձևեր փոխեն – ձևը խաղ է անցավոր*
- գ. *(Հազար–հազար ձև կորցրնեն) ձևը խաղ է անցավոր*
- դ. *(Հազար–հազար ձևեր փոխեն/առնեն), ձևը խաղ է անցավոր,*
- ե. *Հազար–հազար ձևեր փոխեն – ձևը խաղ է անցավոր,*
- զ. *Ձևեր առնեն, ձևեր փոխեն – ձևը խաղ է անցավոր,*
- է. *(Հազար–հազար ձև կորցրնեն) ձևը խաղ է անցավոր*
- ը. *(Հազար–հազար ձևեր փոխեն/առնեն), ձևը խաղ է անցավոր*

Հազար էսպես ձևեր փոխեն, ձևը խաղ է անցավոր,

Չորրորդ տող՝

- ա. *Իսկ դու հոգի տիեզերքի, մեծ հոգու հետ – մին է:*
- բ. *Իսկ ես հոգի տիեզերքի, մեծ հոգու հետ–մին է:*
- գ. *Իսկ ես հոգի տիեզերքի մեծ հոգու հետ, ինչ կա որ:*
- դ. *Ես – (հուր) հոգի տիեզերքի մեծ հոգու հետ, մին է դա:*
- ե. *Իսկ ես հոգի տիեզերքի մեծ հոգու հետ մին է դա:*
- զ. *Ես – (հուր) հոգի տիեզերքի մեծ հոգու հետ, մին է դա:*

Ես միշտ հոգի, տիեզերքի մեծ հոգու հետ, ի՞նչ կա որ:

Եթե հետևենք բանաստեղծի ստեղծագործական աշխատանքի տրա-

⁸ Նախ համարակալված նշվելու են տարբերակները, ապա՝ վերջնական օրինակը:

մաքանությանը, կնկատենք, որ սկզբնական տարբերակներում նա «դու»-ով է ընկալում համատիեզերական միասնականության զգացողությունը՝ «դու եղել ես, ու կլինես», «դու միշտ հոգի տիեզերքի մեծ հոգու հետ» և այլն, սակայն աստիճանաբար գալիս է «ես»-ի մշտատևության գաղափարին՝ այն համարելով անսկիզբ և անվախճան գոյի ներդաշնակ դրսևորումներից մեկը՝ «ես միշտ հոգի, տիեզերքի մեծ հոգու հետ, ի՛նչ կա որ»: Այնուհետև. «ձևի» ինքնագիտակցության խնդիրը բանաստեղծը լուծում է արդեն ոչ թե գեղագիտորեն միայն, այլ եզակիորեն փիլիսոփայական արժևորմամբ՝ *«հազար-հազար..., հազար էսպես..., ձևեր փոխեն - առնեն..., ձև կորցրնեն»*: Եվ ի վերջո՝ թերևս ամենակարևորը. «ձևը խաղ է անցավոր»՝ միտքը համարյա բոլոր տարբերակներում նույնական է, գերիշխող, և մտքի այս կառույցի շուրջ է, ըստ էության, մանևրում բանաստեղծը տարբերակների լաբիրինթոսում:

Այս քառյակի տարբերակները կարելի է անվերջ քննել, զուգադրել, նորանոր իմաստային շերտեր ներկայացնել, սակայն կարևորն այն է, որ բազում պրպտումներից, համեմատություններից հետո բանաստեղծը դասական հստակության է հասնում և թողնում ընթերցողին հերթական անթերի քառյակը.

*Հազար տարով, հազար դարով առաջ թե ետ, ի՛նչ կա որ.
Ես եղել եմ, կա՛մ, կըլինեն հար ու հավետ, ի՛նչ կա որ,
Հազար էսպես ձևեր փոխեն, ձևը խաղ է անցավոր,
Ես միշտ հոգի, տիեզերքի մեծ հոգու հետ, ի՛նչ կա որ:*

Տարբերակներում մի կայուն հայտանիշ էլ կա, որին հարկ է անդրադառնալ. Աստծո (Մինը, Շռայլ, Դու, Նա) նկատմամբ վերաբերմունքը վերջնական օրինակներում իմաստավորվում է անունի մեծատառ գրությամբ (տարբերակներում շատ հաճախ փոքրատառով գրվածները վերջնական տեքստերում գրվում են մեծատառով), իսկ սա քառյակների խոհափիլիսոփայական շրջանակը հետաքրքիր ձևով ամբողջացնում է:

Եթե փորձենք ի մի բերել վերոշարադրյալը, կարող ենք ընդհանրացնել, որ Հովհաննես Թումանյանի ինչպես այլ ստեղծագործություններ, այնպես էլ քառյակները վերլուծությունների, հետազոտությունների անսպառ նյութ են պարունակում: Մասնավորապես քառյակները իմաստային, խոհական, փիլիսոփայական այնքան բազմաշերտ կառույցներ են, որ հնարավորություն են ընձեռում ուսումնասիրության ընթացքում անգամ ստեղծագործելու, նոր և անակնկալ հարցադրումներ կատարելու, կառուցվածքային և իմաստային նորանոր արժեքներ հայտնաբերելու:

Բանալի բառեր – *բանաստեղծական կայուն ձևեր, քառյակ, բառիմաստ, համատեքստ*

АСТХИК БЕКМЕЗЯН – Контекстное осмысление слова в четверостишиях О. Туманяна. – В статье рассматривается осмысление слова как художественной единицы. В контексте поэтического произведения слова нередко обретают значения, отличные от словарного, обогащаются новыми смысловыми оттенками.

Сферой исследования избраны четверостишия О. Туманяна, в которых важнейшую роль играют подтексты и значение буквально каждого слова зависит от особенностей художественного и смыслового контекста.

Ключевые слова: *устойчивые поэтические формы, четверостишие, значение слова, контекст*

ASTGHİK BEKMEZYAN – *Context Comprehension of the Word in the Quatrains of H. Tumanyan.* – The problem of understanding the word as a literary unit, the literary meaning of the word in the context of a particular work is being examined in the article. Within the scope of the present study the quatrains of H. Tumanyan have been selected, where different connotations of every word – starting from the aesthetic and semantic context of each literary creation are obviously being distinguished.

Key words: *steady poetic forms, quatrain, word meaning, context*

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԱՐԴՈՒ ԴՐԱՄԱՆ
ՀԱՐՈՒԴ ՓԻՆՔԵՐԻ «ԾՆՆԴՅԱՆ ՕՐ» ՊԻԵՍՈՒՄ**

ՆԱԻՐԱ ԵԼԻՆՅԱՆ

Համաշխարհային երկու պատերազմները, զանգվածային սպանությունները, միջուկային աղետի սարսափը, հասարակական կառույցների անարդար մարտավարությունը, խոր հետք թողնելով 20-րդ դարի սերնդի հայացքների, համոզմունքների և հոգեկերտվածքի ձևավորման վրա, ծնեցին օտարացման, անապահովության, հուսահատության, միայնության, վախի, սարսափի, կորստի, մահվան տրամադրություններ: Նշված դարի գրականության, արվեստի, փիլիսոփայության ուշադրության կենտրոնում մարդն էր, նրա ներկան ու ապագան, ճակատագիրը, նպատակներն ու արժեքները, իսկ թատրոնը, որի վառ ներկայացուցիչներից է անգլիացի դրամատուրգ, նոբելյան մրցանակի դափնեկիր Հարոլդ Փինքերը, տվեց իր ժամանակաշրջանի խոր ու ճշմարիտ համայնապատկերը:

Հարոլդ Փինքերը ծնվել է 1930-ին Յեքսիում՝ Լոնդոնի արևելքում: Նրա համար իր տունը սիրո, ջերմության և ապահովության ապաստարան էր, սակայն 1939-ին սկսված պատերազմը խաթարեց նրա անխռով մանկությունը, և ընտանիքի միակ զավակին ուղարկեցին Քորնուել: «Շատ երեխաների համար ապահով տնից կտրվելն ու մայրական հոգատարությունից զրկվելը տրավմատիկ փորձառություն էր, ոմանց համար էլ այն առաջին հանդիպումն էր բիրտ կյանքի հետ: Փինքերի համար նշված երկու տարրերն էլ մեծ նշանակություն ունեցան՝ ստեղծելով այնպիսի պատկերներ, որոնք թափանցեցին գրողի կյանք ու գրական գործունեություն»¹: Այդ ամբողջում տղան հասկացավ՝ ինչ բան է միայնությունը, մեկուսացվածությունը, մտերիմների կորուստը (Փինքերի ընկերները հաճախ էին լսում ծնողների, հարազատների մահվան լուրեր), դաժանությունը (ունեին մի ուսուցիչ, որը ծեծում էր նրանց), ականա հայտնվեց նենգ տղաների միջավայրում. «Կարծում եմ՝ այս խառնաշփոթի ու կորուստների արդյունքում մարդ դառնում է, այսպես ասած, ավելի վտանգավոր»²: Քորնուելում Փինքերն անցկացնում է մեկ տարի, բայց 1940-ին նորից է տեղափոխվում, այս անգամ՝ Բլից, իսկ 1941-ին արդեն մոր հետ տեղափոխվում է Ռիդինգ: Լոնդոն է վերադառնում միայն 1944-ին:

Փինքերի պիեսները հագեցած են մարդկային ճակատագրին վերաբերող տազնապալի զգացումներով, օտարվածության, մեկուսացվածության, միայնության, վախի, սպառնալիքի, բռնության, հեռանկարի բացակայության, կորստի տրամադրություններով: Քանի որ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Անգլիայում տիրում էր հոգևոր

¹ Billington M., Harold Pinter, London, 2007, p. 6.

² Նույն տեղում, էջ 6-7:

ճգնաժամ, հուսալքված ու հիասթափված երիտասարդ սերունդը աշխարհը համարում էր անհիմաստ, ողբերգական, անբանական, որտեղ թագավորում էր չարիքն ու անարդարությունը: Սոցիալական, տնտեսական, քաղաքական այդպիսի մթնոլորտում մարդը հեռանկար չուներ. «Ներկան ողբերգական է, ապագան՝ անորոշ, և այդ ողբերգականի և անորոշի միջև ծգվում է մարդկային կյանքը՝ անհիմաստ ու անբովանդակ»³: Եվ դրամատուրգը, ճշգրտորեն տալով իր դարաշրջանի հոգևոր անկման ու ներքին որոնումների գեղարվեստական նկարագիրը, կերտեց ժամանակակից մարդու ողբերգական պատկերը:

Անգլիական դրամատուրգիայում Յարոլդ Փինթերի ստեղծագործությունները որոշակիորեն կապված են էկզիստենցիալիզմի հետ: Գրաքննադատ Ուոլտեր Բեռը նշում է. «Փինթերի խանդավառությունը էկզիստենցիալիզմի արդյունք է: Նա իսկապես հավատում է, որ մենք, ինչպես էկզիստենցիալիստներն են հաստատում, ուղեկից չունենք, որ մեզմից յուրաքանչյուրն ապրում է դատարկության մեջ»⁴: Ըստ էկզիստենցիալիզմի՝ թշնամական աշխարհում լքված անհատը, որին սպառնում են պատերազմները, ահաբեկումները և անհատականության ոչնչացումը, սկսում է վախենալ. «Վախը մարդուն դարձնում է միայնակ ու ստիպում նրան ուշքի գալ ... Վախի զգացումով մարդը հասկանում ու գիտակցում է իր իսկական էությունը»⁵: Հստակորեն գիտակցելով իր միայնակ ու լքված լինելը՝ մարդը դառնում է անտարբեր շրջապատող աշխարհի և մարդկանց նկատմամբ՝ աշխարհը համարելով անհիմաստ ու անհեթեթ:

Փինթերը ստեղծագործաբար յուրացրել է էկզիստենցիալիզմի սկզբունքները՝ թշնամական, անճանաչելի ու անհասկանալի աշխարհ, միայնություն, վախ, տագնապ, անհատի ճակատագիր, մարդու ողբերգական ներկա և անորոշ ապագա, օտարացման խնդիր, հաղորդակցվելու անկարողություն: Դրամատուրգը պատկերում է մարդու ողբերգությունը, ճգնաժամը, արծարծում սեփական «ես»-ի խնդիրը: Նշված թեմաները լավագույնս արծարծվում են Փինթերի «Ծննդյան օր» (1958) պիեսում, որն արժանացավ քննադատների ու հանդիսատեսի ժխտողական գնահատականներին: Միայն Յարոլդ Յոքսոնը հիացնումնքով հայտարարեց, որ Փինթերը տաղանդ է, նոր ու հզոր ձայն անգլիական մշակույթում:

Դրամայում նկարագրված է ն՝ հոգսերով լի սովորական կյանք, և՛ վտանգավոր ու սպառնալից աշխարհ: Դրամատուրգը ներկայացնում է ճգնաժամային իրավիճակներում հայտնված անհատին, հետազոտում քաղաքական ու տնտեսական կառույցների ծուղակն ընկած մարդուն: Անհատը միայնակ է, անհանգիստ, հասարակությունից օտարացած ու մեկուսացած, շփոթված, գտնվում է թշնամական աշխարհում, միշտ փնտրում է տուն՝ ապահով ապաստարան: Երկի հերոս դաշնակահար Ստենլին շուրջ մեկ տարի բնակվում է ծովափնյա մի աղքատիկ կենսօթևանում: Հյուրասեր ու հոգատար տանտիրուհին՝ Մեգը, Ստենլիին հայտնում է երկու նոր կեն-

³ **Յ. Հովականյան**, ժամանակակից փիլիսոփայական հոսանքներ, Պրակ 1, Եր., 1998, էջ 87:

⁴ "Playwrights, Lyricists, Composers on Theater", New York, 1964, p. 384:

⁵ **Шварц Т.** От Шопенгауэра к Хайдеггеру. М., 1964, с. 107.

վորների մասին լուրը, որն անհանգստացնում է հերոսին: Ակնհայտ է, որ երիտասարդը վախենում է, բայց ինչի՞ց կամ ումի՞ց, չի պարզաբանվում. տազնապ «ոչնչի» հանդեպ, որ մարդ զգում կամ լսում է, որի մասին գուշակում է, որի գործողության հոտն առնում՝ առանց տեսնելու⁶: Ըստ Հայդեգերի՝ վախն (Fear) ու անհանգստությունը (Angst) տարբեր զգացումներ են: Մարդը սովորաբար վախենում է կոնկրետ, իրեն հասկանալի կամ ճանաչելի, իր կյանքին սպառնացող ինչ-որ բանից, իսկ անհանգստությունը, տազնապը ծնվում են «ոչնչից»: Նմանատիպ վախ նկարագրվում է նաև ավստրիացի հեղինակ Գ. Մեյրինկի «Հոլեն» վեպում. «Այն ինքն իրենից ծնվող սարսափ է, կաթվածահար անող վախ անշոշափելիի նկատմամբ, որը չունի կերպարանք, բայց որը քայքայում է մեր գիտակցության սահմանները ... Նույն սարսափելի, տանջալից «ոչինչն» է. այն գոյություն չունի, բայց ողջ սենյակը լցնում է իր սարսափազդու էությանը»⁷: Ստենլին զգում է իր ապահով ու հանգիստ կյանքին սպառնացող վտանգը: Կուզենար փախչել, հեռանալ, բայց չգիտի՝ ուր գնալ. չկա մի վայր, որտեղ իրեն ապահով զգա: Իսկ ողջ կյանքում թաքնվել այստեղ կամ այնտեղ անհնար է, ուստի գիտեր՝ մահն անխուսափելի է: Արտաքին ուժերն ավելի զորեղ են. զավթիչները, ի դեմս Գոլդբերգի և Մքլանի, գալիս են ոչնչացնելու անհատին:

Մքլանն ու Գոլդբերգը սկսում են հարցաքննել ու բազմաթիվ մեղադրանքներ ներկայացնել զոհին: Ճիշտ է, Ստենլիի մեղադրանքի բնույթն անհայտ է, բայց չարակամների հարցաքննությունից պարզ է դառնում, որ նա դավաճանել է կազմակերպությանը, «կեղտոտ խաղ խաղացել», փոխել է անունն ու թաքնվել: Ըստ երևույթին Ստենլին իրեն մեղավոր է զգում, ուներ մեղքի իր բաժինը. սկզբի տեսարանում զգուշացնում է Մեգին, որ գալու են մեքենայով, սայլակով ու տանելու են մեկին: Գուցե այդ մեկն ինքն է: Նա թաքնվել է մի հեռավոր օբևանում և սպասում է պատժին. գիտեր, որ դատաստանի օրը հեռու չէ: Գոլդբերգի ու Մքլանի հայտնվելը, նրանց հարցաքննությունը, բռնությունը Ստենլիի մտքերն են, թերևս երևակայությունը: Թեև Փինթերը չի բացահայտում Ստենլիի մեղքը, բայց ցույց է տալիս, որ յուրաքանչյուր մեղավոր, մտովի ծրագրելով իր դատավճիռը, չի մնում անպատիժ:

Տանտիկինը այդ երեկո Գոլդբերգին և Մքլանին հրավիրում է Ստենլիի ծննդյան խնջույքին: Ինչպես պիեսի վերնագիրն է հուշում, իսկապես ծննդյան օր էր սպասվում, թեև «հոբելյարը» մի քանի անգամ ասել էր, որ իր ծննդյան օրը չէ: Խնջույքը Ստենլիի վախճանի սկիզբն է, գուցե վերջին «ծննդյան օրը»: Երեկոյան ուրախ տրամադրությունը փոխվում է անհանգստության, վախի, ապա սարսափի: Օրը վերածվում է արտասովոր իրադարձություններով լի օրվա, իսկ սպասված հիանալի երեկոն՝ մղձավանջի:

Առավոտյան հայտնվում է Ստենլին՝ ծեծված ու հաշմված. նա կենդանության ոչ մի նշան ցույց չի տալիս: Գոլդբերգն ու Մքլանը խոստանում են խնամել Ստենլիին, այնուհետև դարձնել անհատականություն, քաղա-

⁶ Տե՛ս Шпенглер О. Закат Европы. В 2 т. Т. 2. М., 2003, т. 11:

⁷ Мейринк Г. Голем, М., 1991, с. 157.

քական գործիչ, հարուստ: Ձավթիչների խոստումներին նա միայն աղեկտուր ճիչերով կարող էր պատասխանել. նա «զառանցող պատյանի մեջ էր»⁸: Հաշմանդամ դարձած դաշնակահարին տանում են տան երկու նոր կենվորները՝ Գոլդբերգը և Սքեյանը, իսկ թե՛ ո՞ւր և ինչո՞ւ, մնում է անհայտ: Ովքե՞ր են նրանք, որտեղի՞ց են եկել և ի՞նչ կապ ունեն Ստենլիի հետ, չի պարզաբանվում:

Ստենլին ներկայանում է ինքնամփոփ, խորհրդավոր, թեև հիշողություններից պարզվում է, որ նա ամենևին էլ այդպիսին չի եղել. երաժշտի կյանք, ելույթներ, համերգներ, շրջագայություն, ծափողջույններ, իսկ այժմ միայնություն, վախ, օտարացվածություն, լռություն⁹: Ստենլիի անցյալից միայն հայտնի են նրա դաշնակահար լինելը, համերգի ձախողումը, ինչ-որ ուժերին վիրավորանք հասցնելը: Նա համերգ էր տվել Լոնդոնում, բայց «դրանից հետո նրանք ոչնչացրին ինձ: Իմ հաջորդ համերգն արդեն նշանակված էր: Իմ հաջորդ համերգը: Չեմ հիշում, որտեղ պիտի տեղի ունենար: Չմոռան էր: Գնացի նվագելու: Երբ տեղ հասա, դահլիճը փակ էր, տարածքը՝ կողպած, նույնիսկ պահակ չկար: Նրանք փակել էին այն ... Հետաքրքիր է՝ ո՞վ էր պատասխանատուն: (*Դառնորեն*) Լավ, Ջեք, ամեն ինչ հասկացա: Ուզում էին, որ ես ծնկի գալի նրանց առջև ... հասկացա»¹⁰: Կաֆկայի հերոս Յոզեֆ Կ.-ի, Կամյուլի հերոս Սյորսոյի նման (թեև Սյորսոն հանցանք էր գործել, բայց դատարանում մեղադրում էին ոչ այնքան հանցանքի, որքան անտարբերության համար) նրան հարցաքննում են, մի շարք մեղադրանքներ ներկայացնում, դաժանաբար պատժում՝ չպարզաբանելով իրական մեղքը. «Կասկած չկա, որ ... այսօրվա հարցաքննության բոլոր դրսևորումների թիկունքում մի մեծ կազմակերպություն է կանգնած, մի կազմակերպություն, որ ոչ միայն կաշառվող պահակներ, գռեհիկ վերակացուներ ու քննիչներ ունի (նրանք համեստ են միայն՝ երբ դա ձեռնտու է), այլ նաև բարձր ու բարձրագույն աստիճանի ատենակազմ՝ ծառաների, գրագիրների, ժանդարմների, օգնական այլ ուժերի, նույնիսկ դահիճների (չեն վախենում գործածել այս բառը) անհրաժեշտ անհարմար շքախմբով: Ո՞րն է այս կազմակերպության անելիքը, պարոնայք: Գուցե այն, որ անմեղ մարդկանց ձերբակալի և նրանց դեմ անիմաստ, մեծ մասամբ, ինչպես այս դեպքում է ապարդյուն հետաքննությունը սկսի: Ինչպե՞ս կարելի է այս ամենի անմտության պայմաններում ծառայակազմի բարքերի ապականությունից խուսափել»¹¹: Յոզեֆ Կ.-ի նկարագրած դատը, որը նաև Ստենլիին է վերաբերում, մարդուն ճնշող ու ոչնչացնող ուժ է: Փինթերը հետևյալ կերպ է բացատրում այն. «Մենք հաշտվում ենք. Հիերարխիան, Կազմակերպությունը, Իրավարարները, սոցիալ-կրոնական ճիվաղները ժամանել են ճնշելու և վերափոխելու մարդուն, որը հրաժարվել է իր և մյուսների հանդեպ ունեցած պատասխանատվությունից: Բայց նա ունի բնավորություն. նա պայքարում է իր կյանքի համար: Թեև այդ պայքարը երկար չի տևում: Նա, որի ներաշխարհը մոլորությունների ճահճուտ է,

⁸ Prentice P., The Pinter ethic: the Erotic Aesthetic, N. Y., 2000, p. 24.

⁹ Տե՛ս "Английская литература 1945–1980". М., 1987, էջ 392:

¹⁰ Pinter H., Complete Works: Vol. 1, New -York, 1990, p. 33.

¹¹ Ֆ. Կաֆկա, Դատավարություն, Եր., 1991, էջ 38:

որի ուղեղը փոքրիկ արկղիկ է, կործանվում է նրանց մեղադրանքների ծանրության ներքո»¹²: Փինթերը ներկայացնում է ջարդված ակնոցով, հաշմված, կույր ու համր երիտասարդի՝ ցույց տալու, որ մարդը պայքարում է մինչև վերջ: Ի տարբերություն Յոզեֆ Կ.-ի և Մյորսոյի, Ստենլին, թեև զրկվել էր խոսելու ունակությունից, բայց զենքերը վայր չի դնում. մինչև վերջին պահը չի հանձնվում ու չի լռում:

Էկզիստենցիալիստների նման Փինթերը «միայնություն» հասկացությունը ուսումնասիրում է «իբրև անհատի վրա արտաքին աշխարհի ճնշման հետևանք, որը ստիպում է մարդուն մեկուսանալ նրանից, փախչել, միևնույն ժամանակ տառապել այդ միայնությունից»¹³: Սարտրի հերոս Ռոկանտենի նման Ստենլին, ինչպես նաև դրամատուրգի գրեթե բոլոր հերոսները, միայնակ են, ապրում են փակ սենյակներում ու թեև տառապում են միայնությունից, բայց և այնպես ամեն կերպ փորձում են պահպանել այն: Մեկուսացած մի անշուք կենսօթևանում՝ հերոսը թաքնվում է դրսի թշնամական ուժերից՝ չկարողանալով գտնել ազատություն ո՛չ փախուստի, ո՛չ խռովության, ո՛չ ստեղծագործելու մեջ: Արտաքին աշխարհը ճնշում է նրան, զրկում ազատությունից և կործանում: Նա իրեն օտար է զգում այն աշխարհում, որտեղ ապրում է: Կաֆկան երիտասարդ տարիներին օրագրում նշել է. «... մեզ աջակցում են մեր ներկան ու ապագան: Մեր ազատ ժամանակը, այդ ժամանակի զգալի մասը նվիրելով աշխատանքին՝ փորձում ենք այն պահել հավասարակշռության մեջ ... Այսպես ստեղծվում է միջավայր, որի շուրջ մենք պտտվում ենք: Միայն այդ միջավայրն է մեզ պատկանում, բայց մինչև այն պահը, երբ պահպանում ենք. եթե ինքնանոռացության, հուսահատության, վախի, հոգնածության վիճակում մի կողմ քաշվենք, ապա ամեն ինչ կորած է, մենք էլ՝ կործանված: Մինչ այդ ժամանակի հոսանքում էինք, այժմ հետ ենք մնացել. նախկինում լողորդներ էինք, հիմա՝ թափառաշրջիկներ, մենք կործանված ենք: Մենք օրենքից դուրս ենք, ոչ ոք դա չի գիտակցում, բայց յուրաքանչյուրը դրան համապատասխան է մեզ վերաբերվում»¹⁴: Ստենլին լավ դաշնակահար էր, համերգ էր ունեցել Լոնդոնում, բոլորը ծափահարել էին, մոտեցել ու ողջունել, ու մինչ հերթական համերգը իրեն երջանիկ էր համարել: Միայն համերգի ձախողումից հետո հասկացավ, որ միայնակ է, որ միշտ էլ միայնակ է եղել, որ այդ ծափերն ու ողջույնները պատրանքներ են, ոչ թե իրականություն, որը կործանեց նրան: Ըստ Յասպերսի՝ միայն խոր ցնցումների, «սահմանային պահերի» ժամանակ է մարդ կարողանում խորհել ու հասկանալ՝ ինչու է ապրում, ո՞րն է իր կյանքի նպատակը¹⁵: Կյանքում մի քանի պահեր են լինում, երբ մարդ, դուրս գալով առօրյա կյանքի սահմաններից, սկսում է մտածել իր անցած ուղու, ապրած կյանքի իմաստի մասին: Պայքարի, տառապանքի, միայնության, մահվան պահերին մարդ ըմբռնում է էկզիստենցիան (մարդկային գոյությունը) իբրև սեփական էության հիմք: Համերգի ձախողումն ու Ստենլիի կործանումը, որոնք կապված են հզոր

¹² Billington M., նշվ. աշխ., էջ 78:

¹³ Власова Т. Одиночество как залог возрождения // Online, google.ru

¹⁴ Затонский Д. Франц Кафка и проблемы модернизма. М., 1965, с. 57–58.

¹⁵ Տե՛ս "Экзистенциализм: Ж.-П. Сартр – М. Хайдеггер – К. Ясперс – Н. Бердяев – М. Бубер" // Online, google. ru

ուժերին չհնազանդվելու հետ, այն սահմանային՝ տառապանքի, միայնության, կործանման, «մահվան» պահերն են, երբ հերոսը գիտակցեց, որ ինքն օտար է մարդկանց, միջավայրին, աշխարհին, և հասարակության ու իր միջև ոչ մի փոխհարաբերություն չի կարող լինել, ըմբռնեց իրական գոյությունը և մեկուսացավ: «Կյանքի հոսքը մեզ քշում է ինչ-որ տեղ, բայց ուր՝ չգիտենք: Շուտով դառնում ես իր, առարկա, գրեթե անկենդան»¹⁶: Եվ նա, «բացվելով աշխարհի քնքուշ անտարբերության առջև»¹⁷, ապաստան ու ապահովություն գտավ մի կենսօթևանում՝ նախընտրելով միայնությունը: Եթե Մյորսոյի համար երջանկությունը աշխարհի ու անհատի անտարբերությունների մեջ է, ապա այն Ստենլիին չտվեց ազատություն ու չփրկեց. դաշնակահարը չկարողացավ ազատվել ճնշող անցյալից: Նա թեև կապերը խզել էր արտաքին աշխարհի հետ, բայց մինչ չարականներին հանդիպելը՝ անհանգիստ էր. դա Հայդեգերի նկարագրած անհանգստությունն (Angst) է «ոչնչի» հանդեպ, որը զգում էր նաև Ռոկանտենը. «Եթե կարողանայի հասկանալ՝ ինչից են վախենում, առաջընթաց կլիներ»¹⁸: Ըստ Կյորկեգորի՝ «Վախը անբովանդակ զգացում է, որ իշխում է մարդուն՝ վախ «ոչնչի» հանդեպ, տազնապ, անհանգստություն»¹⁹:

Գրողի հերոսը, սենյակում մեկուսացած, վախենում է, բայց ինչի՞ց: Ըստ Փինթերի՝ նրանք «ակնհայտորեն վախենում են այն բանից, ինչը սենյակից դուրս է: Սենյակի պատերից այն կողմ աշխարհն է, որ նետվում է նրանց վրա ու վախեցնում ... Մենք բոլորս այնտեղ ենք, այդ սենյակում, իսկ դրսում աշխարհն է ... որը անհասկանալի է ու վախեցնող, տարօրինակ ու տազնապալի»²⁰: Եթե սկզբի տեսարաններում Ստենլիի անհանգստության պատճառը պարզ չէր, ապա զավթիչների հայտնվելուց հետո ակնհայտ է դառնում, թե ունից կամ ինչից է վախենում. հերոսի անհանգստությունը դառնում է ոչ ընդհանրական, վերածվում է վախի (Fear), սարսափի: Ստենլին պայքարում է, դիմադրում մինչև վերջ, բայց դառնում է կույր ու համր, կործանվում, որովհետև նա անզոր է հզոր ու կործանարար ուժերի դեմ. «Արտաքին աշխարհի վիթխարի անմտությունը, կյանքի անիմաստ ու անհեռանկար բնույթը, որևէ մտքի ու նպատակի բացակայությունը, օտար և թշնամի ուժերի «թաքուն ներկայությունը» և գոյության կատարյալ արսուրդը ստեղծում են միֆական մի տարածություն, ուր մարդը ներկա է որպես դատապարտյալ, կողմնակի մի էակ, որի ճիգ ու ջանքը, փրկության ամեն քայլը նրան դարձնում են ավելի անպաշտպան ու անօգնական, որովհետև ի սկզբանե նա դատապարտված է կործանման»²¹:

Թեև Փինթերի պիեսներում արծարծվում են էկզիստենցիալիզմի որոշ գաղափարներ ու թեմաներ, բայց էկզիստենցիալ վախը և մյուս մոտիվները նշված փիլիսոփայության անմիջական շարադրանքը չեն: Դա հիմնված է պատերազմի սարսափելի շունչը զգացած մանուկ Հարոլդի ու անգլիա-

¹⁶ Затонский Д., Գշվ. աշխ., էջ 54:

¹⁷ Ա. Կամյու, Օտարը, Եր., 1994, էջ 90:

¹⁸ Сартр Ж.-П. Тошнота. СПб., 2006 // Online. Google.ru

¹⁹ Быховский Б. Кьеркегор. М., 1972, с. 159.

²⁰ "Harold Pinter org." // online, google.com

²¹ Հ. Էդոյան, Շարժում դեպի հավասարակշռություն: Հոդվածներ, էսսեներ, Եր., 2009, էջ 173:

կան կառավարությունից հիասթափված Փինթերի կյանքի փորձի վրա: Ամենօրյա կենաց և մահու պայքարը միայնության, օտարվածության, մեկուսացվածության, վախի և անելանելիության հուշեր թողեցին. թեմաներ, որոնք առկա են գրողի յուրաքանչյուր երկում: Իսկ Չաքմին ուղղակի տուն չէր. այն ապաստարան էր, պատսպարան, «դրախտ», որից Փինթերը հարկադրված էր հեռանալ: Ըստ Սայթլ Բիլինգթոնի՝ պիեսը անձնական, մոլեգին դրամա է անցածի, անհետացած աշխարհի մասին. այնքան վախի ու սարսափի դրամա չէ (չնայած այս զգացումները անտարակույս ներկա են), որքան կորուսյալ Դրախտի կարոտի՝ որպես ապաստան անորոշ ներկայից²²: Թերևս Ստենլին էր մեղավորը ու խախտել էր խաղի կանոնները, որովհետև Գոլդբերգը խորհուրդ էր տալիս ազնիվ խաղալ. «Միշտ նույն բանն են ասել: Ապրել լիարժեք, գործուն և ազնիվ խաղալ»²³: Իսկ մյուս կողմից, Ստենլին, ինչպես Կամյուն է մեկնաբանում «Օտարի» հերոս Սյորսոյի կերպարը, «դատապարտվում է, որովհետև չի խաղում իրեն շրջապատողների խաղը: Այդ իմաստով նա օտար է այն հասարակությանը, որտեղ ապրում է: Չերոսն ասում է այն, ինչը կա իրականում, նա խուսափում է դիմակավորումից, և հասարակությունը իրեն վտանգված է զգում»²⁴: Այս երկու նենգամիտները մահվան ներկայացուցիչներն են, «անհայտության երկու հրեշտակները»²⁵, որ եկել են Ստենլինն տունն տանեն: Իսկ Սել Գուսովին տված հարցազրույցում Փինթերն ամփոփում է. «Այն անհատի կործանումն է, անհատի ծայնը»²⁶: Պիեսը մի մարդու մասին է, ով փորձում է մոռանալ անցյալն ու վերագտնել իրեն՝ մենամալով: Ստենլին տաղանդավոր դաշնակահար էր, բայց չկարողանալով հաղթահարել ձախողումը՝ մեկուսացել է: Գուցե հերոսը ինչ-որ կազմակերպության անդամ է եղել, որը պահանջելով կույր հնազանդություն՝ նրան զրկել է անհատականությունից ու դարձրել անանուն: Իսկ այժմ Ստենլին մեկուսացել է խորհելու կյանքի մասին ու վերահաստատելու իր ինքնությունը, սակայն Փինթերի հերոսները չեն կարող մտածել կյանքի իմաստի ու նպատակի մասին. ընդվզման յուրաքանչյուր փորձ ողբերգական ավարտ է ունենում: Ինչևէ, պիեսում առկա փաստերը մի շարք հարցեր են առաջադրում, որոնց պատասխանը մնում է հանդիսատեսի կամ ընթերցողի հայեցողությանը:

20-րդ դարի խելահեղ կյանքում՝ այդ սարսափելի, բազմադեմ ու բազմակերպ աշխարհում, անհատը մերժված է ու օտարված, լքված ու միայնակ: Փինթերը արտացոլեց մարդ արարածի բարդ ու հակասական ներաշխարհը, ընդգծեց անհատի դրաման, աշխարհի մասին նրա հայացքներն ու պատկերացումները: Կյանքի ողբերգականությունը բացահայտելու համար դրամատուրգը ներկայացրեց մարդուն՝ իր առօրյա հոգսերով ու խնդիրներով: Նրա բարդ ու բովանդակալից աշխարհը, շոշափած բոլոր առանցքային թեմաները, որոնք ողջ դարաշրջանի նկարագիրն են, բացահայտում են արդի անգլիական և համաշխարհային դրամատուրգիայի

²² Տե՛ս՝ **Billington M.**, նշվ. աշխ., էջ 82:

²³ **Pinter H.**, նշվ. աշխ., էջ 87:

²⁴ **Великовский С.** Грани "несчастливого сознания". Театр, проза, философия, эссеистика, эстетика Альбера Камю. М., 1973, с. 48.

²⁵ **Esslin M.**, *The Theatre of the Absurd*, New-York, 1969, p. 238.

²⁶ **Gussov M.**, *Conversations with Harold Pinter*, New York, 1996, p. 76.

գարգացման միտումներն ու գաղափարագեղարվեստական որոնումների շրջագիծը:

Բանալի բառեր – ճգնաժամ, վախ, օտարվածություն, միայնություն, սպառնալիք

НАИРА ЕЛИНЯН – Драма современного человека в пьесе Гарольда Пинтера "День рождения". – После Второй мировой войны Англия переживала духовный кризис, и Г. Пинтер создал трагический образ современного человека, дал достоверную художественную картину своего времени с его духовным упадком и исканиями. Драматург изобразил пограничные кризисные ситуации, в которых оказался человек. В его пьесах возникает образ одинокого беспокойного вечного скитальца, отчуждённого от социума маргинала, растерявшегося во враждебном и равнодушном мире, чьи помыслы и чаянья связаны с поисками надёжного пристанища, воплощённого в понятии “дом”. Пинтер нарисовал сложный и противоречивый внутренний мир личности, высветил трагедию индивида, его взгляды и представления об окружающем. Полнее всего эти черты его творчества воплощены в пьесе “День рождения”.

Ключевые слова: кризис, страх, отчуждённость, одиночество, угроза

NAIRA YELINYAN – The Drama of the Contemporary Man in the Play "Birthday" by Harold Pinter. – After the World War II England was in spiritual crisis, and Pinter succeeded in drawing the tragic picture of a contemporary man describing in exact colours the crisis and inner search of his century. The playwright pictures those critical states in which the individuals find themselves: the human being is lonely, troubled, alienated and secluded from the society, confused and frightened in the enemy world, he is always in a search of a home – a safe shelter. Pinter has reflected the complex and controversial inner world of the human being. He succeeded in emphasizing the drama of an individual, their views and perceptions that are well presented in Pinter's ‘Birthday Party’.

Key words: crisis, fright, alienation, loneliness, menace

ՄՈՒՇԵՂ ԳԱԼՇՈՅԱՆԻ ԱԿՆԱՐԿՆԵՐԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

ԶՈՒԽՐԱ ԵՐՎԱՆԴՅԱՆ

Գրական աշխարհում իր ուրույն ավանդույթները ստեղծած ակնարկային ժանրը, սկսած XIX դարից, մեծ տարածում ունեցավ նաև հայ գրականության մեջ: Ձևաբովանդակային առումներով ժանրի զարգացումն իր որակներով առանձնացավ XX դարում՝ հատկապես ետպատերազմյան շրջանում, երբ գրականությանն ու արվեստին առաջադրվեցին նոր խնդիրներ: Հարկավոր էր շտկել պատերազմից խաթարված բարոյահոգեբանական արժեհամակարգը, վերաիմաստավորել սերունդներին փոխանցվելիք պատմաքաղաքական իրողությունները: Խնդիրների կարևորությունն էր թերևս պատճառը, որ «ետպատերազմյան շրջանի պոեզիայում խաղաղությունն ու աշխատանքն արտացոլվում են ոչ միայն որպես թեմա, այլև որպես գրական կերպար»¹: Այս առումով, հատկապես անցյալ դարի 60-70-ականներին, գրական հարուստ ժառանգություն է ստեղծվել նաև ակնարկային գրականության բնագավառում: Այս հոդվածի շրջանակում առանձնացրել ենք Մուշեղ Գալշոյանի ստեղծած ակնարկային գրականությունը, որում յուրատիպ դրսևորումներով են կերպավորված թե՛ խաղաղությունը, թե՛ աշխատանքը. հավելենք նաև՝ թե՛ *երգրի*՝ անցյալ չդարձող ցավն ու կարոտը:

Վավերագրական ստեղծագործության գեղարվեստականության սահմանների ինքնօրինակ ծավալումներով է Մուշեղ Գալշոյանը ստեղծել փոքր ծավալի մեջ գեղագիտական ներքին հավասարակշռությունը պահպանող իր ակնարկները, որոնք ժանրի՝ այսօր էլ իրենց կենսականությունը պահպանող կատարյալ արտահայտություններ են: Արդիաշունչ մնալուն, անշուշտ, նպաստում են ակնարկագրի նախընտրած նյութը, առանձնացված տիպական պահերի ընտրությունը և այն սոցիալական դաշտը, որտեղ գործում են հերոսները: Լրագրող ակնարկագրի գործունեության դիտարկումները ցույց են տալիս, որ նրա արտահայտած գաղափարները, տեսական, հրապարակախոսական հարցադրումները և կյանքում ունեցած դիրքորոշումներն ու դրանք կենսականացնելու հետևողականությունը ներդաշնակ միասնության մեջ են, որին նա հասել է ստեղծագործական մեծ նվիրումով ու ոգևորությամբ: Եվ այդ զգալի է ակնարկների մտահղացումից սկսած մինչև նրանց գոյավորումն ու ամբողջականացումը, լինեն դրանք ուրվանկարային («Անապատից քաղցրություն քամող մարդիկ», «Լեռնային քայլերգ»), դիմանկարային («Անձրևի մասին», «Մայրական կապով», «Անվախճան գիշերում ուղեկցող լույսը», «Նրա ձեռքերում դանակը կյանք է», «Ծիրանի ծառ»), թե ճանապարհորդական («Ծխասյունները», «Մի բաժակ թեյ», «Կանաչափ առվի երթը», «Նոր Կաղնուտը») տեսա-

¹ Ս. Աթաբեկյան, Հովհաննես Շիրազի քնարերգությունը, Եր., 1979, էջ 123:

կին հարող կամ երեք տեսակների բնորոշ հատկանիշները ներառող ակնարկներ:

Գալշոյանի ակնարկների գեղագիտական հիմնասկզբունքներից մեկը ստեղծարար, հայրենաշեն աշխատանքի ու հերոսների՝ իրենց գործին անմնացորդ նվիրվելու իրողությունը ներկայացնելն է:

Մեր ժողովրդի գոյապահպանման ամենագորեղ կռվաններից, ազգային կեցության բարոյահոգեբանական հիմնարկներից մեկը եղել և մնում է աշխատանքի և աշխատող մարդու նկատմամբ ունեցած վերաբերմունքը: Գարեգին Նժդեհը գրում է. «Երկրագործել դեռ այսօր էլ հայու համար նշանակում է՝ ազնուացնել բնութիւնը, եւ ուրախ պտղառատութիւն տարածել»²: Միիր-միթրայական այդ վեհ հասկացությունը աշխատանքի մասին գալիս է հեթանոս դարերի խորքից: Հարյուրավոր արծակ և չափածո գործեր կարելի է վկայակոչել, որոնցում փառավորվում են աշխատանքն ու աշխատավորը: Մեզանում ստեղծված աշխատանքային երգերի ինքնատիպ մշակույթի հիմքերը ձգվում են մինչև ժողովրդական բանահյուսություն. դրանք հորինվել են աշխատավորների, գյուղացիների և արհեստավորների կողմից, իսկ գրի են առնվել ու մշակվել 19-րդ դարի յոթանասունականներից: Հետագայում հայ գրականությունը աշխատանքային թեմաներով հարստացրել են տասնյակ բանաստեղծներ և արծակագիրներ. գրվել են բանաստեղծություններ, բանաստեղծական շարքեր, խորհրդային տարիներին՝ պոեմներ, ակնարկաշարեր, պատմվածքներ, անգամ վեպեր: Աշխատանքի ոչ միայն աշխարհաշեն էության, այլև հոգեկերտ բարոյականի՝ հայ մարդու ընկալումը, որ ձևավորվել, բյուրեղացել է դեռևս մեր էպոսի պատումներում ու ժողովրդական երգերում, փիլիսոփայական խորիմաստ բացահայտումով է ներկայացվում, օրինակ, Ավետիք Իսահակյանի «Հորս գութանը» պատմվածքի հետևյալ տողերում. «...Մեզ կսպանեն, հո՛ գութանն էլ չե՞ն սպանի. ես կշինեմ, հո չեմ քանդում, աշխարհը գութանի վրա է հիմնված, ողջ մնացինք, գութանը մեզ հարկավոր է, մեռանք՝ ով որ տանի, կարելի է արդար աշխատանքի սեր զարթնի մեջը, ինձ էլ ողորմիս տա, ի՞նչ իմանաս աշխարհիս բանը...»³: Տեղին է Գարեգին Նժդեհի ասույթներից մեջքերել ևս երկուսը. «Մեր երկրագնդի վրայ երկու ուժեր չեն յոգնում – ժամանակն ու հայը՝ մեկը կործանելով, միւսը՝ վերաշինելով»⁴, «Յաւերժանալ շինարարելով, ստեղծագործելով - ահա՛ հայկականը, չափազանց հայկականը»⁵:

Մուշեղ Գալշոյանի արծակում առանցքային տեղ ունեցող աշխատանքային թեման, սկիզբ առնելով ակնարկներից, լայնածավալ արտացոլվել է «Բովտուն» վեպում, փոքր ծավալումներով՝ պատմվածքներում: Հեղինակն անթաքույց համակրանքով է ներկայացնում բոլոր նրանց, ովքեր բացվող լույսի հետ սկսում են օրը՝ «դաշտի ցողաթաթախ ճամփաներին հպելով իրենց ոտքերը՝ «բարի լույս», «բարի գիշեր» ավետող ձեռքերի նման» («Քանի տարի են աշխատե՞լ. ինչքան միտքս գալիս է՝ բանում

² Գ. Նժդեհ, Հատընտիր, Եր., 2001, էջ 257:

³ Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հ. III, Եր., 1975, էջ 327:

⁴ Գ. Նժդեհ, նշվ. աշխ., էջ 257:

⁵ Նույն տեղում, էջ 258:

են: Ուրիշ բան չեմ արել, միայն կոլտնտեսությունում բանել եմ»⁶): Բոլոր ակնարկների առանցքը կազմում են «սրտի չափ փոքր, աշխարհի չափ մեծ» Հայաստանի հատկապես գյուղական համայնքների սոցիալ-տնտեսական կյանքում տեղի ունեցող իրադարձություններն ու աշխատավոր մարդու գոյաբանական, բարոյահոգեբանական բազմաբնույթ հարցերն ու խնդրները: Հողի աշխատավորների, նրանց հոգսերի ու մտահոգությունների, մտածումների ու ապրումների, զարմանալի դիմացկունության ու կենսաստիքային մասին պատմող ակնարկները հիմնականում անփոփոխված են «Քեզ վերևից չպետք է նայել» ժողովածուում:

60-ականներին իր ինքնությունը նոր ժամանակներում ձևավորող իդեալ-հերոսին սպասող հայ գրականությունը, ազատվելով ավելորդ պատեթիզմից ու կեղծ արժեքներ գովերգելու պարտադրանքից, հայացքն ուղղում է դեպի ազգային խնդիրներ տանող ճանապարհը և ստեղծում նախադրյալներ՝ վերագնահատելու մշակութային շատ արժեքների ազգային բովանդակությունն ու պատմական կարևորությունը. ոգու գեղարվեստականացման խնդրի արժարժումները ստանում են նոր որակներ: Այդ որակները ինքնատիպ դրսևորումներով են արտահայտվում Գալշոյանի արձակում: Նրա լրագրողական կյանքի ճանապարհները, անցնելով համարյա ողջ Հայաստանով, խաչվել են ժամանակի՝ մեծ ու փոքր կարևորություն և հնչեղություն ունեցող իրադարձությունների կենտրոնում: Այդ ուղևորությունների ընթացքում հանդիպած ստեղծող ու արարող մարդիկ էլ դարձել են նրա վավերագրական գրականության հերոսները, որոնք խորապես հետաքրքիր բնավորություններ են՝ դժվարին ճակատագրով, որի պարտադրանքով էլ հաճախ ընտրում են կյանքի որոշակի որակներ ունեցող գոյած:

Ակնարկագրի թեմատիկ հետաքրքրությունների շրջանակն էլ է բազմաբնույթ: Ինչ խոսք, ակնարկների մեծ մասը առավոտից երեկո չարչարվող հոգսաշատ գյուղացիների մասին է, և դա պատահական չէ, նախևառաջ եթե հաշվի առնենք գյուղատնտեսի նրա մասնագիտությունն ու այն անսահման նվիրվածությունը, որով նա կապված էր հող ու ջրին, հանդ ու դաշտին և այն մեծ սերը, որ տածում էր *խամհատելով տափ բացող*, սարերից տնատեղ ու տնամերձ խլող, քար ու քեռճից ապրուստի միջոցներ պոկող հողոտ ու հողահոտ գյուղացիների հանդեպ: Ինքն էլ հողի մարդ էր՝ հողի հոտից խենթացող ու հողահոտ: Ընդհանրապես Գալշոյանի բոլոր ակնարկների թեմատիկ ենթաշերտերում հողի՝ որպես ամենայն կենսականի արարչական նախահիմքերից մեկի ոգեղենացման խորհուրդը կա: Այդուամենայնիվ, ակնարկների թեմատիկ շրջանակը չի սահմանափակվում գյուղաշխարհով. բանջարագործների, այգեգործների, տրակտորավարների և մեխանիզատորների կողքին նաև հորատող թունելագործներ, տարբեր զբաղմունքների ու մասնագիտությունների տեր մարդիկ են (ուսուցիչ, մանկապարտեզի դաստիարակ, բժիշկ...), որոնց համար աշխատանքը հարկադիր կեցություն, բարոյական պարտավորություն չէ միայն. այն նաև ինքնահաստատման, բնության ուժերին դիմակայելով՝ հզորանալու և

⁶ Մ. Գալշոյան, Քեզ վերևից չպետք է նայել, Եր., 1990, էջ 27: Այսուհետև այս ժողովածուից մեջբերումները կտրվեն շարադրանքում միայն էջանշումով:

ինքնավստահություն ձեռք բերելու միջոց է:

Ակնարկների գեղագիտական հիմնասկզբունքներից մեկն էլ հայ մարդու ներունակությունների, ստեղծարար եռանդի անպարփակ լինելու իրողությունը ներկայացնելն է: «Անանուն» դրոշմանիշներով» ակնարկը Այգեվանի կոլտնտեսության մեքենատրակտորային բրիգադի բրիգադավար Սերյոժա Դավթյանի նորարարությունների մասին է: «Սերյոժա Դավթյանը ո՛չ ինժեներ-մեխանիկ է, ո՛չ տեխնիկ-մեխանիկ և ո՛չ միջնակարգն է ավարտել: Նրա դպրոցը կյանքն է եղել»: Եվ ընդամենը յոթերորդ դասարանի կրթություն ունեցող, բայց խոր մտածողական երևակայությամբ օժտված, ինքնահայեցող այս մարդը ամենակատարելագործված մեխանիզմին ու մեքենային հարցական հայացքով է նայում. նա «շատ դեպքում աքսիոմների հետ նաև համաձայն չէ, մտածում է և փորձում ապացուցել, որ 2 անգամ 3 «մեկ-մեկ» նաև... հինգ է անուն» [13]:

Բազմադրվագ կամ միջադեպերով ակնարկների ամբողջականությունն ապահովվելու գործում կարևոր դեր ունեն հեղինակի՝ տարախոսք նյութն ի մի բերելու, ընդհանրական մտքի հանգեցնելու հմտությունն ու խոսքային ներդաշնակ գուներանգ ստեղծելու կարողությունը. հատկանիշներ, որոնցով մեծապես օժտված էր արձակագիրը և վարպետորեն էր օգտագործում՝ իրագործելու իր գեղագիտական նպատակը. այն է՝ կյանքի վավեր դեպքերն ու իրադարձությունները ընդհանրացնելով և գեղարվեստականացնելով՝ դարձնել ոչ միայն ժամանակի սոցիալ-հոգեբանական, գոյաբանական բազմաշերտ խնդիրներ արտացոլող, այլև հասարակական կարծիք ձևավորող, ուղենշող-ուղղորդող ստեղծագործություններ:

Ակնարկների աչքի ընկնող գեղագիտական առանձնահատկություններից է հեղինակի կերպարաստեղծման արվեստը: Հերոսներն աչքի են ընկնում բնավորության տիպական գծերով, ընդհանրացումներով. նրանց խոսքի գեղագիտական նպատակները, բնավորությունների բացահայտումը, ժամանակի պատկերային արտացոլումը, խոսքային բնորոշիչ տարրերի հայտնաբերումը և ոճավորումը մարմնավորված են կատարելապես: Իրականությունը, որտեղ ապրում, գործում են նրանք, հանգամանքները, որոնցով պայմանավորվում են նրանց լավ ու վատ գծերն ու արարքները, պատկերված են բնաշխարհիկ ու տիպական բացահայտումներով: Սրանք առանձնահատկություններ են, որոնց ներքին միասնության մեջ էլ հավանաբար պետք է որոնել ակնարկագրի գեղագիտական աշխարհի ամբողջականացվող հմայքը:

Ակնարկների՝ բարոյագեղագիտական բարձր չափանիշներով ընտրված հերոսները ներկայացվում են իրենց սոցիալական ու բարոյական նկարագրով, ինչպես նաև ներաշխարհային և միջանձնային հակադրություններով.

«- Մի տափ չենք ունեցել, է՛, էն կողմի տափը, որ խլեցին, ելանք թագ մեկ էլ ճղոպրուտը բացեցինք:

- Բայց ո՞վ խլեց, Թունի ապեր:

- Ասում են՝ խռով ենք, իրար հետ չենք խոսում, անունը չեն տա» [16]:

Տողերի արանքում տեսնում ենք հերոսի ակնարկի թափանցիկությունը և ընկալում բուն իմաստը: Թունի ապերը բնաշխարհիկ անհատականություն է՝ իր բնավորության ու խոսքի հակասական դրսևորումներով: Սո-

վորաբար նման հակասականություններն ավելի ընդգծուն են դարձնում հերոսների գեղագիտական իդեալի գեղեցկությունն ու վեհությունը:

Գալչոյանը ինքնատիպ երևակայությամբ է մարմնավորել իր բազմապիսի տպավորությունները՝ անհատականացնելով և տիպականացնելով դեպքերն ու երևույթները, մարդկանց: Որտեղ որ տարել են նրան ճանապարհները, այնտեղ էլ՝ սովորական, իրենց հար և նման դժվարին օրերն ապրող մարդկանց մեջ, նրա տաղանդավոր գրիչը գտել է առանձնահատուկը, մարդկային ազնիվ, գեղեցիկ կերտվածքները, զգացել կենարար արարման գործունեությունն ու հմայքը, արտացոլել աշխատանքի բարոյագեղագիտական նշանակությունը մարդու բնավորության ձևավորման գործում:

Բնածին գրողական տեսողությունն ու զգացողությունը, հայրենի հողի, մարդու և երկնաստեղծ ամենայն գեղեցիկի նկատմամբ ունեցած անվերապահ սերն ու լուսավոր ընկալումները, աշխատավոր մարդով ինքնակերպ հիանալու հատկանիշը մեծապես օգնել են լրագրող ակնարկագրին՝ խորհրդային համահարթող գաղափարաբանության ոստայնից դուրս նաև դիտարկել մարդկանց ու նրանց արարքները և պարտադրված կեցության խորապես ձանձրալի կողմերը քողավորել տողերի արանքում՝ նյութը ոչ միայն կարդալիք, այլև գեղագիտորեն արժևորված և մնայուն դարձնելով: Հեղինակի խորհրդածություններով հագեցած «Մի բաժակ թեյ» ակնարկը, օրինակ, որ սարահարթի ճակնդեղագործ աղջկա մասին հավանաբար նախապես պլանավորված թերթային գովաբանական մի գրվածք պիտի լիներ, *սարքված*, *սիրունացված* մի պատմություն, խորհրդանիշ-պատկեր վերնագրից սկսած՝ ակնարկագրի գրչի տակ վերածվել է խոհ-մտորումների, հոգեբանական մտածումներով ու զեղումներով հյուսված մի փոքրիկ պատումի, որը ոչ պակաս արվեստավոր փոփոխակով օգտագործվել է հեղինակի «Մամփրե արքան» պատմվածքի մեջ: «Լսիր, Ֆենյա, երբ դու փոքր ես եղել... մտածել էս ճակնդեղագործուհի դառնալու մասին: ...Փիտեմ, չես մտածել: Գիշտ չեն ասում, թե՛ Պողոսը մանկուց էր երագում այգեգործ դառնալ, այսինչը՝ ծխախոտագործուհի, այսինչը՝ կթվորուհի... Մանկական ու պատանեկան տարիների երազանքները արևից վառ են լինում, աստղերի չափ հեռաձիգ: Է՛, անսկիզբ ու անվերջ են եղել քո երազները: Եվ չես մտածել դաշտի ճանապարհը՝ քո կյանքի ճամփան դարձնելու մասին: ... Ընտանիքը մեծ է եղել... օգնել էր պետք: Եվ դու բռնել ես դաշտի ճանապարհը» («Մի բաժակ թեյ») [53]:

Մի կողմից՝ մարդու կարող ներուժի կենսագործմանը խոչընդոտող իրականությունն է, մյուս կողմից՝ այդ իրականության մեջ ներթափանց երազայինը: Նշված երկու գործերում էլ կանանց համար աշխատանքը կեցության հարկադրանքով բարոյական պարտավորության վերածված գոյածն է, որ, ցավոք, նրանք բնականոն են համարում, և պատահական չէ, որ սարահարթի ճակնդեղագործուհին անկեղծ զարմանում է, որ իր մասին ուզում են թերթում գրել. «Ի՞նչ գրեք... Ես ո՞վ եմ, ես...դպրոցն էլ չեմ ավարտել...»: Տարեկան 250 ցենտներ բերք հավաքող աղջկա այդքան ցածր ինքնագնահատումը ժամանակի սոցիալ-հոգեբանական խեղաթյուր ընկալումների արդյունք էր, որ ցավով վավերագրում է ակնարկագիրը:

Իրենց իմաստով ու նշանակությամբ կենսականորեն շատ սովորական ու առօրեական թվացող երևույթները, արձակագրի կողմից մակածվելով և դառնալով հայեցողության նյութ, վերածվում են փայլուն մտահղացումների («Ձեռքերը», «Անապատից քաղցրություն քամող մարդիկ», «Կանաչափ առվի երթը», «Հայի պես հին է երգը հայոց», «Ծիրանի ծառ», «Լուրթ երկնքի տակ, մայր հողի վրա» և այլն), որոնցում աշխարհի ու կեցության սկզբունքների գալչոյանական հայեցությունները արտահայտվում են ինքնօրինակ ընկալումներով, որոնք վերածվում են բնության և հողի՝ որպես հայրենիքի արքետիպի, և արարող մարդու պաշտամունքի: Նրա բոլոր գործերում առկա է տիեզերական այդ երեք հրաշագոյի կենսաբանորեն ներծույլ ու ներթափանց լինելու գաղափարը: Ազգային ինքնության խորհուրդը մարմնավորող հող հայրենիի կորուստը ինքնության կորուստ է անշուշտ, որ գոյապահպանական ազգային ներգագսողությամբ ու ներքնատեսությամբ օժտված հայ մարդը հրաշալի զգում է և մշակում ինքնապահպանման մաքառումների իր ռազմավարությունը, որն առաջին հերթին ապագային ինքնավստահորեն նայելու համար դառնում է հոգեբանական անհրաժեշտություն: Հայրենի հողի գոյաբանական դերի կարևորության ըմբռնումը միշտ եղել է մեր գաղափարաբանության հիմնաքարը: Նրա պաշտամունքը մեր ժողովրդի հոգևոր կեցության անբաժանելի մասն է, որի կորուստը սկիզբն է ֆիզիկականի կործանման, հավասար է չգոյության: Հողը, բնությունն ու հայրենի տունը վճռական դեր ունեն գյուղացու կյանքում. նրա հայրենիքն են: «Հայրենի երկիրն առաջին հերթին հայրենի տունն է, մանկության հարազատ վայրերը, և հայրենական կարոտը այդ կոնկրետությունից է սկիզբ առնում ու ընդհանրանում»⁷, գրում է գրականագետ Վ. Գաբրիելյանը: Հողի, բնության ու հայրենի տան գաղափարները մեզանում հարատևում են իբրև մտածողության արքետիպեր. դրանք յուրաքանչյուր հայի ներաշխարհում ծվարած անառարկելի արժեքներ են, որոնք իրենց հիմնարար տեղն ունեն նաև Գալչոյանի գեղագիտական աշխարհում («Աշխարհի համար մեր գյուղը միայն մի կետ է, իսկ ինձ համար, համագյուղացիներիս, իմ հարևան Հակոբի համար՝ Կաթնաղբյուրը աշխարհի կենտրոնն է» [159]):

Որպես ակնարկների գեղագիտական առանձնահատկություն կարելի է նշել նաև բնության և հերոսների հոգեփիճակները համագույն ու համահունչ ներկայացնելու սկզբունքը. մարդ-բնություն, բնություն-մարդ շղթան ակնարկներում ներկայանում է որպես անկտորակելի մի հյուսվածք. մարդը ներծուլվում է բնությանը, բնությունն էլ իր հերթին է թափանցում մարդու ներսը, իրենից մաս տալիս նրան («Աշխարհի այդ անկյունն իր բաժին արևից մի փունջ շող է ձգել լուսամուտից ներս՝ Հակոբի համար: Բռնել է մի օր այդ շողից Հակոբն ու դուրս եկել տանից... տան կողքով անցնող կանաչ առվի հետ իջել է փողոց...» [158]):

Մուշեղ Գալչոյանի կենսահայեցողությունն ու բնափիլիսոփայությունը մեկնաբանելու համար պիտի փորձենք բացահայտել հոգևոր այն տարածությունը, որտեղից սկիզբ են առնում դրանք: «Ասում են իմ գրքերում իրենց երկրորդ կյանքն են ապրում մեր բնաշխարհի շնչավոր և անշունչ

⁷ Վ. Գաբրիելյան, Դասականների ժամանակը, Եր., 1997, էջ 78:

կերպարները»,- մի առիթով ասել է Համո Սահյանը: Գալշոյանի գեղագիտական աշխարհում այնքան շոշափելի ու զգայական է նրա կերտած Սասնա աշխարհը, ու այնքան միաձուլվել են գրողի էությունը, *էրգիրն* ու *էրգրացիները*, որ կարող ենք համարձակորեն ասել՝ այդ աշխարհում էլ «իրենց երկրորդ կյանքն են ապրում» հայոց, մասնավորապես՝ Սասնա բնաշխարհի «շնչավոր և անշունչ կերպարները»: Ահավասիկ. «Մարութա սարի գլխին գալարուն պար բռնեցին արնագույն բոցերը: Գյուղում դուռ ճռնչաց: Ոչ ոք չկանգնեց շեմին, չխաչակնքեց, չմոտեցավ աղոթարանի մաշված սալաքարին: ...Արշալույսը գնդակահարել էին, արնոտել դեմքը» («Անթեղված ոգի») [198]: Հակիրճ խոսք, և՛ մի մեծ ողբերգության կերպավորում:

Ակնարկներում նշանակալից տեղ ու դեր ունեն հայոց բնաշխարհի ստեղծագործական վերարտադրությունները՝ բնապատկերները, որ հեղինակը վրձնում է տաղանդավոր արվեստագետի նրբատես դիտումով ու խոր ըմբռնումով՝ արտահայտելով իր աշխարհայացքի, գեղագիտական իդեալի, բնության ընկալման առանձնահատկությունները:

Բնություն-մարդ ներթափանց կապի գեղագիտական անդրադարձումները գալշոյանական արձակի կարևոր առանձնահատկություններից են և գրեթե առանց բացառության առկա են բոլոր ստեղծագործություններում: ««Բնության պոետիկան» գունավորում է մարդկանց ներաշխարհը..., և բներանգը, գույնը, երևույթը խորհրդանշում են ներաշխարհիկ վիճակներ»⁸, - գրում է Ս. Աթաբեկյանը: «Բնության պոետիկայով» գունավորված մարդկային մի ներաշխարհի պանծացման ենք հանդիպում Գալշոյանի «Շուրթեր օրհնանքի և ճշմարտաբառ» ակնարկում: Բնության՝ մարդկանց պարզևած կենսականության⁹ գովքն է այս պատումի ներքին թեման, թե՞ այդ պարզևը բարիք դարձնող մարդու. թերևս երկուսն էլ՝ ներհյուս ու համանվագ:

Բնության, հայրենիքի, հողի պաշտամունքը հեղինակից է սկսվում, ապա անցնում իր ընտրած հերոսներին: Հայրենի եզերքով անսահման հիացմունքը Գալշոյանի գեղագիտական աշխարհի հիմնարար տարրերից է: Հայաստան աշխարհի լեռներն ու ժայռերը, գետերն ու առուները, դաշտերն ու հանդերը, օրվա պահերն ու տարվա եղանակները, երգն ու պարը, նվագը... ներկայացվում են պատկերավոր, նկարկեն ու գունեղ («Բազումի, Փամբակի, Գեղամա, Սևանի, Ջանգեզուրի... լեռնաշղթաները թև թևի տված «Բերդ պար» են բռնել արեգակի հետ, թաշկինակի փոխարեն ամպի ճերմակ ծվեններն են խելահեղ թափահարում» [7], «Կիրճերում ուղտաոտ ամպերի ճերմակ լռությունն է կաթկթում» [256]):

Գալշոյանի ակնարկների գեղագիտական արժեքը մեծապես պայմանավորված է արտահայտած գաղափարների հասարակական բովանդակությամբ: Հերոսների սոցիալ-քաղաքական, պատմական-հասարակական ըմբռնումներն արտացոլող գաղափարականությունը դառնում է ընդհանրացումների հիմք և օգնում կենսական բազում երևույթների ճշմարտացի արտացոլմանը:

⁸ Ս. Աթաբեկյան, Ակսել Բակունց. պատմվածքի վիպական աշխարհը, Եր., 1996, էջ 204:

Հայ հասարակության կյանքում իր հեղաշրջող դերով առանձնացող իրադարձություններից էր Արփա-Սևան ջրատարի կառուցումը, որի խնդիրն իր էությանը, նշանակությամբ և պատմականությամբ ժամանակի հայ հանրային ու քաղաքական կյանքի ուշադրության բևեռակետն էր: Կառույցի նշանակության ընկերային ու պատմական ընկալումները՝ կապված հայության կենսապահովման ապագայի ու ճակատագրի հետ, լավագույնս արտահայտված են «Պորտալար» խորհրդանշական վերնագրով ակնարկում: Մայր հողը սնուցող գետ ու առու թե արհեստական ջրատար հեղինակը համարում է պորտալար («Հենց ինքը՝ առվին ջուր բերող Հրագդանը գետ չէ, մի ծոմոված պորտալար է, Սևանը՝ Վահրամի ստվերի տակ կուչ եկած վազին կապող» [259]). այս մետաֆորը ձեռք է բերում սոցիալական բովանդակություն և դառնում պատումի հյուսման հիմնական առաջնդիչը: Բազմաշերտ ծավալումներով այս ակնարկը ոչ միայն մայր հողին կառչած, այլև նրա ընդերքին ապավինած, պապակ հողերին ջուր հասցնելու համար քար ու ապարի հետ իրենց կռիվն անող, մաքառող մարդկանց մասին է պատմում, որոնք «...Քանդել են, քար է դուրս եկել: ...Հորատել են՝ ապար: Հարյուր մետր ընդերք են իջել՝ ապար: Շարունակել են՝ ապար...» [257]: Միևնույն է, չեն դժգոհել. շարունակել են հորատել, քանի որ իրենց ազգային գաղտնագրով համակարգված արժեքներից մեկն էլ բխեցված է մեծ իմաստասեր Եզնիկ Կողբացու այն իմաստախոսությունից, թե՛ «Գոհունակությամբ աշխատելը առանց պսակի չի մնա»: Ակնարկի գաղափարական ուղղվածությունը, հասարակական նպատակն ու նրանում հաստատված բարոյագեղագիտական իդեալը բխում են գրողի դավանած արժեհամակարգից, նրա՝ կյանքի զարգացման օրինաչափությունների անխեղաթյուր ըմբռնումներից: Մեջբերենք մի դրվագ, որտեղ ենթիմաստային անթաքույց հեզմանքով հեղինակն արտահայտում է իր անհանդուրժողականությունը մեր երկրի ընդերքի կազմակերպված թալանի հանդեպ. «Մոտ հարյուր տարի առաջ ֆրանսիացիները եկել են Հայաստան, չափչփել, հոտոտել, հասել են Ղափան, կանգնել լերկ մի սարի մոտ: Փորփրել են, հանել այսպիսի ապար, թափել: Փորփրել են, տարել շերտ-շերտ պղինձ, ապարը թափել:

Թե տարած պղինձը ինչ են արել, չգիտեմ, բայց թափած ապարը քայքայվել, դարձել է հող. դափանցիները ցորեն են ցանում:

Ձեր հորն օղորմի, ինչո՞ւ շատ պղինձ չէք հանել. դափանցիները կարգին հող կունենային, ինչո՞ւ Վայոց ձորում էլ, հենց Արփայի մոտերքը, Կեչուտի սարերում, չէք որոնել՝ պղինձ, արծաթ, ոսկի: Որոնած լինեիք, գտած, կրած լինեիք իշաբեռ-իշաբեռ ոսկի, արծաթ, պղինձ: Հիմա գուցե կունենայինք մի քանի քայլ թունել և անպայման՝ մի քանի արտ հող» [258]: (Նույն քաղաքացիական կենսահայեցությանը հանդիպում ենք նաև «Ազռավաքար» էսսեում):

Ակնարկների զգալի մասի սոցիալ-հասարակական բովանդակությունը ենթաշերտային է՝ խոհաքնարական գեղումներով քողարկված: Այդպիսինն է, օրինակ, «Անձրևի մասին» ակնարկը, որում *անձրևը* գեղարվեստական միջոց է՝ արտահայտելու հայրենամվեր հայուհու կերպարի նուրբ կոթողայնությունը: Հերոսը ժամանակի իրականության մեջ ապրող ազգա-

յին, քաղաքացիական, ներաշխարհային ու նաև անանձնական արժեքներ կրող է. նրա դավանանքի հիմնարար գիծը, ամենից առաջ և ամենից վեր, իր խղճի առաջ պատասխանատու լինելն է: Նրա կերպարով ակնարկագիրը հիշեցնում է մարդու առաքելության ամենամեծ խորհուրդը՝ նմանին կարեկից ու զորակից լինելու բարոյականով ապրելը:

Ազգի հոգևոր արժեքներից մեկն էլ նրա վերաբերմունքն է տոհմի մեծերի, նախնիների ու անցյալի նշխարված հիշատակների նկատմամբ: Այդ արժեքի անկորուսանելի լինելը ընդգծուն պատկերավորումով է տրվում «Կանաչ, վիթխարի ընկուզենու տակ» ակնարկում: Մասնավոր փաստի հասարակական իմաստի բացահայտմամբ արձակագիրը կարողանում է իրականացնել ակնարկի գեղարվեստականությունը պայմանավորող հիմնական խնդիրներից մեկը՝ տիպականի ցուցադրումը անհատ-իրականություն կապի դրսևորման մակարդակում: Ակնարկում իր բնավորությամբ առանձնանում է Թունի ապերը՝ իր կերպարի մեջ խտացնելով տիպիկ նահապետական հայ գյուղացու բնավորության ու խառնվածքի, պահելաձևի դրսևորումներ: Ո՞ւն ծանոթ չէ ծերերի՝ իրենց տոհմի տղամարդկանց չափազանցված քաջությամբ հպարտանալն ու հընթացս մի քիչ էլ գլուխ գոլելը, սեփական խոսքն արժևորելու համար դանդաղեցնելը, պատասխանը ձգելն ու հարցի նպատակը ճշտելու, ժամանակ շահելու համար ասելիքը սարուձոր գցելը, մանկորեն խորամանկելը, կռվազան տոնը, իմաստախոսելը, խոսքը խրատով համեմելը... Գծեր, որ կգտնենք բազմաթիվ հեղինակների կերպավորած գյուղացիների մեջ՝ անկախ գործի ժանրային տեսակից: Թունի ապերը, օրինակ, թունանյանական լուռեցի ծերերին հիշեցնող բնաշխարհիկ հերոս է («Չողը որ անտառից խլեցինք, չէ՞, Սաքին հրացան պատրաստեց, ու էլ ոչ մեկը մոտ չեկավ մեր հողին», կամ՝ հարսի խոսքից, թե Սաքի ապերը մահացել է, ծերունին վիրավորվում է. «Մահացել չի, է՛... Չաճարկուտի ճղոպուրի ծառը տեսե՞լ ես... Սաքին էդ ճղոպրին է»: Ասում է ու խռոված երեխայի պես շուռ գալիս, դեմքն անում պատի կողմը և խոսքը փակում) [17]:

Ծերունու խոսքի մեջ հնչում է նաև մի կարևոր գաղափար. հողը զենքով է հնարավոր պահել («Սաքին հրացան պատրաստեց, ու էլ ոչ մեկը մոտ չեկավ մեր հողին»): Ակնարկի ներքին դաշտ բերվող այս գաղափարը մեզ պես ու մեր չափ հին է: Հին է նաև բոլոր ժամանակների մեր մեծերի՝ ազգի զոյապահպանական հարցերում զենքի պաշտամունքը որպես կեցության հոգևոր արժեք որդեգրելու պատգամը: Հեղինակի գեղագիտական աշխարհում զինապաշտության գաղափարը հնչում է որպես չարիքի դեմ պայքարելու, զենքով հողը պահելու և պաշտպանելու հղագրում սերունդներին:

Ակնարկագիրը նուրբ կենսազգացողությամբ, խոհափիլիսոփայական ինքնատիպ ընդհանրացումներով է անդրադարձել նաև ինքնության ուղիները տառապանքով փնտրող հայրենադարձներին վերաբերող թեմաներին՝ դրանք ներկայացնելով նոր կացութաձևի, նոր ժամանակի ու տարածության մեջ: Թեմայի արժարժունը նորից առիթ էր տակնուվրա անելու ցավի ու կարոտի անթեղը, որ կենսականորեն նրանից անբաժանելի էր, և նորից գեղարվեստորեն մարմնավորելու այն մեծ նվիրումն ու սերը, որ

զգում էր Սասնա աշխարհի՝ իր կենսաբանական ներհայաց դիտողականությանը ստեղծած *էրզրի՝ իր «արմատների երկրի», իր «կարոտների երկրի»*⁹ հանդեպ: Ինչքան էլ փիլիսոփաները պնդեն, թե մարդու մտածողությունը սոցիալ-մշակութային երևույթ է, և ժամանակաշրջանի ու տարածության փոփոխության հետ միասին այն նույնպես փոփոխվում է, միևնույն է, ժխտելի չէ նաև մետաֆիզիկական այն դատողությունը, թե՝ «կա մի բան՝ արմատները, որը երբեք չի փոխվում, այն ծնվում և մահանում է քեզ հետ»*: Եվ այդ անփոփոխականի չանցյալվող հիշողությունն է, որ ծնում է մեծ թախիծ ու կարոտ: Գալշոյանը այդ թախիծի կենսաբանական կրողն էր և չէր կարող շրջանցել ու այն չդարձնել իր գեղագիտական աշխարհի կարևոր մասերից մեկը: Մարիո Վարգաս Լյոսան ասել է. «Իմ ներքին կյանքը կառուցված է այն ամենի շուրջ, ինչ գրում եմ և ինչ գրելու եմ»¹⁰: Իսկ Գալշոյանի ներքին կյանքի կառուցի հիմքից անբաժանելի անփոփոխականներն էին *էրզրի* կորստյան ցավի պատմական և կարոտի կենսաբանական հիշողությունները:

Հարկ է նաև նշել, որ Գալշոյանի ակնարկները հարուստ են ապագայի հղագրումներով. ինչքանով այսօր կենսականորեն անհրաժեշտ պատգամ չէ, օրինակ, «Գարնան հյուրընկալները» ակնարկի «Հովիտում» ենթավերնագրված պատումում ներկայացվող այն դրվագը, որտեղ կարդում ենք, որ Հովիտ գյուղի կոլտնտեսության վարչության անդամները կանչել են հովիվ Ռաֆիկին, ստիպում են նոր տուն կառուցել՝ խոստանալով բոլոր հարցերի ու խնդիրների լուծումներին օգնել-օժանդակել: Եվ հնչում է արժեհամակարգ ձևավորող հղագրերից մեկը՝ «Մի օր տունդ փուլ կգա, ողջ գյուղը կընկնի մեղքի տակ» [89]: Կամ կոլտնտեսության վարչությունը որոշել է Հայրենական պատերազմի հաշմանդամ Լյուդվիգ Կարապետյանի համար «հանրային միջոցներից տուն կառուցել». «գյուղում հին տուն չպիտի մնա» [89]: Այդ առիթով կոլտնտեսության վարչության երիտասարդ նախագահ Սամսոն Խաչատրյանի ասած խոսքը ևս հնչում է որպես հղագիր՝ «Մարդու մասին եթե չմտածեցիր, գործ էլ չես կարող պահանջել» [90]:

Ակնարկներում Գալշոյանի արտահայտած հայրենանվեր գաղափարները կյանքի կոչող հերոսները դարաշրջան պատկերող ու կերպավորող անհատականություններ են, որոնք, ունենալով ժամանակի իշխող մտայնությունն ու հոգեբանությունը, բավական լայն կտավով ներկայացնում են հայ իրականության կենսականորեն հազեցած իրադարձությունները: Այս առումով գրողի ստեղծած ակնարկային գրականությունը կարող ենք համարել իր ժամանակի պատմության էության գեղարվեստական սեղմագրումն ու ամփոփումը, որ նա կատարել է ինքնօրինակ ձևով՝ խոր դիտողականությամբ գեղարվեստականացնելով այն նոր որակները, որ առաջանում էին հայ ժողովրդի աշխարհընկալման ու սոցիալական հիշողության - մեջ և կերտում ազգային ինքնագիտակցության նոր կերպ, դառնում նորօրյա կեցության ու լինելության հիմք:

⁹ **Ֆ. Բախչինյան**, «Երևանյան սոնատ»՝ հայրենյաց նվագարանի համար, «Գրական թերթ», թիվ 1(3146), 1 փետրվարի, 2013:

* Քաղված է հայտնի կինոռեժիսոր Կարեն Շահնազարովի հարցազրույցից: («Ազգ», թիվ 5(167), 28 մարտի, 2014):

¹⁰ newmag.am/Mario-vargas-Ilosa/

Բանալի բառեր – ինքնօրինակ, արդիաշունչ, ուրվանկարային, աշխարհաշեն, հոգեկերտ

ЗУХРА ЕРВАНДЯН – Эстетический мир очерков Мушега Галшояна. – В статье, созданной на основе очеркового наследия М. Галшояна, рассматривается присущее писателю восприятие бытия, созидательного труда и в особенности природы, родной земли, приобретшей под его пером значение архетипа. Герои своеобразных, истинно писательских очерков Галшояна – это люди, наделённые чертами символа. В них отразилась эпоха, присущие ей мышление и психология. В очерках Галшояна выразительно запечатлелась насыщенная и многогранная панорама современной ему армянской действительности.

Ключевые слова: *своеобразие, дыхание современности, обустройство мира, созидание души*

ZUKHRA YERVANDYAN – The Aesthetic World of Mushegh Galshtoyan's Essays. – Having studied the essay literature created by Galshoyan, in the article Z. Yervandyan presents Galshoyan's conceptions of the principles of world and existence, the role of the homeland constructing work in them, as well as those meditations of the author that underline his worshipping love to creating people and to the nature, to the earth – the archetype of homeland. The author of the article mentions that the heroes of Galshoyan's essays are the persons-symbols depicting some epoch: they deeply carry the psychology and mentality of ruling time period and by this means, for the interested one, they may depict on a very wide canvas the panorama of Armenian existential reality of that period, with geographically multisided spreading.

Key words: *original, contemporary, outlining, development of the world, creation of soul*

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

ԱՐՏԱՇԵՍ ՍԱՐԳՍՅԱՆ

Հայտնի է, որ շարահյուսական կապակցման եղանակներից մեկը համաձայնությունն է: Աշխարհի լեզուներում համաձայնության դրսևորման զանազան ձևեր կան: Դրանից բացի՝ համաձայնության դրսևորումը կարող է տարբեր լինել նաև լեզվի զարգացման փուլերում (հմնտ. գրաբարի ու աշխարհաբարի համաձայնությունը): Համաձայնությունը ուսումնասիրել են շատ լեզվաբաններ, առանձին-առանձին քննել այդ եղանակով կապակցվող միավորների հարաբերությունները՝ հանգամանորեն ներկայացնելով եղած օրինաչափություններն ու դրանցից շեղումները: Սակայն, այս ամենով հանդերձ, կան շատ հարցեր, որոնք, մեր կարծիքով, կարոտ են ուսումնասիրության կամ առնվազն նորովի քննության: Այստեղ չանդրադառնալով դրանց բոլորին՝ կիսոսենք միայն մեկ հիմնական խնդրի՝ համաձայնության բնորոշման մասին:

Շարահյուսությանը նվիրված տարբեր ուսումնասիրություններում կան համաձայնությանը վերաբերող մի շարք սահմանումներ, իսկ երբեմն էլ լեզվաբանները համաձայնությունը ներկայացնում են առանց ընդհանուր բնորոշման: Այսպես՝ Ա. Այտընյանը համաձայնությունը քննում է առանց սահմանելու: Նա գրում է. «Համաձայնութիւն երկու տեսակ է. 1. Անուան մը իւր բային հետ, եւ 2. Անուան մը ուրիշ անուան հետ համաձայնիլը»¹: Մ. Աբեղյանը համաձայնությունն այսպես է սահմանում. «Համաձայնությունը, որ հիմնված է բառերի ներունակության տրամաբանական հարաբերության վրա, լինում է բառերի *ձևով*, այսինքն իրար հետ կապակցվող բառերը, լրացումն ու լրացյալը դրվում են թվով, դեմքով և հոլովով միակերպ»²: Հետագա աշխատությունների մեծ մասում բերվում են մոտավորապես նույն սահմանումները, որոնք ընդհանրացնելով՝ կարելի է ներկայացնել այսպես. համաձայնությունը ստորադասական կապակցության այն եղանակն է, որի դեպքում ստորադաս անդամն ընդունում է գերադաս անդամի քերականական ձևը՝ հոլովը, դեմքը, թիվը³:

¹ Ա. Այտընյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Եր., 1987, էջ 141:

² Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 497:

³ Համաձայնության սահմանման վերաբերյալ տես՝ Ա. Գրիգորյան, Հայոց լեզու (դասագիրք միջնակարգ դպրոցի 8-10-րդ դասարանների համար), Եր., 1953, էջ 210, Պ. Պողոսյան, Հայոց լեզու, Եր., 1969, էջ 173, Ս. Աբրահամյան, Ն. Պառնասյան, Հ. Օհանյան, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Եր., 1976, էջ 298, Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու: Շարահյուսություն, Եր., 1987, էջ 49, Ս. Գյուլբուրդյան, Ժամանակակից հայերենի շարահյուսություն (պարզ նախադասություն), Եր., 1988, էջ 27, Ա. Պապոյան, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Եր., 2003, էջ 28, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Եր., 2008, էջ 7, նույնի՝ ճիշտ խոսենք հայերեն, Եր., 2012, էջ 82 և այլն:

Քերականական շատ աշխատություններում էլ, ինչպես նշվեց, համաձայնությունը քննվում է առանց ընդհանուր սահմանման. **հեղինակները ենթակայի, ստորոգյալի և համաձայնությամբ կապակցվող այլ անդամների** մասին խոսելիս միանգամից անդրադառնում են կապակցման այս եղանակի կոնկրետ դրսևորումներին⁴:

Համաձայնությանը վերաբերող սահմանումները մեծ մասամբ նույն սկզբունքով են կատարվել, թեև կան նաև փոքր-ինչ այլ մոտեցմամբ տրված սահմանումներ: Սակայն, այնուամենայնիվ, կան իրողություններ, որոնք ուշադրությունից դուրս են մնում: Նշենք, թե եղած սահմանումներով ինչու լիովին չի բացահայտվում կապակցման այս եղանակի էությունը:

ա) Նախ հաճախ ասվում է, որ համաձայնությունը կապակցման ստորադասական եղանակ է, որը մեր կարծիքով ընդունելի չէ մի քանի առումներով. կանդրադառնանք ստորև:

բ) Հաճախ նշվում է նաև, որ ստորադաս անդամն է ընդունում գերադասի քերականական կարգը կամ կարգերը: Սա բխում է վերը նշված այն դրույթից, որ համաձայնությունը կապակցության ստորադասական եղանակ է:

գ) Պարզ է, որ հայերենի քերականության ուսումնասիրությանը նվիրված աշխատություններում համաձայնությունը սահմանվում է առաջին հերթին հայերենում ունեցած հատկանիշներով, ուստի որպես համաձայնության միջոցով կապակցմանը մասնակցող քերականական կարգեր նշվում են թիվը, դեմքը և հոլովը: Սակայն, ինչպես կտեսնենք, համաձայնությունն ընդհանուր առմամբ բնորոշելիս պետք է նկատի ունենալ նաև լեզվական հնարավոր այլ կարգեր:

դ) Սահմանումներում հաշվի չի առնվում բազմակիության և հոգնակիության համաձայնական հնարավոր առնչությունը:

ե) Հաճախ նկատի չի առնվում նաև ավանդաբար նախադասության անդամ չհամարվող միավորների (օր.՝ կոչականի)՝ համաձայնությամբ կապակցվելու հնարավորությունը:

զ) Համաձայնությունը բնորոշվում է որպես միայն պարզ նախադասության անդամների (միավորների) կապակցման եղանակ, և հաշվի չի առնվում նաև բարդ նախադասությունների բաղադրիչների կապակցման գործընթացում համաձայնության ունեցած դերը, թեև երբեմն խոսվում է դրա մասին:

Առանձին-առանձին անդրադառնանք վերը նշվածներին:

ա) Կապակցման եղանակը, մեր կարծիքով, չի կարող բնորոշվել որպես համադասական կամ ստորադասական: Համադասությունը և ստորադասությունը լեզվական միավորների միջև եղած հարաբերություններ են, իսկ եղանակը՝ կապակցման ընդհանուր ձևը: Ինչպես նշում է Ռ. Իշխանյա-

⁴ Տե՛ս **Յ. Արսեն Կոմիտաս Բագրատունի**, Տարերք հայերեն քերականութան, Վենետիկ, 1874, էջ 161, **Յ. Թումանյան**, Հայոց աշխարհաբար լեզվի համառոտ ստուգաբանություն, Թիֆլիս, 1913, էջ 10, **Մ. Աբեղյան**, Գրաբարի քերականություն, Եր., 1936, էջ 160, **Վ. Առաքելյան**, Հայերենի շարահյուսություն, հ. Ա, Եր., 1958, էջ 182, **Յ. Ավետիսյան**, Որոշիչ-որոշյալ կապակցությունը գրաբարում, Եր., 1972, **Գ. Ջահուկյան**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974, էջ 416, **Ս. Աբրահամյան**, **Վ. Առաքելյան**, **Վ. Քոսյան**, Հայոց լեզու, 2-րդ մաս, Եր., 1975, էջ 177 և այլն:

ըը. «Կապակցման եղանակներ ասելով հասկանում ենք կապակցվելու առթիվ բառերի դրսևորած քերականական հատկանիշները. արդյոք կապակցվող երկու բառերն էլ ձևափոխվում են, թե՞ ոչ, կամ արդյոք կապակցվող բառերից միայն մեկն է ձևափոխվում, թե՞ այն էլ չի ձևափոխվում և այլն»⁵: Այսինքն լեզվական միավորները, միմյանց կապակցվելով, միմյանց նկատմամբ կարող են ունենալ տարբեր հարաբերություններ (համադասական և այլն), բայց դա կապակցման եղանակը չէ, այլ կապակցվող միավորների հարաբերությունը: Իսկ կապակցման եղանակը այն ձևն է, համաձայն որի՝ կապակցվել են լեզվական միավորները: Չետևաբար, լեզվական միավորները կարող են կապակցվել տարբեր եղանակներով և իրար նկատմամբ կարող են ունենալ տարբեր հարաբերություններ, այսինքն՝ կապակցման եղանակը և կապակցվող միավորների հարաբերությունը տարբեր իրողություններ են: Օրինակ՝ լրացման ու լրացյալի միջև հարաբերությունը ստորադասական է, բայց նրանք կարող են կապակցված լինել տարբեր եղանակներով (համաձայնությամբ, կառավարմամբ և այլն): Դրա համար էլ կարիք չկա համաձայնությունն անպայման բնորոշելու որպես կապակցման ստորադասական եղանակ, իսկ հետո վերլուծելու ենթակայի և ստորոգյալի կապակցությունը՝ փորձելով խուսափել դրանցից որևէ մեկը մյուսի նկատմամբ ստորադաս համարելուց, ինչպես հաճախ արվում է: Ենթական և ստորոգյալը ժամանակակից հայերենում կապակցվում են համաձայնությամբ, իսկ թե ինչպիսին է նրանց փոխհարաբերությունը, այլ հարց է, որի վերաբերյալ կան տարբեր կարծիքներ: Ամփոփելով այս հատվածը՝ մեկ անգամ էլ նշենք, որ կապակցման եղանակը և կապակցվող միավորների հարաբերությունը տարբեր իրողություններ են. կապակցվող միավորները կարող են կապակցվել տարբեր եղանակներով և միմյանց նկատմամբ ունենալ տարբեր հարաբերություններ, այնպես որ համաձայնությունը՝ որպես կապակցման եղանակ, չպետք է բնորոշել ո՛չ որպես համադասական, ո՛չ էլ որպես ստորադասական:

բ) Քերականագիտական աշխատություններում հաճախ ասվում է, որ ստորադաս անդամն է պարտադիր ընդունում գերադասի քերականական կարգը կամ կարգերը: Սա թերևս բխում է վերոհիշյալ այն դրույթից, որ համաձայնությունը կապակցության ստորադասական եղանակ է: Այստեղ դարձյալ առաջ է գալիս ենթակայի և ստորոգյալի հարաբերության բնորոշման խնդիրը, քանի որ տվյալ մոտեցման դեպքում պետք է ասել, թե դրանցից որ անդամն է որի կարգը կամ կարգերը ընդունել: Այս խնդիրը չի ծագում, եթե ընդունում ենք, որ երկուսն էլ դրվել են նույն կարգ(եր)ով՝ անկախ միմյանց նկատմամբ ունեցած հարաբերությունից: Չամաձայնության էությունը շատ ճիշտ է բնորոշում Չր. Աճառյանը: Իր «Լիակատար քերականության» մեջ նա գրում է. «Չամաձայնություն ասելով հասկանում ենք այն, թե ինչ որ է մեկը, նույնպես է լինում և մյուսը, բայց այս համաձայնությունը ո՛չ թե մեկ բառի կողմից մյուսի համար պարտադիր մի պահանջ է, այլ ինչպես անունն է ցույց տալիս, երկու կողմից էլ միաժամանակ կա-

⁵ Ռ. Իշխանյան, Արդի հայերենի շարահյուսություն. պարզ նախադասություն, Եր., 1986, էջ 21:

տարված համապատասխանություն»⁶: Համաձայնությունը որպես երկու կողմերի, այլ ոչ թե գերադասի և ստորադասի կապակցման եղանակ է բնորոշում նաև Ռ. Իշխանյանը: Նա գրում է. «Համաձայնությունը կապակցման այն եղանակն է, որի դեպքում երկու կապակցվող միավորները (երկու բառերը) քերականական որոշակի ձևերով համապատասխան են դառնում միմյանց»⁷: Համաձայնությունը այս մոտեցմամբ են բնորոշում նաև այլ լեզվաբաններ: Պ. Պողոսյանը գրում է. «Համաձայնությամբ են բառերը կապակցվում միմյանց, երբ նրանք արտահայտվում են նույն քերականական կարգերով»⁸: Արդեն ասվեց, որ քերականական աշխատություններում հաճախ այն դրույթն են զարգացնում, որ ստորադաս անդամն է ընդունում գերադասի քերականական կարգը կամ կարգերը: Այսպիսի պնդման դեպքում, բացի ենթակա-ստորոգյալ հարաբերության խնդրից, առաջ է գալիս ևս մեկ խնդիր: Հայտնի է, որ արևմտահայերենում եզակի թվի անձնական դերանուններով արտահայտված հատկացուցիչ ունեցող հատկացյալը ստանում է համապատասխան հոդեր, օրինակ՝ *իմ տունս, քու տունը*: Եթե պնդենք, որ համաձայնությամբ կապակցվելու դեպքում բառերից մեկը մյուսին թելադրում է քերականական կարգեր, ապա այս դեպքում պետք է ասենք, որ ստորադասն է գերադասին թելադրել դեմքի կարգը: Այսինքն՝ *իմ* հատկացուցիչ թելադրանքով է *տուն* հատկացյալը ստացել *ս* հոդը և ոչ թե հակառակը: Ի դեպ, ժամանակակից հայերենում համանման մեկ այլ իրողություն էլ գոյություն ունի: Մի շարք որոշիչներ իրենց որոշյալին թելադրում են հոգնակի թիվ: Ս. Գյուլբուղադյանը որոշիչը քննելիս անդրադառնում է նաև դրանց. «Մի խումբ ածական-որոշիչների հետ որոշյալը դրվում է հոգնակի թվով: Դա բխում է այդ ածականների հոգնակիության իմաստից: Այդ ածականներն են՝ *զանազան, տեսակ-տեսակ, հազարավոր, բազմազան, բազմաթիվ, գույնզգույն, երփներանգ, հարյուրավոր, միլիոնավոր, խումբ-խումբ, փունջ-փունջ, գույն-գույն* և այլն»⁹: Ռ. Իշխանյանը կապակցման այս եղանակը համարում է «առդրության մի տեսակը»՝ անվանելով կախում: Նա գրում է. «Առդրության մի տեսակը կոչվում է կախում. դա այն է, երբ չհոլովված լրացումը թելադրում կամ պարտադրում է իր լրացյալի (գերադասի) թիվը: ... Այսպիսի առդրությունը մոտ է մասամբ համաձայնությանը, մասամբ էլ ուժեղ խնդրառությանը (թեև լրացումն է կառավարողը)»¹⁰: Ինչպես տեսնում ենք, նույնիսկ համաձայնությունը որպես կապակցման ստորադասական եղանակ ընդունելու դեպքում էլ ճիշտ չէ պնդել, որ ստորադաս միավորն է ընդունում գերադասի կարգերը:

զ) Ինչպես ասվել է, որպես համաձայնության գործընթացին մասնակցող քերականական կարգեր սովորաբար նշվում են թիվը, դեմքը և հոլովը: Հասկանալի է, որ դա համապատասխանում է ժամանակակից հայերենի ենթակայի և ստորոգյալի, ինչպես նաև բացահայտչի և բացահայտյալի

⁶ **Հր. Աճառյան**, Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների, լրացուցիչ հատոր, Եր., 2005, էջ 223:

⁷ **Ռ. Իշխանյան**, նշվ. աշխ., էջ 21-22:

⁸ **Պ. Պողոսյան**, նշվ. աշխ., էջ 173:

⁹ **Ս. Գյուլբուղադյան**, նշվ. աշխ., էջ 143:

¹⁰ **Ռ. Իշխանյան**, նշվ. աշխ., էջ 33:

(կամ նաև գրաբարի որոշչի և որոշյալի) համաձայնության դրսևորմանը, սակայն հարցին ավելի լայն ընդգրկումով մոտենալիս պետք է հաշվի առնել, որ ընդհանրապես հնարավոր են նաև համաձայնության քերականական այլ կարգերով դրսևորումներ. օրինակ՝ ռուսերենում գործում է նաև համաձայնություն սեռով և այլն: Հայերենում էլ բարդ նախադասության կազմում հնարավոր է բայերի ժամանակային համաձայնություն: Հետևաբար, համաձայնությունն ընդհանրապես՝ որպես լեզվական կապակցման եղանակ բնորոշելիս պետք է հաշվի առնել նաև այս հանգամանքը:

դ) Քերականական աշխատություններում լեզվաբանները հիմնականում անդրադառնում են նաև բազմակի անդամների ու նրանց հետ կապված անդամի կապակցմանը, օրինակ՝ *բազմակի ենթակա – հոգնակի ստորոգյալ, բազմակի բացահայտյալ – հոգնակի բացահայտիչ* և այլն: Հանգամանորեն քննվում են բազմակի անդամների առնչվող իրողությունները, սակայն համաձայնության սահմանման մեջ բազմակի անդամների վերաբերյալ խոսք չկա: Եթե նշվում է, որ համաձայնությունը կապակցման այնպիսի եղանակ է, որի դեպքում ստորադաս բառը ընդունում է գերադասին բնորոշ քերականական կարգը կամ կարգերը, ապա ըստ այս սահմանման՝ ինչպե՞ս պետք է մեկնաբանել հետևյալ կապակցությունը. *Արմենը, Աշոտը և Վարդանը վերադարձան*: Այս նախադասության մեջ կա եզակի թվով երեք ենթակա և հոգնակի թվով մեկ ստորոգյալ: Կա երկու լուծում. կամ համաձայնությունը պետք է սահմանել այնպես, որ նման դեպքերն էլ ներառվեն, կամ ընդունել համաձայնությանը վերաբերող տարածված սահմանումը, իսկ այդ դեպքում պետք է պնդել, որ բազմակի ենթականերն ու ստորոգյալը համաձայնությամբ կապակցված չեն, քանի որ ըստ սահմանման բոլորն էլ պետք է դրվեին քերականական որևէ նույն կարգով կամ կարգերով: Ուստի անհրաժեշտ է համաձայնությունը սահմանել այնպես, որ սահմանման մեջ ներառվի նաև բազմակիության ու հոգնակիության կապը:

ե) Հայտնի է, որ կոչականի՝ նախադասության անդամ լինելու կամ չլինելու վերաբերյալ կան տարբեր կարծիքներ: Լեզվաբանների մի մասը կոչականը համարում է նախադասության անդամ, մյուս մասը՝ ոչ: Այստեղ չենք անդրադառնում այդ հարցին, քանի որ դա մեր քննության նյութից դուրս է, սակայն կխոսենք մեկ այլ հարցի մասին: Ժամանակակից հայերենում կա *կոչական-ստորոգյալ* համաձայնություն, որ միշտ չի դրսևորվում: Ռ. Իշխանյանն այսպես է գրում. «Եթե կոչականի ցույց տված անձը կամ իրը նույնանում է ենթակայի արտահայտած անձի կամ իրի հետ, ունենում ենք համաձայնող կոչական: ... Չհամաձայնող կոչականի դեպքում կոչականն ու ենթական տարբեր անձ (կամ իր) են ցույց տալիս, և կոչականի ու ստորոգյալի միջև չկա համաձայնություն»¹¹: Օրինակներ՝ *Պարոն, լրացրեք փաստաթուղթը: Պարոններ, լրացրեք փաստաթղթերը: Պարոններ, ես կլրացնեմ փաստաթղթերը*: Անկախ նրանից՝ կոչականը նախադասության անդամ համարվո՞ւմ է, թե՞ ոչ, որոշակի տիպի կառույցներում կա կոչական-ստորոգյալ համաձայնություն: Հետևաբար համաձայնությունը սահմանելիս պետք է նկատի ունենալ նաև դա: Այստեղ հարցը միայն այն

¹¹ Նույն տեղում, էջ 280-281:

չէ, որ սահմանման մեջ ընդգրկվեն նաև ավանդաբար նախադասության անդամ չհամարվող միավորները: Թերևս ավելի էական է այն, որ կոչականն ու ստորոգյալը չեն համարվում անմիջականորեն իրար կապվող միավորներ, բայց նրանց միջև մի շարք դեպքերում առկա է համաձայնական կապ: Համանման կապ է դրսևորվում նաև բարդ նախադասության տարբեր բաղադրիչներում եղած միավորների միջև, թեև այդ միավորներն անմիջականորեն իրար կապակցված չեն:

զ) Անդրադառնանք համաձայնության սահմանման հետ կապված հաջորդ խնդրին, որն առնչվում է վերը ասվածին: Համաձայնությունը բնորոշվում է որպես միայն պարզ նախադասության անդամների (կամ բառերի) կապակցման եղանակ, և հաշվի չի առնվում նաև բարդ նախադասությունների բաղադրիչների կապակցման գործընթացում համաձայնության ունեցած դերը, թեև բարդ նախադասության բաղադրիչների կապը քննելիս հաճախ խոսվում է համաձայնության մասին: Այսպես՝ Վ. Առաքելյանն իր «Հայերենի շարահյուսություն» աշխատության երկրորդ հատորում բարդ նախադասության բաղադրիչների կապակցումը քննելիս «Որ բառի համաձայնությունը և հոդառությունը» վերնագրի տակ առանձին ենթաբաժիններով մասնավորում է՝ «Որ բառի թվական համաձայնությունը», «Որ բառի հոլովական համաձայնությունը», «Որ բառի հոդառությունը»¹²: Բ. Վերոյանը բարդ ստորադասական նախադասության բաղադրիչների կապակցությունը քննելիս անդրադառնում է կապակցական բառերի համաձայնությանը, խոսում համաձայնության և անհամաձայնության, բակառության դեպքերի մասին¹³: Բարդ նախադասությունների բաղադրիչների միջև եղած համաձայնության (կապակցական բառերի, բայի եղանակային ձևերի և այլն) վերաբերյալ այս կամ այն չափով խոսվում է բարդ նախադասության ուսումնասիրությանը նվիրված աշխատանքների մեծ մասում, բայց, չգիտես ինչու, համաձայնության բնորոշումն այդպես էլ դուրս չի գալիս պարզ նախադասության սահմաններից: Սակայն դեռևս Ստ. Մալխասյանցը իր «Գրաբարի համաձայնութիւնը» արժեքավոր աշխատության մեջ բնորոշում է համաձայնությունը և նշում. «Ինչպէս պարզ նախադասութիւնները կանոնաւոր իմաստ արտայայտելու համար պէտք է, որ նոցա մէջ իւրաքանչիւր բառ միմեանց հետ որոշ կապակցութիւն ունենան՝ այնպէս էլ բաղադրեալ նախադասութիւն կազմող պարզ նախադասութիւնները, կանոնաւոր իմաստ արտայայտելու համար՝ պէտք է որոշ կապակցութիւն ունենան միմեանց հետ: Համաձայնութեան այն մասը, որ աւանդում է բաղադրեալ նախադասութեան կազմութեան կանոնները՝ կոչւում է *համադրութիւն*»¹⁴: Իհարկէ, Ստ. Մալխասյանցը թե՛ պարզ, թե՛ բարդ նախադասությունների դեպքում համաձայնությունն ըմբռնում է ավելի լայն իմաստով և գրում. «Քերականութեան այն մասը, որ աւանդում է բառերի կանոնաւոր դասաւորութիւնը խօսքի մէջ և նոցա յարաբերութիւնը միմեանց հետ՝ կոչւում է *համաձայնութիւն*»¹⁵: Այնուհետև՝ «Համաձայնութեան այն մասը,

¹² Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հ. Բ, Եր., 1964, էջ 91-102:

¹³ Տե՛ս Բ. Վերոյան, Բարդ ստորադասական նախադասության շարահյուսություն, Եր., 1970, էջ 290-302:

¹⁴ Ստ. Մալխասեանց, Գրաբարի համաձայնութիւնը, Թիֆլիս, 1892, էջ 119:

¹⁵ Նույն տեղում:

որ աւանդում է բաղադրեալ նախադասութեան կազմութեան կանոնները՝ կոչուում է *համադրութիւն*¹⁶: Սակայն բարդ նախադասութեան բաղադրիչների կապը քննելիս նա տարբեր տեղերում անդրադառնում է դրանց միջև առկա բուն համաձայնութեանը, ինչպես. «Յարաբերական դերանունը կըրկնակի կապ ունի, մի կողմից գլխաւոր նախադասութեան այն բառին հետ, որին որոշում է (յարաբերեալ) և միւս կողմից երկրորդական նախադասութեան հետ, որի անդամն է կազմում: Այս պատճառով նա պէտք է համաձայնի թէ՛ յարաբերեալին հետ և թէ երկրորդական նախադասութեան հետ: Յարաբերեալին հետ համաձայնում է *թուով*, իսկ երկրորդական նախադասութեան հետ՝ հոլովով, նայելով թէ ինքն ինչ պաշտօն է վարում նորանում»¹⁷: Ինչպես տեսնում ենք, բարդ նախադասութեան բաղադրիչների միջև առկա համաձայնական կապը դեռ վաղուց է ուշադրութեան արժանացել, սակայն համաձայնութիւնը սահմանելիս այդ հանգամանքը այդպես էլ հաշվի չի առնվել:

Այսպիսով, համաձայնութիւնը որպէս կարգ սահմանելիս պէտք է հաշվի առնել, որ կապակցման եղանակը համադասական կամ ստորադասական չի լինում, այլ որևէ եղանակով կապակցված միավորները կարող են իրար նկատմամբ նման հարաբերութիւններ ունենալ: Գիշտ չէ այն պնդումը, որ համաձայնութեամբ կապակցման դեպքում ստորադասն ընդունում է գերադասի քերականական կարգ(եր)ը: Համաձայնութիւնը սահմանելիս պէտք է հաշվի առնել, որ տարբեր լեզուներում, ինչպես նաև բարդ նախադասութեան բաղադրիչների կապակցութեան դեպքում, բացի դեմքի, թվի, հոլովի կարգերից, հնարավոր է նաև կապակցում այլ կարգերի միջոցով: Համաձայնութիւնը սահմանելիս պարտադիր պէտք է հաշվի առնել նաև բազմակիւթեան և հոգնակիւթեան կապը: Պէտք է նկատի ունենալ նաև ավանդաբար նախադասութեան անդամ չհամարվող միավորների համաձայնական կապի հնարավորութիւնը: Եվ վերջապէս, չպէտք է մոռանալ, որ համաձայնութիւնը կարող է դրսևորվել նաև բարդ նախադասութեան բաղադրիչների կապակցման դեպքում:

Ահա այս ամենը նկատի ունենալով էլ համաձայնութիւնը պէտք է սահմանել որպէս կապակցման եղանակ: Այդ դեպքում կստացվի հետևյալ սահմանումը: *Համաձայնութիւնը կապակցման այն եղանակն է, որի դեպքում անմիջականորեն կամ ոչ անմիջականորեն կապակցվող միավորները դրվում են երկուսին բնորոշ քերականական որևէ նույն կարգով կամ կարգերով, ինչպես նաև կարող է գործել բազմակիւթեան-հոգնակիւթեան կապը:*

Բանալի բառեր - *համաձայնութիւն, համադասութիւն, ստորադասութիւն, բազմակի անդամներ, հոգնակի թիվ, հոլով, դեմք, նախադասութեան անդամ, պարզ նախադասութիւն, բարդ նախադասութիւն*

АРТАШЕС САРКИСЯН – Определение грамматического согласования. – В статье рассматриваются различные определения грамматического согласования,

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Նույն տեղում, էջ 121:

при этом указываются факты и обстоятельства, которые обычно не принимаются во внимание. В частности, речь идёт о связи – однородных членов со сказуемым, тех единиц, которые не считаются членами предложения, а также составных частей сложного предложения. Подчёркивается, что, давая определение грамматического согласования, их также следует иметь в виду.

Ключевые слова: *согласование, причисление, подчинение, однородные члены, множественное число, падеж, лицо, член предложения, простое предложение, сложное предложение*

ARTASHES SARGSYAN – *The Definition of Grammatical Agreement.* – The article presents several opinions about the definition of grammatical agreement and it mentions those circumstances that are omitted from the definition of agreement. In particular, it points the connection between the homogeneous parts of the sentence and the predicate, between those units that are not considered as a part of the sentence and between the components of the composite sentence. It is also pointed, that defining the grammatical agreement, one must take these factors into consideration.

Key words: *agreement (concordance), coordination, subordination, homogeneous parts of the sentence, plural, case, person, part of the sentence, simple sentence, composite sentence*

ԱՐԵՎՍՏԱՀԱՅԵՐԵՆԻՑ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԵՐԻ ՆԵՐԹԱՓԱՆՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

ԼՈՒԻՉԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Ինչպես ամեն մի կենդանի լեզվի, այնպես էլ արդի հայերենի բառապաշարը փակ համակարգ չէ: Համեմատաբար փակ համակարգ է բառային հիմնական ֆոնդը, իսկ բառային կազմը, որն ընդգրկում է և՛ բառային հիմնական ֆոնդը, և՛ ոչ գործուն բառաշերտը, անընդհատ փոփոխվում է, լրացվում ու կատարելագործվում: Լեզվի բառապաշարում արտացոլվում է հասարակական կյանքի յուրաքանչյուր փոփոխություն՝ գիտատեխնիկական նորագույն նվաճումներ, հասարակական-քաղաքական նոր հարաբերություններ, սոցիալ-տնտեսական և կենցաղային նոր երևույթներ: Այս նոր հասկացություններն արտահայտելու համար լեզուն ստեղծում է նոր բառեր, որոնք ժամանակի ընթացքում կարող են մերվել կամ չմերվել գործուն բառաշերտին, լեզվում արդեն եղած բառերին տալիս է նոր իմաստներ կամ այլ լեզուներից կատարում է փոխառություններ:

Փոխառություն է «լեզվական այս կամ այն տարրի, հիմնականում բառի անցումը մի լեզվից մյուսին՝ այդ լեզուների շփման, փոխազդեցության հետևանքով (կատարվում է նոր հասկացություններ, իմաստներ կամ եղածների տարբերացումներ արտահայտելու նպատակով)»¹: Փոխառություն է նաև հենց մի լեզվից մյուսին լեզվական տարրերի փոխանցման գործընթացը:

Փոխառությունը լեզվի բառային կազմի համալրման արտաքին հիմնական ճանապարհն է: Սակայն կա նաև ներքին փոխառություն, որը բառապաշարի հարստացման ճանապարհներից է, որին հայերենը դիմել է դեռ շատ վաղուց, և որը մեծ դեր է խաղացել նրա զարգացման ու կատարելագործման գործընթացում: Այս տեսակետից Էդ. Աղայանը գրական աշխարհաբարը դասում է աշխարհի բացառիկ լեզուների թվին այն առումով, որ «մեր գրական աշխարհաբարի արդի երկու ճյուղերը՝ արևելահայերենը և արևմտահայերենը, ազատորեն կարող են, ըստ անհրաժեշտության, փոխառություններ կատարել և կատարել են միմյանցից, գրաբարից, միջին հայերենից, ժողովրդախոսակցական լեզվից ու բարբառներից»²:

Խորհրդային հասարակարգի փլուզումից հետո հարաբերությունները Սփյուռքի հետ թևակոխեցին բոլորովին նոր փուլ. ակտիվացան շփումները հասարակական-քաղաքական գործունեության գրեթե բոլոր ոլորտներում՝ և՛ քաղաքական, և՛ գիտակրթական, և՛ մշակութային: Նոր ձևավորված հարաբերությունների այս փուլում մեծացան նաև փոխադարձ ազդեցություններն ու ներթափանցումները, որոնք վերաբերում են ամենատար-

¹ Տե՛ս **Յ. Պետրոսյան**, Հայերենագիտական բառարան, Եր., 1987, էջ 613:

² Տե՛ս **Գ. Ջահուկյան, Էդ. Աղայան**, Հայոց լեզու, 1-ին մաս, Ա պրակ, Եր., 1980, էջ 334:

բեր բնագավառներին: Ազդեցություններից զերծ չմնաց նաև գրական արևելահայերենը, հատկապես լեզվի բառապաշարը. պայմանավորված ամենատարբեր հանգամանքներով՝ արևելահայերենի բառային կազմ ներթափանցեցին արևմտահայերեն բազմաթիվ բառեր, որոնք եկան կա՛մ անվանելու նոր հասկացություններ ու երևույթներ, կա՛մ փոխարինելու օտար բառային միավորների: Նկատենք, որ ժամանակակից արևելահայերենի բառապաշարի տեղաշարժերը վերջին երկու տասնամյակում մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև արևմտահայերենի բառապաշարային ներթափանցումների և իմաստափոխական ազդեցությունների առումով:

Անկախացումից հետո արևելահայ գրական լեզվում սկիզբ դրվեց մի գործընթացի, որն ուղղված էր լեզվի մաքրության ու անաղարտության պահպանմանը. խոսքը վերաբերում է մասնավորապես փոխառյալ շատ բառերի թարգմանության, դրանց համարժեք հայերեն տարբերակների ստեղծմանը, և այս առումով արևմտահայերենը՝ որպես լեզվի մի տարբերակ, կարող էր դառնալ օտար բառերի հայերենացմանն օգնող կարևոր գործոն, մասնավաճնդ եթե հաշվի առնվի այն հանգամանքը, որ արևմտահայերենը համեմատաբար ավելի զգույշ է վերաբերվել օտար փոխառությունների հարցին և առավելապես հետևել է դրանց թարգմանությանն ու հայացմանը: Ունենալով ազգապահպանման ու լեզվապահպանման խնդիր՝ արևմտահայերենը օտար փոխառություններին նախապատվություն չի տվել և հնարավորինս դրանք փոխարինել է հայերեն տարբերակներով՝ լեզվի բառակազմական օրինաչափություններով ստեղծելով հայերեն բառեր: Արևելահայերենի պարագայում խնդիրը մի փոքր այլ է. փոխառությունների հարցում դրսևորելով անհոգ վերաբերմունք՝ արևելահայ գրական լեզուն ազատորեն դիմել է փոխառությունների՝ խորհրդային իշխանության շրջանում առավելապես ռուսերենից կամ նրա միջոցով այլ լեզուներից:

Անկախացումից հետո, սակայն, մոտեցումը այս հարցին փոխվում է, և շատ օտար բառեր փոխարինվում են հայերեն տարբերակներով. այդ առումով արևմտահայերենը օտար բառերի դիմաց հաճախ առաջարկում է շատ հաջող կազմություններ, որոնք փոխադարձ շփումների և ազդեցությունների շնորհիվ ներթափանցում են արևելահայերենի բառապաշար և ազատորեն գործածվում են:

Արևելահայ մամուլի և առանձին ոլորտների լեզվի ուսումնասիրությունը մեզ հնարավորություն է տալիս փաստելու, որ լեզվի արդի փուլում արևելահայերենում գործածական են դարձել մի քանի հարյուրի հասնող արևմտահայերեն բառեր: Բառերի արևմտահայերեն լինելը փաստում ենք նրանց բառարանային գրանցմամբ. դրանք գրանցված են արևմտահայերենի բառարաններում³ և ներկայացված են որպես այդ գրական լեզվի կամ առավելապես դրանում գործածվող բառային միավորներ: Արևելահայերենում գործածական դարձած այդ կարգի բառերը համեմատելով է. Աղայա-

³ Տե՛ս **Ա. Սարգսյան**, Արևմտահայերենի բառարան, Եր., 1991, **Ռ. Սաքապետոյան**, Արևմտահայերեն-արևելահայերեն նոր բառարան, Եր., 2011, «Հայոց լեզուի նոր բառարան», 2 հատորով, Պէյրուֆ, 1992:

նի «Արդի հայերենի բացատրական բառարանի» և «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի» տվյալների հետ՝ նկատում ենք, որ այդ բառերը պետք է ներկայացվեն առանձին խմբերով:

1. Բառեր, որոնք բացակայում են նշված բառարաններում. սա թույլ է տալիս մտածելու, որ դրանք առավելապես վերջին շրջանի ներթափանցումներ են և թեև արևելահայերենում բոլորովին չեն եղել, այնուամենայնիվ այսօր ակտիվ կիրառվում են և դարձել են արևելահայերենի բառապաշարի անբաժանելի մաս: Արևմտահայերենից անցած բառերը առավելապես տերմիններ են, որ վերաբերում են տարբեր բնագավառների, հատկապես հասարակական-քաղաքական ոլորտին, ինչպես՝ **ընտրարշավ, խնդրահարույց, համայնքապետ, բռնարարք, հանցակցել, համաշխարհայնացում** (գլոբալիզացիա), **պահանջատիրություն, երդմնառություն** (ինագուրացիա), **ցավակցագիր, առձակատում** (կոնֆրոնտացիա), **համախտանիշ** (սինդրոմ), **հոգեմտավոր, մեռուկացում** (հմմտ.՝ *հյուսվածքների մեռուկացում*), **բուժաշրջան** (բժշկ.) և այլն, **համակարգիչ, համակարգչահեն, համացանց** (տեխ.), **օֆիս, համապիտանի** (ուսնիվերսալ), **վերաքաղ**⁴ «կրկնություն» (հմմտ.՝ *գիտելիքների վերաքաղ*), **կրկնուսույց** (ռեպետիտոր), **համասեռական//միասեռական, գինեծոն, հոգնաշատ** (հմմտ.՝ *հոգնաշատ աշխատանք*) և այլն: Թեև այս բառերից մի քանիսին զուգահեռ գործածվում են նաև այլ տարբերակներ, սակայն արևմտահայերենից անցած ձևերը մնում են որպես մեր բառապաշարի լիարժեք միավորներ, օրինակ՝ **օֆիս//գրասենյակ, համասեռական//համասեռամուլ, գինեծոն//շնորհանդես** և այլն: Բնագրային օրինակներ՝ ...չնայած շատ դրական կողմերին՝ *համացանցը* դեռահասների վրա ունենում է նաև բացասական ազդեցություն («Եթեր», 20.02.2007), ...բնակիչները որոշեցին դիմել իրենց *համայնքապետին* («Ազգ», 19.10.20012), ...նախարարության կայքէջը դարձել է աղբբեջանցի *համակարգչահենների* հարձակման թիրախ («Առավոտ», 25.11.2012), ...ամեն ինչ պետք է անել նման *բռնարարքներ* այլևս թույլ չտալու համար («Իրավունք», 16.07.2009), ...փոխադարձ համաձայնությամբ *հանցակցել են* իրար հետ («02», 13.11.2010) և այլն:

2. Բառեր, որոնք կան Է. Աղայանի ԱՅԲԲ-ում *արևմտ.* հղումով. սրանք բառեր են, որոնք արևելահայերենին ծանոթ են եղել բացառապես որպես արևմտահայ գրական լեզվի բառեր և արևելահայերենում չեն գործածվել: Այսօր, սակայն, այդ բառերից շատերը, երբեմն որոշակի իմաստային փոփոխություններ կրելով, գործուն կիրառություն են ստացել արևելահայ խոսքում, մտել են արևելահայերենի բառապաշար: Այս խմբի բառերը նույնպես հիմնականում ունեն տերմինային արժեք և վերաբերում են ամենատարբեր բնագավառների, ինչպես՝ **խոսնակ, կարգախոս** (լոգունգ), **հայտագիր** (բուկլետ), **նախարար, հոգաբարձու, մենատիրական, տնօրեն, խորհրդարան, աշխարհամարտ, նյութապաշտ, բանախոս** (զեկուցող), **համայնավար**, ~ություն, ~ական (կոմունիստ), **կայսերապաշտ**, ~ություն, ~ական (իմպերիալիստ), **խափանարար**, ~ություն (դիվերսանտ, դիվերսիա), **եզր** (տերմին), **կրթաթոշակ, թեզ** (կրթ.), **դրամատուն, համույթ, տաբատ, բարկոլի** (կոնյակ), **թերթոն, շարժանկար** և այլն:

⁴ Այս բառը կա ԺՂԼԲԲ-ում, սակայն այլ իմաստով և գրք., հզվդ. հղումներով:

Նշենք, որ այս բառերը արևելահայերենում երբեմն բառային միակ միավորները չեն նույն հասկացությունն արտահայտելու համար. դրանց համարժեք օտար փոխառությունները և հայերեն արդեն եղած տարբերակները շարունակում են գործածվել. արևմտահայերեն բառերը լրացնում, հարստացնում են այդ բառերի հոմանշային շարքերը, ինչպես՝ **դրամատուն//բանկ, շարժանկար//կինո, խորհրդարան//Ազգային ժողով, աշխարհամարտ//համաշխարհային պատերազմ** և այլն:

3. Բառեր, որոնք է. Աղայանի ԱՅԲԲ-ում կան, սակայն հիմնականում ներկայացվում են *հնգ.*, *պտմ.* կամ *անհնձնր.* հղումներով. այս բառերը և՛ արևելահայերենում, և՛ արևմտահայերենում ունեցել են նույն իմաստները, սակայն արևելահայ տարբերակում գործածական չեն եղել. հասարակական կյանքի տարբեր ոլորտներում գործածության առումով նախապատվությունը տրվել է այդ բառերի օտար, հատկապես ռուսերեն տարբերակներին: Անկախացումից հետո, երբ զգալի թվով օտար բառեր փոխարինվեցին հայերեն տարբերակներով, շատ բառեր ներթափանցեցին նաև արևմտահայերենից, և հենց արևմտահայերենի ազդեցությամբ սկսեցին լայնորեն օգտագործվել նաև հնացած և ոչ գործածական բազմաթիվ այնպիսի բառեր, որոնք լեզվի երկու տարբերակներում էլ կային, պարզապես արևմտահայերենում դրանք սովորական գործածական բառեր էին, իսկ արևելահայերենում՝ ոչ. այդպիսի բառերը թեև հենց արևմտահայերենից անցած բառային միավորներ չեն (ԱՅԲԲ-ում *արևմտ.* հղումը չունեն), այնուամենայնիվ արևմտահայերենի ազդեցությամբ են բառապաշարի ոչ գործուն շերտից անցել գործուն շերտ և այսօր արդեն հիմնականում տերմինային արժեքով կիրառվում են ամենատարբեր ոլորտներում, ինչպես՝ **ազգայնական** (նացիոնալիստ), **ալեհավաք** (անտեմա), **ահաբեկիչ** (տեռորիստ), **աղանդեր** (դեսերտ), **հանձնախումբ** (կոմիտե), **ամբոխավար** (դեմագոգ), **ազնվապետական** (արիստոկրատական), **խորհրդապաշտ** (սիմվոլիստ), **թաղային**, **ատենադպիր**, **դիվանապետ**, **արտերկիր**, **ավարտաճառ** և այլն:

4. Բառեր, որոնք ԱՅԲԲ-ում կան, սակայն այսօր գործածվում են ոչ միայն իրենց բառարանային, այլև նոր իմաստներով. դրանք, ըստ էության, իմաստային նորաբանություններ են, որոնք բառապաշարում ներկայանում են նոր իմաստային ընդգրկումներով: Այդ բառերի ձեռք բերած նոր իմաստները թերևս կարելի է բացատրել հիմնականում արևմտահայերենի ազդեցությամբ. գրական հայերենի երկու տարբերակների գործուն շփումների հետևանքով տեղի են ունենում նաև իմաստային ներթափանցումներ: Շատ բառեր, որ գրական հայերենի երկու տարբերակներում էլ կան, արևելահայերենում հանդես են գալիս այնպիսի իմաստներով, որոնք առավելապես արևմտահայերենի ազդեցությամբ են պայմանավորված, ինչպես՝ **ձայներիզ**, **համակիր**, **հարցախույզ**, **նախակրթարան**, **կառուցողական** (կոնստրուկտիվ), **համալիր** (կոմպլեքս), **ռազմավարություն** (ստրատեգիա), **քարոզչություն** (պրոպագանդա), **մարտավարություն** (տակտիկա), **ժողովրդավար** (դեմոկրատ), **ներուժ** (պոտենցիա), **արիեստավարժ** (պրոֆեսիոնալ) և այլն: Նկատենք, որ ԱՅԲԲ-ում այս բառերի գրանցված իմաստները առնչություն ունեն այն իմաստներին, որոնցով դրանք այսօր կիրառվում են: Այդ բառերի ձեռք բերած նոր իմաստները,

հատկապես որպես համարժեք վերը նշված օտար փոխառությունների, առավելապես հատուկ են արևմտահայերենին, օրինակ՝ **ասուլիս** բառը ԱՅԲԲ-ում բացատրվում է «1. խոսակցություն, զրույց, 2. բամբասանք, ասեկոսե, 3. հարցազրույց»։ այսօր այն գործածվում է «ինչ-որ լուր, հարց քննարկելու, հայտնելու նպատակով կազմակերպված հավաք՝ նաև լրագրողների մասնակցությամբ», **մահաթմբիր** բառը բացատրվում է «մահվան թմրություն, մահվան քուն»։ այսօր այս բառը գործածվում է որպես համարժեք բժշկագիտական **կոմա** փոխառյալ տերմինի համար։ **Նիշ** բառը բացատրվում է «1. նշան, 2. թվանիշ, 3. մարզական կամ այլ կարգի մրցությունների մեջ մրցակիցների շահած միավոր»։ այսօր այս բառը գործածվում է «գնահատական» իմաստով։ **Վերջնախաղ** բառը նշանակել է «խաղի ավարտական փուլը»։ այսօր նշանակում է նաև «որևէ մրցաշարում վերջին խաղ, ֆինալ»։ **Ատենախոս** բառը բացատրվում է «հռետոր», իսկ այսօր փոխարինել է **դիսերտանտ** օտար բառին։ ամենայն հավանականությամբ իմաստային այս անցումների պատճառը արևմտահայերենի ազդեցությունն է։ **Ցեղակրոն** բառը ԱՅԲԲ-ում չկա, սակայն կա **ցեղակրոնական** բառը, որ բացատրված է «ռասայական»։ այսօր այս բառը արևմտահայերենի ազդեցությամբ կիրառվում է նոր իմաստով՝ «ցեղին և կրոնին հավատարիմ, դրանց արժեքներին հետևող»։

Ընդհանուր առմամբ պետք է նկատել, որ արևմտահայերենի ազդեցությամբ արևելահայերենի բառային կազմը հարստացել է առավելապես տերմինային արժեք ունեցող բառային միավորներով (առօրյա-խոսակցական կամ կենցաղային բնույթի բառեր գրեթե չկան) ու իմաստներով, որոնք գործածվում են ամենատարբեր ոլորտներում։

Թեև փոխառությունները փոխառու լեզվում ընդունվում են որպես բառային ամբողջական միավորներ և սովորաբար բառակազմական վերլուծության չեն ենթարկվում, սակայն արևմտահայերենից անցած բառերը, որոնք ներքին փոխառություններ են և պատկանում են նույն լեզվին, բառակազմական նույն օրինաչափություններն ունեն, ինչ և արևելահայերենի բառերը։

Քննելով արևմտահայերենից ներթափանցած և նրա ազդեցությամբ գործուն դարձած բառերի կազմությունը՝ նկատում ենք, որ դրանք առավելապես բաղադրյալ կազմություններ են, որոնցում գերակշռում են ածանցավոր և բարդ բառերը։ Բարդությունները գերազանցապես երկբաղադրիչ են, ինչպես՝ **ընտրարշավ, իրավահաջորդ, գինեծոն, ատենախոս, դրամատուն, հայտագիր, կարգախոս, աշխարհամարտ, բանախոս, շարժանկար** և այլն։

Բարդածանցավոր բաղադրություններում մեծ թիվ են կազմում վերջածանցավոր բարդությունները, ինչպես՝ **բռնարարք, հոգեմտավոր, երդմնառություն, պահանջատիրություն, բուժաշրջան, կրկնուսույց, մենատիրական, խնդրահարույց**։

Ածանցավոր կազմությունները հիմնականում կրկնածանց բառեր են, ինչպես՝ **առճակատում, համակարգիչ, մեռուկացում, համապիտանի, համասեռական, համաշխարհայնացում, քարոզչություն** և այլն։ Մեկ ածանցով պարզածանցավոր կազմությունները ավելի փոքր թիվ են կազմում, օրինակ՝ **համացանց, ներուժ, արտերկիր, թերթոն**։

Նշենք սակայն, որ բարդածանցավոր բաղադրություններից շատերը կազմվում են ոչ թե ածանցների ավելացումով՝ ածանցմամբ, այլ արդեն եղած բաղադրիչների միացումով, որոնցից մեկը կամ մի քանիսը ածանցավոր կազմություններ են, օրինակ՝ **համակարգչահեն** բառը կազմվել է համակարգիչ և **հեն** բաղադրիչների կցումով, որոնցից մեկը ածանցավոր կազմություն է, **համայնքապետ** բառը կազմվել է **համայնք** և **պետ** բաղադրիչների, **հոգեմտավոր** բառը՝ **հոգի** և **մտավոր** բաղադրիչների կցումով և այլն:

Ամփոփելով ասվածը՝ նկատենք, որ արևմտահայերենից ներթափանցած բառերն ու իմաստները հիմնականում տերմինային արժեք ունեն. արևելահայերենը այդ բառերը վերցնում է իբրև հաջող համարժեքներ օտար բառերի համար, կամ դրանք հանդես են գալիս որպես զուգահեռ ձևեր՝ համալրելով հասկացությունը կամ երևույթն անվանող բառերի հոմանշային շարքերը, ինչպես՝ **համացանց // ինտերնետ, համալիր // կոմպլեքս, դրամատուն // բանկ, շարժանկար // կինո** և այլն, և լեզվի զարգացման հետագա ընթացքը ցույց կտա, թե դրանցից որը հաղթող կդառնա հաղորդակցման գործընթացում:

Բանալի բառեր – *փոխառություններ, արևմտահայերեն, իմաստային նորարարություններ, տերմիններ, բառային կազմ, լեզվական ազդեցություններ, իմաստափոխություն*

ЛУИЗА МЕЛКОНЯН – Пути проникновения слов из западноармянского языка в восточноармянский. – Заимствование – это основной наружный способ пополнения лексики языка. Но существует также внутреннее заимствование. В статье рассмотрены слова, которые восточноармянский язык заимствовал из западноармянского. Такого рода заимствования в основном представляют собой термины, или новые слова, или новые их значения.

Слова, заимствованные из западноармянского языка, распределяются по группам.

1. Слова, которых нет в словарях, что позволяет считать их абсолютно новыми.
2. Слова, которые сопровождаются в словарях пометой **արևմտ.** (*западно-арм.*).

Ключевые слова: *заимствования, западноармянский язык, смысловые неологизмы, термины, словарный состав, языковые взаимодействия, изменение значения*

LUIZA MELKONYAN – The Ways of Penetration of Words from Western Armenian to Eastern Armenian. – Borrowing is the main outer way of stocking of lexical fund of the language. But there also exists an inner borrowing, which is considered to be one of the inner ways of word stock enrichment. Social changes also had their impact on the literary Eastern-Armenian language, especially on the word stock of the language. Depending upon different conditions, the word stock of Eastern-Armenian language was penetrated by many West-Armenian words, which came to name new concepts and phenomena or to replace foreign word units. These words must be represented by different groups:

1. Words penetrated from West-Armenian, which are absolutely new in East-Armenian literary language, i.e. they are not registered in “Explanatory dictionary of modern Armenian” of E. Aghayan and in a four-volume “Explanatory dictionary of

modern Armenian Language” published by AC (Academy of Sciences). From this we come to a conclusion, that these are mainly recent borrowings.

2. Words that are registered in “Explanatory dictionary of modern Armenian” of Aghayan by the link **արևմտ**. (Western Armenian). These are the words, which in Western-Armenian are known exceptionally as Eastern-Armenian words and which had not been used in Western Armenian.

Key words: *borrowings, Western-Armenian language, semantic neologisms, terms, vocabulary, linguistic interactions, semantic alteration*

ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՇՏԵՄԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒՐՎԱԳԻԾ

ՖՐԻՂԱ ՀԱԿՈՒՅԱՆ

21-րդ դարում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման նորագույն ժամանակաշրջանում, հարյուրամյակներ շարունակ հոգևոր-մշակութային արժեքների ստեղծման և ազգապահպանման առաքելությամբ հանդես եկած հայերենը համացանցում ինչ չափով կկարողանա իրականացնել լեզվի ամենահիմնական և առաջնային՝ հաղորդակցական գործառույթը՝ դժվար է ասել: Դրա համար նախևառաջ անհրաժեշտ է, որ այն դառնա համացանցային լեզու, տեղեկատվություն ստանալու, մշակելու և հաղորդելու անփոխարինելի միջոց, կիրառելի լինի տեխնիկական զանազան սարքավորումների համար: Ինչպես ցանկացած լեզվի, այնպես էլ հայերենի լիարժեք կիրառությունը համացանցում կժառայի երկու նպատակի: Մի կողմից՝ համացանցում եղած հսկայածավալ և տարաբնույթ տեղեկատվությունը հայերենով հասանելի կլինի հայ օգտվողների համար, մյուս կողմից՝ համակարգչային տեխնիկական միջոցների նորագույն նվաճումներն օգտագործելով՝ հնարավոր կլինի նոր ձևերով կատարել հայերենի լիակատար ուսումնասիրությունը, համակարգել լեզվական նյութը, լեզվական իրողությունները հետազոտել և համապատասխան ձևով՝ թվային տարբեր սարքավորումների միջոցով ներկայացնել: Նկատենք, որ թե՛ հայերենով տեղեկատվություն ներկայացնելու և թե՛ համակարգչի միջոցով հայերենն ուսումնասիրելու ուղղությամբ փորձնական բնույթի աշխատանքներ տարվել են:

Ինչպես հայտնի է, ցանկացած լեզվի ատաղձն այդ լեզվի բառապաշարն է: Ուստի լեզուն համակարգչի միջոցով ուսումնասիրելն ու ներկայացնելը տրամաբանորեն ենթադրում են այդ լեզվի բառապաշարի ներկայացում: Իսկ ի՞նչ եղանակներով են այսօր համացանցում ներկայացվում տարբեր լեզուների բառապաշարները: Համացանցում լեզվի բառապաշարի ներկայացման երկու եղանակ կա՝ էլեկտրոնային բառարանների և բառային հենքերի (lexical data (տվյալ) base (հենք)) միջոցով: Սրանք միմյանցից նկատելիորեն տարբերվում են. առաջին դեպքում կարևորվում է բառամիավորների նկարագրությունը, երկրորդ դեպքում՝ բառերի՝ իմաստային-տրամաբանական խմբերի բաժանվելը:

Դեռևս տարիներ առաջ կատարվել են հայերենի բառապաշարը էլեկտրոնային բառարանների միջոցով ներկայացնելու փորձեր. համացանցում այսօր հասանելի են հայերեն էլեկտրոնային մի շարք բառարաններ: Մինչդեռ հայերենի բառապաշարի համակարգչային շտեմարան ստեղծելու ոչ միայն փորձեր չեն արվել, այլև նույնիսկ մոտավոր պատկերացում չկա, թե ինչ են բառապաշարի համակարգչային շտեմարանները, ինչպես են կազմվում, ինչ նպատակի են ծառայում և ինչ կիրառություն ունեն: Ի վերջո, ինչպե՞ս կարելի է կազմել հայերենի բա-

ռապաշարի համակարգչային շտեմարան, կա՞ դրա անհրաժեշտությունը, թե՞ ոչ:

Ակնհայտ է, որ մի հողվածով պարզապես հնարավոր չէ սպառիչ ու ամբողջական անդրադառնալ այս բոլոր հարցերին: Ամենևին նպատակ չունենալով ներկայացնել մինչև հիմա աշխարհի տարբեր լեզուների համար ստեղծված էլեկտրոնային բառարաններն ու բառային հենքերը՝ կխոսենք միայն ժամանակակից հայերենի նախ՝ բառային հենքի կազմման, ապա՝ դրա հիման վրա բառապաշարի համակարգչային շտեմարանի ստեղծման անհրաժեշտության ու կազմության սկզբունքների մասին՝ ընդհանուր գծերով ներկայացնելով դրանում բառամիավորների նկարագրության եղանակները և այն լեզվաբանական ու ոչ լեզվաբանական նպատակները, որոնց կծառայի նորակազմ շտեմարանը: Նախքան հայերենի համակարգչային շտեմարանի կազմությանն անցնելը՝ նախ տեսնենք, թե ինչ է բառապաշարի համակարգչային շտեմարանը. արդյո՞ք կան համակարգչային շտեմարաններ, թե՞ ոչ: Ընդհանուր առմամբ բավական բարդ է սահմանել բառապաշարի համակարգչային շտեմարանները, նույնիսկ խիստ կասկածելի է դրանց գոյության հարցը:

Ինչպես հայտնի է, լեզվաբանության մեջ համակարգիչների կիրառությունը, ի թիվս այլ գործառնությունների, որակական զարգացման նոր աստիճանի հասցրեց համակարգչային բառարանագրության մեջ տարվող տարբեր բնույթի աշխատանքները: Սկզբնական շրջանում թվայնացվեցին տպագիր բառարանները՝ առանց բովանդակային որևէ փոփոխության, աստիճանաբար բառարանագիրները հրաժարվեցին տպագիր բառարանները թվայնացնելուց ու ձեռնամուխ եղան նոր սկզբունքներով և բառամիավորների ներկայացման նոր եղանակներով էլեկտրոնային բառարանների կազմությանը: Էլեկտրոնային այս նոր տեսակի բառարանները կազմելիս էլ պարզ դարձավ, որ չնայած դրանք ներկայացնում են բառերի արտահայտած իմաստները, բայց որևէ կերպ չեն արտացոլում այդ բառերի արտահայտած հասկացությունների միջև եղած հարաբերությունները: Էլեկտրոնային բառարանների այս թերությունը նկատի ունենալով էլ՝ նրանք փորձեցին ավելի կատարելագործել գոյություն ունեցող էլեկտրոնային բառարանները՝ ստեղծելով բառային հենքեր, որոնցում լեզվի բառապաշարը բաժանվում է իմաստային-տրամաբանական որոշակի խմբերի՝ ըստ հասկացական տարբեր դաշտերի: Ըստ էության՝ հենց այստեղ էլ համակարգչային բառարանագիրները կանգ առան. որքան էլ նորանոր եղանակներ են մշակում համակարգչային տեխնիկայի միջոցով իմաստի ձևայնացման ու ներկայացման ուղղությամբ, միևնույնն է, նրանց դեռ լիովին չի հաջողվել մի կողմից՝ էլեկտրոնային բառարաններում բառամիավորների նկարագրության, մյուս կողմից՝ բառային հենքում եղած տեղեկատվության հիման վրա լեզվական տեսակետից նոր որակի ու բնույթի համակարգչային շտեմարաններ կազմել: Ուստի եթե պատասխանելու լինենք այն հարցին, թե արդյոք կա՞ն բառապաշարի համակարգչային շտեմարաններ, կարող ենք ասել, որ ո՛չ, չկան, քանի որ բառային հենքերը (որքան էլ պայմանականորեն համարվեն համակարգչային շտեմարան) դեռևս շտեմարաններ չեն, քանի որ շտեմարանում պետք է տրվի բառի ձևաիմաստային լիակատար նկարագրությունը, իսկ բառային հենքերում կարևորվում է միայն բառի իմաստային - հասկացական կողմի

նկարագրությունը: Այս համատեքստում, անշուշտ, դժվար կլինի կազմել հայերենի համակարգչային շտեմարան: Ինչպես նշեցինք, շտեմարանի հիմքում պետք է ընկած լինեն բառային հենքերը, և եթե շատ լեզուների համար արդեն ստեղծվել են բառային հենքերը, հայերենի համակարգչային շտեմարան կազմելու համար անհրաժեշտ բառային հենքը դեռ պետք է ստեղծվի: Փորձենք ներկայացնել գոյություն ունեցող բառային հենքերը և պարզել՝ որքանով կարող են դրանք օրինակելի լինել հայերենի համակարգչային շտեմարանի կազմության համար:

Գոյություն ունեցողներից իր կազմության սկզբունքներով, լայն տարածվածությամբ առանձնանում է անգլերենի բառային հենքը՝ WordNet-ը, որը ստեղծվել է 1985 թ. պրոֆեսոր Ջորջ Միլլերի կողմից¹: WordNet-ի նմանողությամբ ստեղծվել են բառային հենքեր ինչպես որևէ առանձին լեզվի, այնպես էլ միանգամից մի քանի լեզուների համար, ինչպես՝ CWN (չինական Wordnet՝ 中文詞彙網路), WOLF (WordNet-ի ֆրանսերեն տարբերակը՝ WordNet Libre du Francais), IndoWordNet-ը, MultiWordNet-ը և այլն²:

Եղած բառային հենքերից որևէ մեկը չի կարող ուղեմիշ լինել հայերենի բառապաշարի շտեմարան կազմելու գործում, քանի որ դրանք կազմվել են տարբեր լեզուների համար, հատկապես անգլերենի, իսկ հայերենը, ընդհանրություններով հանդերձ, նկատելի տարբերություններ ունի, որոնք ներառում են թե՛ բառապաշարը, թե՛ քերականությունը: Բացի այդ՝ ամենից առաջ կարևոր է, որ հայերենի բառապաշարի համակարգչային շտեմարանը լիարժեքորեն համապատասխանի իր անվանը: Հայերենի ապագա շտեմարանում չպետք է մի կողմից կարևորվի բառապաշարի իմաստային դասակարգումը, և աչքաթող արվի բառիմաստների նկարագրությունը (ինչպես բառային մյուս հենքերում), և ո՛չ էլ պետք է առաջնությունը տրվի բառիմաստների նկարագրությանը, իսկ դրանց նշանակած հասկացությունների միջև եղած հարաբերությունները որևէ կերպ չներկայացվեն (ինչպես էլեկտրոնային բառարաններում): Սա էլ հաշվի առնելով՝ կարծում ենք, որ հայերենի շտեմարան կազմելիս պետք է մշակել նոր սկզբունքներ ու եղանակներ՝ բառի՝ իբրև լեզվի իմաստային հիմնական միավորի համակողմանի ու սպառիչ նկարագրության համար: Այս առումով փոքր-ինչ զարմանալի է, որ գրեթե բոլոր լեզուների համար ընտրվեց WordNet-ը մեխանիկորեն կրկնօրինակելու ճանապարհը. որպես արդյունք ստեղծվեցին շատ ավելի անորակ ու թերի բառային հենքեր (հատկապես եթե նկատի ունենանք այդ լեզուներում համակարգչային բառարանագրության շրջանակներում տարվող աշխատանքների բարձր որակը, ձեռք բերված հաջողություններն ու գիտական լուրջ ներուժը): Այնուամենայնիվ, հայ լեզվաբանության մեջ համակարգչային բառարանագրության ոլորտում նվազ փորձն ու նյութական հնարավորությունները հաշվի առնելով՝ հանդերձ՝ համոզված ենք, որ հայերենի բառապաշարի լիակատար շտեմարան կազմելիս չպետք է գնաք WordNet-ը կրկնօրինակելու ճանապարհով, քանի որ այն կատարյալ չէ, ունի բազմաթիվ բացթողումներ ու թերություններ: Դրանից բացի՝ հայերենի ստեղծվելիք շտեմարանը կազմության, բառամիավորների ներկայացման և կիրառական սկզբունքների ընդհանրու-

¹ Տե՛ս <http://wordnet.princeton.edu/>

² Տե՛ս www.globalwordnet.org

թյուններից զատ՝ նկատելի տարբերություններ կունենա այլ լեզուների համար ստեղծված բառային հենքերի համեմատությամբ: Հայերենի համար ստեղծվելիք շտեմարանը եզակի փորձ և անփոխարինելի եղանակ կլինի հայերենի ամբողջ բառապաշարը համակողմանիորեն ներկայացնելու, մինչ այդ եղած տարատեսակ բառարանների բառային նյութը համախմբելու, համակարգելու և նկարագրելու առումով:

Նախ սկսենք նրանից, որ հայերենի բառապաշարի լիակատար շտեմարան կազմելու անհրաժեշտությունը ապացուցելու կարիք չունի: Այսօր հայագիտության մեջ ցանկացած քայլ նպատակ ունի նպաստելու հայապահպանման գործին, իսկ լեզուն, ինչպես հայտնի է, ազգապահպան կարևորագույն գործոններից է, ուստի հայերենի բառապաշարը ներկայացնող շտեմարանն էլ ուղղակիորեն կիրականացնի խիստ կարևոր գործառույթ:

Շտեմարանի կազմության ուղղությամբ տարվող աշխատանքները պայմանականորեն կարելի է բաժանել մի քանի փուլի: Քանի որ շտեմարան կազմելը նման է իմաստային բարդ ցանց կազմելուն, ցանց, որտեղ բառերը միմյանց են կապված իմաստային մի շարք հարաբերություններով, խիստ կարևոր է կատարել բառացանկի ընտրություն, թե շտեմարանում ո՞ր բառերը պետք է ներկայացվեն: Առհասարակ մինչև այժմ տարբեր լեզուների համար ստեղծված բառային հենքերում այդ լեզուների բառապաշարն ամբողջությամբ ներկայացված չէ: Օրինակ՝ որքան էլ խոսում են WordNet-ի բառային հենքի հարստության, նոր բառեր մուտքագրելու դյուրության, այնպիսի ծրագրերի կիրառման մասին, որոնց միջոցով այն համացանցի հսկայական տեղեկատվությունից մեքենական եղանակով ինքնահարստացվում է, միևնույն է, նույնիսկ WordNet-ում անգլերենի բառապաշարն ամբողջական ներկայացված չէ: Այստեղ առկա են միայն նյութական իմաստ ունեցող խոսքի մասերը՝ գոյական, ածական, թվական, բայ, մակբայ, ասել է՝ թե այն բառերը, որոնք ցույց են տալիս առարկա, առարկայի որակական ու քանակական հատկանիշ, գործողություն, գործողության հատկանիշ: Դերանունները, քերականական իմաստ արտահայտող խոսքի մասերն ու սպասարկու բառերը՝ կապերը, շաղկապները, ձայնարկությունները, վերաբերականները դուրս են թողնված:

Այս սկզբունքը, սակայն, մեր կարծիքով, ընդունելի չէ: Պետք է հաշվի առնել, որ եթե ոչ համակարգչային շտեմարանում, ապա էլ որտե՞ղ պետք է լեզվի ամբողջ բառապաշարը ներկայացվի, և, բացի այդ.

ա. թեև այս բառերը նյութական իմաստ չունեն, միևնույն է, դրանք արտահայտում են քերականական իմաստներ,

բ. սպասարկու բառերը լիիմաստների համեմատությամբ խիստ փոքրաթիվ են, ուստի ոչ միայն կարիք չկա դրանք բաց թողնելու, այլև անհրաժեշտ է դրանք ևս մուտքագրել և համապատասխան ձևով ներկայացնել՝ լեզվի բառապաշարն առավել ամբողջական դարձնելու համար: Հետևաբար ճիշտ կլինի, որ մեր շտեմարանում ներկայացվեն և՛ առարկա (գոյական), և՛ գործողություն (բայ), և՛ առարկայի, գործողության հատկանիշ ցույց տվող բառերը (ածական, թվական, մակբայ), և՛ քերականական իմաստ արտահայտող բառերը (կապ, շաղկապ), և՛ սպասարկու բառերը (վերաբերական, ձայնարկություն):

Շտեմարանը պետք է ներկայացնի գրական արևելահայերենի բառա-

պաշարի համաժամանակյա վիճակը: Սա ենթադրում է, որ շտեմարան չպետք է մուտքագրվեն հնաբառերը (բառեր, որոնք դուրս են եկել գործածությունից, քանի որ հասարակական կյանքում դրանց արտահայտած առարկաներն այլևս գործածական չեն), լեզվի հասարակական տարբերակներից՝ ժարգոնային բառերն ու արտահայտությունները, տարածական տարբերակները՝ բարբառային բառերը: Փոխարենը շտեմարան պետք է մուտքագրվեն լեզվում ստեղծված ցանկացած նոր բառ և արտահայտություն կամ առանձնացվեն այն բառերը, որոնք վերափոխաստավորվել են:

Այստեղից էլ ծագում է հաջորդ խնդիրը. շտեմարանի հիմքում պետք է ընկած լինի հայերենի բացատրական բառարաններից որևէ մեկը, թե՛ պետք է կազմվի նորը: Նախ՝ պետք է նկատի ունենալ մի կարևոր հանգամանք. եթե մենք ստեղծելու լինեինք էլեկտրոնային բառարան, ապա կարող էինք տպագիր բացատրական բառարանի բառային տեղեկատվությունը որոշ փոփոխություններով օգտագործել, բայց մենք կազմում ենք շտեմարան, իսկ որևէ բացատրական բառարան չի կարող ուղղակիորեն՝ առանց փոփոխությունների շտեմարանի հիմք դառնալ: Ուստի երբ ասում ենք, թե որ բառարանը պետք է ընկած լինի շտեմարանի հիմքում, նկատի ունենք, թե շտեմարանում բառիմաստների նկարագրությունը ըստ բացատրական ո՞ր բառարանի պետք է ներկայացվի: Այն, որ մեր լեզվի տարբեր շրջաններում ստեղծվել են արժեքավոր բառարաններ, նորություն չէ, սակայն փաստ է, որ դրանցից որևէ մեկը չի կարող շտեմարանի հիմք կազմել: Համեմատաբար ուշ ստեղծված հայերեն բացատրական բառարանների թվում առանձնանում է Էդուարդ Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանը», որի թվային տարբերակը տեղադրված է համացանցում: Աղայանի բառարանն իսկապես որ իր ժամանակի հայ բառարանագրության համար հայտնություն էր. բառահողմերը կազմված են գիտական բարձր չափանիշներին համապատասխան, լիարժեքորեն արտացոլում են այն ժամանակվա հայոց լեզվի բառապաշարի համաժամանակյա վիճակը: Բայց որպեսզի այս բառարանը շտեմարանի հիմք կազմի, պետք է բովանդակային զգալի փոփոխությունների ենթարկել՝ ճշտելով թե՛ բառապաշարի ընդգրկման ծավալը, թե՛ բառիմաստների առանձնացումն ու ներկայացումը, թե՛ բառամիավորների նկարագրությունը: Այս ամենը հաշվի առնելով էլ՝ կարծում ենք, որ ժամանակակից հայոց լեզվի բառապաշարի համակարգչային շտեմարանի հիմքում պետք է ընկած լինի արևելահայերենի նորագույն բացատրական բառարանը՝ կազմված Երևանի պետական համալսարանի հայոց լեզվի ամբիոնի կողմից: Բառարանը պարունակում է 250 000 բառամիավոր և ներկայացնում լեզվի արդի վիճակը:

Պետք է կատարել հայերենի բառապաշարի իմաստային դասակարգում: Սա, թերևս, ամենալուրջ և ամենադժվար գործն է: Ինչպե՞ս պետք է կատարել այդ դասակարգումը: Ամենայն հավանականությամբ դա անելու երկու եղանակ կա. սկզբում մշակել այնպիսի սկզբունքներ, որոնց հիման վրա կկատարվի լեզվի բառապաշարի իմաստային դասակարգումը (բառապաշարը կբաժանվի իմաստային-տրամաբանական խմբերի՝ ըստ հասկացական տարբեր դաշտերի): Միանգամից նկատենք, որ այդպիսի դասակարգում կատարելը շատ բարդ կլինի. դա անելու համար անհրաժեշտ է վերլուծող, դասակարգող ու ընդհանրացնող միտք ունենալ, բացի այդ՝ հրաշալի պատկերացնել հայերենի բառապաշարի իմաստային կառուց-

վածքը: Նշենք նաև, որ մյուս լեզուների բառային հենքեր կազմելիս դեռևս ոչ մի լեզվի համար բառապաշարի օրինակելի դասակարգում չի կատարվել, հետևաբար հաջողության հասնելու որևէ երաշխիք չկա:

Բառապաշարի իմաստային դասակարգման երկրորդ եղանակը նկատելիորեն կտարբերվի առաջինից: Ինչպես նշեցինք, WordNet-ում կատարվել է անգլերենի բառապաշարի իմաստային դասակարգում, բառապաշարի առանձնացումն ըստ հասկացական դաշտերի կատարվել է նաև համընդհանուր ցանցային լեզվում (Universal Networking Language)³: Կարծում ենք՝ ճիշտ կլինի, որ մենք նախապես հայերենի բառապաշարը բաժանենք իմաստային խմբերի՝ ըստ WordNet-ի կամ UNL-ի հասկացական դաշտերի, այնուհետև՝ երբ ավելի քիչ թվով բառերի իմաստային քննությունից հայերենի բառապաշարի իմաստային կառուցվածքն ավելի տեսանելի կլինի, բառիմաստային առանձնահատկությունները՝ նկատելի, ըստ այդմ՝ հնարավոր կլինի մշակել հայերենի բառապաշարի իմաստային դասակարգման ընդհանրական սկզբունքներ:

Ինչ խոսք, գործնականում հնարավոր չէ մի հողվածով ներկայացնել WordNet-ում կամ UNL-ում բառապաշարի դասակարգումը ըստ հասկացական դաշտերի, և դա դուրս է մեր նպատակներից: Նշենք նաև, որ տարբեր խոսքի մասերին պատկանող բառերի իմաստային դասակարգումը տարբեր չափանիշներով է կատարվում: Բոլորի համար, սակայն, ընդհանուրն այն է, որ դրանց դասակարգման հիմքում ընկած է իմաստային սկզբունքը:

Այժմ փորձենք ընդհանուր գծերով ներկայացնել WordNet-ում կատարված բառապաշարի իմաստային դասակարգումը և տեսնենք, թե իմաստային այդ տարբեր խմբերում անվանական-հասկացական ինչ հարաբերություններ են առանձնացված: Այսպես, բառային այս հենքում գոյականները, ըստ իրենց հասկացական իմաստների, սկզբում բաժանվում են հասկացական տարբեր դաշտերի, իսկ դրանց ներսում ձևավորվում է հասկացական ստորակարգության համակարգ: Ըստ էության՝ հասկացական ստորակարգությունը առարկա ցույց տվող բառերի՝ գոյականների ներկայացման հիմքն է:

Ըստ այդմ՝ գոյականները բաժանված են հասկացական 25 դաշտերի (*{բույս, բուսական աշխարհ}*, *{կենդանական աշխարհ}*, *{բնական երևույթներ}*, *{բնական իրեր}*, *{ծեռքով պատրաստված իրեր}* և այլն): Այնուհետև գոյականների միջև առանձնացվում են անվանական-հասկացական հետևյալ հարաբերությունները.

ա. **հիպերնիմություն** (իմաստային այնպիսի հարաբերություն է, երբ մի առարկան մյուսի տեսակն է), այսպես՝ Y-ը X-ի հիպերնիմն է, եթե յուրաքանչյուր X Y-ի տեսակ է,

բ. **հիպոնիմություն** (Y-ը X-ի հիպոնիմն է, եթե յուրաքանչյուր Y X-ի տեսակ է): Օրինակ՝ շիկահավը **թռչուն** բառի հիպերնիմն, իսկ թռչունն էլ, իր հերթին, **շիկահավի** հիպոնիմն է:

գ. **մերոնիմություն** (առարկա ցույց տվող բառերի միջև գործող իմաստային հարաբերություն է, երբ մի առարկան մեկ այլ առարկայի մասն

³ Տե՛ս H. Ucida, M. Zhu, T. Della Senta. Universal networking language, Switzerland, 2005, էջ 5:

է), այսպես՝ X-ը Y-ի մերոնիմն է, եթե X-ը Y-ի մասն է, կամ X-ը Y-ի մերոնիմն է, եթե X-ը Y-ի անդամն է: Օրինակ՝ **ծառ** բառի մերոնիմներն են ճյուղը, կատարը, բունը, կոճղը:

դ. **հոլոնիմություն** (առարկա ցույց տվող բառերի միջև գոյություն ունեցող իմաստային հարաբերություն է, որը հակադրվում է մերոնիմությանը), այսպես՝ X-ը Y-ի հոլոնիմն է, եթե Y-ը X-ի մասն է կամ X-ը Y-ի հոլոնիմն է, եթե Y-ը պատկանում է X-ին: Օրինակ՝ **դուռը** դռնանցք բառի հոլոնիմն է, **պատը**՝ դուռ բառի հոլոնիմն է:

Գործողություն ցույց տվող բառերի՝ բայերի միջև գործում են իմաստային հետևյալ հարաբերությունները.

ա. **տրոպոնիմություն** (Y բայը X բայի տրոպոնիմն է, եթե Y բայի արտահայտած գործողությունը X բայի արտահայտած գործողություն է ինչ-որ ձևով), այսպես՝ տարափել, կաթկթալ, մաղմղալ, ցողել բայերը **անձրևել** բայի տրոպոնիմներն են, քանի որ դրանց արտահայտած գործողությունը **անձրևել**-ն է ինչ-որ կերպ:

բ. **հիպերնիմություն** (Y-ը X-ի հիպերնիմն է, եթե X բայի արտահայտած գործողությունը Y բայի արտահայտած գործողության տեսակ է), ինչպես՝ **կտրելը** սղոցելու հիպերնիմն է, որովհետև սղոցելը կտրելու տեսակ է:

գ. **հանգեցում** (X բայի արտահայտած գործողությունը հանգեցվում է Y-ին այն դեպքում, երբ X բայի արտահայտած գործողություն կատարելը հանգեցնում է Y բայի կատարած գործողությանը), օրինակ՝ **տալ** բայը հանգեցնում է **ունենալուն**, որովհետև տալու համար նախ պետք է ունենալ, **հաջողել** և **ձախողել** բայերը հանգեցնում է **փորձելուն**, որովհետև նախ պետք է փորձել և հետո նոր միայն հաջողել կամ ձախողել:

Առարկայի որակական հատկանիշ ցույց տվող բառերը՝ ածականները, ինչպես լեզվում, այնպես էլ բառային այս հեմքում բաժանված են որակական և հարաբերական ածականների: Որակական ածականների դասակարգման հիմքում ընկած է *իմաստային հականշրթունը*, քանի որ որակական ածականներն արտահայտում են առարկայի հատկանիշի գոյություն կամ բացակայություն: Հարաբերական ածականները, ի տարբերություն որակական ածականների, ցույց են տալիս հատկանիշն այլ առարկայի հարաբերությամբ, միջնորդությամբ, ուստի ցուցիչով ուղղվում են այն գոյականին, որի միջնորդությամբ արտահայտում են այդ հատկանիշը: Այսպես, {աստղային} հարաբերական ածականը, օրինակ, ցուցիչներով ուղղվում է **աստղ** գոյականին {աստղային, գոյական. առարկա՝ աստղ}⁴: Առարկայի քանակական հատկանիշ ցույց տվող բառերից՝ թվականներից, WordNet են մուտքագրված քանակական և դասական թվականները, և դրանց միջև գործող իմաստային միակ հարաբերությունը **հիպերնիմությունն է**: Բոլոր թվականների ուղիղ հիպերնիմը նշանն է, որովհետև բոլոր թվերն ի վերջո նշաններ են, նշանի հիպերնիմը *մեծությունն է, մեծությանը՝ ամբողջ թիվը, ամբողջ թվինը՝ թիվը*:

Նույնիսկ ամենաընդհանուր գծերով WordNet-ը ներկայացնելիս ակնհայտ է դառնում, որ առանց բովանդակային լուրջ փոփոխությունների այն

⁴ Տե՛ս George A. Miller, Richard Beckwith, Christiane Fellbaum, Derek Gross, and Katherine J. Miller. Introduction to WordNet: An On-line Lexical Database, էջ 28:

չի կարող դառնալ հայերենի համակարգչային շտեմարանի հիմք: Անշուշտ, խիստ թերի է կատարվել, ասենք, գոյականների՝ հասկացական 25 դաշտերի բաժանվելը: Արդյո՞ք գոյականների միջև գործող իմաստային հարաբերությունները միայն հիպերնիմություն-հիպոնիմություն և մերոնիմություն-հոլոնիմություն զույգերն են, և որչափո՞վ դրանք կարտահայտեն հայերենի գոյականների անվանական-հասկացական հարաբերությունները: Նույն կերպ էլ խիստ կասկածելի է բայիմաստների միջև միայն հիպերնիմային, տրոպոնիմային և իմաստային հանգեցման հարաբերություններ առանձնացնել՝ հաշվի առնելով բայ խոսքի մասի բազմիմաստությունն ու ձևառատությունը: Հետևաբար, օգտվելով բառային հենքերում եղած լեզվական նյութից, պետք է բոլորովին նոր սկզբունքներով ու եղանակներով կատարել հայերենի բառապաշարի իմաստային դասակարգումը: Սակայն, եթե հայերենի բառապաշարի իմաստային դասակարգումը նկատելի տարբերություններ հանդես բերի WordNet-ի և UNL-ի հետ, ինչպե՞ս կկարողանանք մեր շտեմարանը կիրառելի դարձնել UNL համակարգում և փոխգործակցելի WordNet-ի հետ: Այս առումով պետք է հաշվի առնել հետևյալ հանգամանքը. բարեբախտաբար դրանցում կարևորվում է հասկացությունների ներկայացումը, իսկ հասկացությունները բոլոր լեզուներում էլ նույնն են: Տարբեր լեզուներում տարբեր են միայն այդ հասկացություններն անվանող բառերը: Ուստի մեր շտեմարանը գուցե կտարբերվի բառապաշարի՝ ըստ հասկացական տարբեր դաշտերի առավել լիակատար ներկայացմամբ ու նկարագրությամբ, բայց ոչ տրամաբանական անհամատեղելիությամբ:

Ներկայացվելիք բառապաշարի ընտրություն կատարելուց հետո անհրաժեշտ է սկզբունքներ մշակել դրանք ներկայացնելու համար, այլ կերպ ասած՝ ինչպե՞ս պետք է նկարագրվեն բառամիավորները հայերենի նորաստեղծ բառային շտեմարանում: Եթե բառերի իմաստային դասակարգման ժամանակ ինչ-որ չափով կարող ենք հետևել WordNet-ի սկզբունքներին, ապա բառամիավորների ներկայացման ժամանակ WordNet-ում մեզ համար օրինակելի շատ քիչ բան կա: Մեր շտեմարանում բառերի լիակատար ձևաիմաստային և շարահյուսական նկարագրությունը տալու համար, կարծում ենք, որ պետք է բառամիավորները նկարագրվեն հետևյալ սկզբունքներով.

1. Հնչյունական

Այս սկզբունքով նկարագրել կնշանակի տալ բառի կազմի մեջ մտնող հնչյունների արտաքին հնչյունական կողմի նկարագրությունը, արտասանությունը, հնչյունափոխությունը, վանկատել բառը, ներկայացնել գիտական տառադարձումը: Ճիշտ է, բառային հենքերում բառի արտասանությունը չի ներկայացվում: Հայերեն տպագիր և էլեկտրոնային բառարաններում էլ, հաշվի առնելով գրության և արտասանության միջև եղած ոչ նկատելի տարբերությունները, բառերի արտասանությունը չի տրվում: Սակայն կարծում ենք, որ մեր շտեմարանում ճիշտ կլինի բառի ուղղագրությանը զուգահեռ ներկայացնել նաև դրա արտասանությունը: Ինչ խոսք, արևելահայերիս համար հայերեն բառերն արտասանելն առանձնակի դժվարություն չի ներկայացնում, բայց եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ այդ շտեմարանից օգտվողների մի մասը տարբեր հանգա-

մանքների բերումով ապրում է Հայաստանից դուրս, հայերեն քիչ գիտի կամ ընդհանրապես չգիտի, և նրա համար հայերեն սովորելը նման է օտար լեզու սովորելուն, իսկ հայերեն բառեր սովորելը՝ օտար լեզվի բառեր սովորելուն, շտեմարանը նրա համար ոչ միայն բառի մասին ամբողջական լեզվական ու հանրագիտարանային բնույթի տեղեկատվություն ստանալու, այլև այդ բառի ճիշտ գրական արևելահայերեն արտասանությունը լսելու բացառիկ հնարավորություն է:

2. Բառագիտական

ա. Իմաստաբանական (ամենից առաջ կներկայացվեն բառիմաստային (բառիմաստի բացատրությունը, ուղղակի և փոխաբերական իմաստներ, հոմանիշներ, հականիշներ, համանուններ, հարանուններ), ապա՝ հասկացական հարաբերությունները՝ հիպերնիմություն, հիպոնիմություն, հոլոնիմություն, տրոպոնիմություն և այլն),

բ. Բառակազմական (կներկայացվի բառի ձևույթային կազմը, կառանձնացվեն բառի արմատներն ու ածանցները): Նկատենք, որ ո՛չ տպագիր ու էլեկտրոնային բառարաններում և ո՛չ էլ ուրիշ լեզուների համար մինչև այժմ կազմված շտեմարաններում բառի բառակազմական բնութագիրը չի ներկայացվում: Մեր շտեմարանում, սակայն, բառի բառագիտական լիակատար բնութագիրը ներկայացնելու համար ճիշտ կլինի տալ նաև դրա կազմությունը:

գ. Ստուգաբանական (կտրվի բառի ստուգաբանությունը): Տպագիր բառարաններում, ինչպես հայտնի է, բառի ստուգաբանությունը բառիմաստի բացատրությանը զուգահեռ չի ներկայացվում: Հայերեն էլեկտրոնային բառարաններում ևս որոնված բառի ստուգաբանությունը չի տրվում, ուստի հայերեն որևէ բառի ստուգաբանությունն իմանալու միակ եղանակը Հրաչյա Աճառյանի «Հայերեն արմատական բառարանում» փնտրելն է: Մինչդեռ օտարալեզու էլեկտրոնային բառարանների հիմնական մասում բառիմաստի բացատրությունից, հոմանիշների, հականիշների ներկայացումից զատ՝ տրվում է նաև այդ բառի ստուգաբանությունը: Որքան էլ զարմանալի է, բառային հենքերում ևս բառի ստուգաբանությունը չի ներկայացվում: Սակայն բառը լիակատար ներկայացնելու համար անհրաժեշտ է տալ նաև դրա ստուգաբանությունը. ճիշտ կլինի, որ հայերենի հանակարգչային շտեմարանում տրվի որոնված բառի ստուգաբանությունը:

3. Քերականական

Բառի քերականական հատկանիշները ներկայացնելիս հատկապես կկարևորվի ձևաբանական բնութագիրը (կտրվի բառաձևի խոսքամասային պատկանելությունը, այդ խոսքի մասին հատուկ քերականական կարգերը): Ներկայիս բառային հենքերում խիստ թերի է կատարվում բառաձևի նկարագրությունը: Օրինակ՝ որևէ կերպ չեն ներկայացվում բառաձևերը, նույնիսկ եթե որևէ ժամանակաձևով բայ մուտքագրենք, որոնման դեպքում ոչինչ չի հայտնվի: Այս առումով տպագիր բառարաններն ավելի նախընտրելի են, քան բառային հենքերը: Օրինակ, եթե անգլերենի WordNet մուտքագրենք to eat «ուտել» բայի անցյալ անորոշի ձևը՝ ate-ը, որոնմամբ որևէ բան չենք գտնի, իսկ այդ բառը անգլերենի տպագիր ցանկացած բառարանում ոչ միայն նշված է, որ դա to eat-ի անցյալի ձևն է, այլև հղվում է to eat բային: Այս հանգամանքը հաշվի առնելով էլ՝ կարծում ենք, որ հայերենի

համակարգչային շտեմարանը լիակատար կլինի, եթե դրանում բառաձևերն էլ բառամիավորների պես ամբողջական ու համակողմանիորեն ներկայացվեն:

Այս ամենից բացի՝ շտեմարանը կարող ենք վերածել նաև թարգմանական բառարանի: Կարելի է որոնված բառի թարգմանության համար կան հղում տալ համապատասխան լեզվի բառային հենքին, ընդ որում ոչ միայն բառի, այլև մասնավոր բառիմաստի դեպքում, կան հղում տալ այդ լեզվի թարգմանական առցանց լավագույն բառարաններին:

Այսպիսով՝ համակարգչային շտեմարանում բառերը կներկայացվեն հետևյալ կերպ. ա) տվյալ հասկացությունն արտահայտող բառը կներկայացվի այդ իմաստով իր հոմանշային շարքով, բ) փակագծերի մեջ կտրվի տվյալ բառիմաստի բացատրությունը, գ) կբերվի օրինակ-նախադասություն, դ) կտրվեն այդ բառի հականիշ(ներ)ը, ե) կներկայացվեն այդ բառով կազմված արտահայտություններն ու դարձվածքները:

Պատկերացնելու համար, թե ընդհանուր գծերով ինչպես կարող են բառամիավորները ներկայացվել ժամանակակից հայերենի բառապաշարի համակարգչային շտեմարանում, ներկայացնենք **սենյակ** բառի նկարագրությունը: Ծավալային նկատառումներով չենք կարող տալ այդ բառի և՛ հնչյունական, և՛ բառագիտական, և՛ քերականական բնութագիրը. կներկայացնենք միայն իմաստային բնութագիրը՝ բառիմաստային և հասկացական հարաբերություններով:

Սենյակ

• **Յ: (գոյ) սենյակ**, սրահ, դահլիճ (բնակարանի կամ շինության յուրաքանչյուր բաժանմունք, որ մյուսներից բաժանվում է պատերով) {Նա դուրս եկավ սենյակից}:

○ **Յականիշ**

○ -----

○ **Արտահայտություն**

○ **Յ: (գոյ)** սենյակի երկարությունը չափել (սենյակում քայլել)

Իմաստային հարաբերություններից հետո կներկայացվեն հասկացական հարաբերությունները՝

○ **Ուղիղ հիպոնիմ / հիպոնիմային շարք**

○ **Յ: (գոյ)** պալատ (թագավորի բնակության շքեղ շենք)

○ **Յ: (գոյ)** նախասենյակ (շենքի մուտքի առջև կառուցված փոքրիկ շինվածք).....

○ **Մերոնիմ**

○ **Յ: (գոյ)** առաստաղ (շինության ծածկի ներսի մասը)

○ **Յ: (գոյ)** դուռ (ելումուտ անելու բացվածք պատի, պարսպի և այլնի վրա)

○ **Յ: (գոյ)** պատ (շինության կառույցի ուղղահայաց մասը, որ ծառայում է որպես ծածկի հենարան և շենքը մասերի բաժանող պատ)

○ **Յ: (գոյ)** պատուհան (օդ և լույս ստանալու համար պատի մեջ բացված անցք)

○ **Յուլոնիմ**

○ **Յ: (գոյ)** շենք, շինություն (շինություն, կառուցվածք):

Հայերենի բառապաշարի համակարգչային շտեմարանի կազմության առաջարկվող սկզբունքները, ինչ խոսք, հեռու են վերջնական լինելուց:

Դրանք պետք է առավել խորությամբ ուսումնասիրել և մշակել, սակայն վստահ ենք, որ հայերենի բառապաշարի նոր սկզբունքներով կազմված համակարգչային շտեմարանը կծառայի ինչպես բուն լեզվաբանական, այնպես էլ ոչ լեզվաբանական նպատակներին: Օրինակ՝ այն կծառայի թե՛ հայերեն իմացող յուրաքանչյուր մարդու, որ ցանկանում է շտեմարանից որևէ բառի մասին բառային տեղեկատվություն ստանալ, թե՛ մասնագետ-լեզվաբաններին, որոնք հետազոտական աշխատանքներ կատարելիս իրենց որոնած բառի մասին շտեմարանից կստանան լեզվական տեսակետից տարաբնույթ օգտակար տեղեկատվություն, թե՛ այն մարդկանց, որոնք հայերենին լավ չեն տիրապետում և կօգտագործեն շտեմարանը ուսումնական նպատակով: Շտեմարանը կլինի նրանց լեզվական գիտելիքներ հաղորդելու կամ ունեցած գիտելիքները հարստացնելու միջոց: Ինչ վերաբերում է շտեմարանի՝ լեզվաբանական նպատակներով կիրառությանը, ապա կարող ենք վստահորեն ասել, որ այն զարգացման միանգամայն նոր աստիճանի ու որակի կհասցնի տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում հայերենի կիրառությունը: Այս սկզբունքներով կազմված շտեմարանը կօժանդակի ինչպես տեսական-լեզվաբանական, այնպես է գործնական-կիրառական հարցերի ուսումնասիրությանը, կլինի ավելի լիակատար և առավել հաջողությամբ կծառայի ինչպես մեքենական թարգմանության, այնպես էլ հետազոտական բազմազան ծրագրերի իրագործմանը (տեղեկատվության ավտոմատ մշակում, ավտոմատ սրբագրություն ու խմբագրում և այլն):

Բանալի բառեր – *համակարգչային բառարանագրություն, բառարանագրություն, բառարան, տպագիր բառարան, էլեկտրոնային բառարան, բառային հենք, շտեմարան, բառապաշարի համակարգչային շտեմարան*

ФРИДА АКОПЯН – Предварительная схема построения электронного банка данных лексики современного армянского языка. – Статья основана на методах формального описания значений, используемых в современных электронных словарях и базах данных. В ней предложены принципы построения электронного лексического банка данных современного армянского языка. Предполагаемый банк данных поможет как разработке некоторых теоретических проблем компьютерной лингвистики, так и решению различных прикладных задач.

Ключевые слова: *компьютерная лексикография, словарное описание, печатный словарь, электронный словарь, компьютерные лексические базы данных*

FRIDA HAKOBYAN – An Outline of Building a Lexical Database for the Armenian Language. – This article describes the suggested principles of the construction, a freely-available lexical database for the Armenian language by using types of meaning representations based on other electronic dictionaries and various lexical databases. It is noted that a newly constructed lexical database will be a valuable resource and will have different kinds of applications.

Key words: *computational linguistics, lexicography, computational lexicography, electronic lexicography, dictionary, electronic dictionary, database, lexical database*

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ՅՈՒՆԿՆԵՍ ԽԱՉԱՏՈՒՐԻ ԲԱՐՍԵՂՅԱՆ (հայագիտության երախտավորը)

2014 թ. օգոստոսի 4-ին կյանքի 94-րդ տարում վախճանվեց անվանի լեզվաբան-հայերենագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Յովհաննես Խաչատուրի Բարսեղյանը:

Պրոֆ. Յ. Բարսեղյանը եղավ հայկական երեք հանրապետությունների ուղեկիցը. նա ծնվել է Առաջին (անկախ) հանրապետությունում (1920 թ. հոկտեմբերի 25, Թալինի շրջ., գ. Մաստարա), իր կյանքի հիմնական տասնամյակներն ապրել է Երկրորդ (խորհրդային) հանրապետության շրջանում, իսկ վերջին՝ շուրջ երկուսուկես տասնամյակը՝ Երրորդ (անկախ) հանրապետության ժամանակաշրջանում:



Յետադարձ հայացք ձգելով նրա անցած իննսուներեքամյա ճանապարհին՝ այն կարելի է բնորոշել որպես **իր երկրին ու ժողովրդին նվիրումի, քաղաքացիական ակտիվ դիրքորոշման, մայրենի լեզվի անադարտության համար պայքարողի, գիտության ճշմարիտ ջահակրի անցած ուղի**: Այս բնութագրերից յուրաքանչյուրի ետևում անհանգիստ ու մշտապես որոնող խառնվածքով, դժվարությունների (այդ թվում՝ իշխանավորների կամայականությունների) առջև չընկրկող, հասարակական ու քաղաքացիական կյանքի իր պատկերացրած նորմերը սեփական կենսակերպով հաստատող, երբեմն բռնկուն, երբեմն էլ խաղաղ-հուզական, բայց և ցանկացած իրավիճակում ոգու կորովն ու մտքի հստակությունը պահպանող Յովհաննես Բարսեղյանի արժանապատվորեն ապրած կյանքն է:

Յովհաննես Բարսեղյան մարդու նկարագրի ակներև վկայությունն է այն, որ լինելով ԵՊՀ լեզվագրական ֆակուլտետի IV կուրսի ուսանող՝ նա կամավոր մասնակցում է Յայրենական մեծ պատերազմին: Նախքան մարտադաշտ մտնելը՝ մինչև 1942 թ. հունվարի 15-ը, սովորում է Բաքվի ռազմական հետևակային ուսումնարանում, ապա իբրև վաշտի հրամանատար՝ մասնակցում է Ղրիմի, իսկ 1943-ից՝ Յյուսիսային Կովկասի համար մղվող մարտերին: Այդ ընթացքում նա երեք անգամ վիրավորվում է, որի պատճառով գորացրվում է և շարունակում անավարտ թողած ուսումը: Ուշագրավ է, որ ուսումնառությանը զուգահեռ Յ. Բարսեղյանը աշխատել է Յայկական պետական մանկավարժական հեռակա ինստիտուտի հատուկ ամբիոնում՝ որպես ռազմագիտության դասախոս:

1945-ին Հ. Բարսեղյանն ընդունվում է ասպիրանտուրա «Հայոց լեզու» մասնագիտության գծով, որը ավարտում է 1948-ին, իսկ 1952-ին պաշտպանում է թեկնածուական ատենախոսություն «Վրդի հայերենի բայի և խոնարհման տեսություն» թեմայով (նույնամյա գիրքը լույս է տեսել 1953 թ.): Պիտի խոստովանել՝ առնվազն հայերենագիտության մեջ մեծ չէ այն թեկնածուական ատենախոսությունների թիվը, որոնք իսկապես իրենցից գիտական արժեք են ներկայացնում: Ի պատիվ Հ. Բարսեղյանի՝ նրա առաջին ուսումնասիրությունը ոչ միայն իր գիտական ժառանգության ամենից արժեքավոր նվաճումներից է, այլև նախորդ դարի կեսերի հայ լեզվաբանական մտքի կարևոր ձեռքբերումներից:

Գիտական նվաճումների հաջորդ կարևոր հանգրվանը դոկտորական ատենախոսության պաշտպանությունն էր 1981 թ.՝ «Հայերենի խոսքի մասերի ուսմունքը» թեմայով: Ավելի քան 500 էջանոց այս մենագրության մեջ պրոֆ. Հ. Բարսեղյանը քննական մոտեցմամբ ներկայացնում է հայերենի խոսքի մասերի դասակարգումները՝ սկսած Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստի» մեկնություններից (V դ.) մինչև իր ժամանակները, ապա ներկայացնում է իր տեսությունը՝ խոսքի մասերի դասակարգման նախընտրելի հիմունքը համարելով «բառերի իմաստագործառական հատկանիշը»:

1946-ից (դեռևս ասպիրանտ) մինչև 2004 թ. Հ. Բարսեղյանը դասավանդել է ԵՊՀ-ում՝ դասախոսական աշխատանքի հետ զբաղեցնելով ԵՊՀ կուրսկոմիտեի առաջին քարտուղարի (1969-1972), հայոց լեզվի ամբիոնի վարիչի (1969-1976), ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկանի (1977-1985), ԵՊՀ հայոց լեզվի պատմության ամբիոնի հիմնադիր վարիչի (1985-1990) պաշտոնները: 1955-1991 թթ. Հ. Բարսեղյանը եղել է ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր տերմինաբանական կոմիտեի, իսկ 1992-2004 թթ.՝ ՀՀ ԲԿՄ բարձրագույն խորհրդի գիտքարտուղարը: Երեք տարի՝ 1955-1957 թթ., հանգամանքների բերումով աշխատել է ԵՊՀԵՄԻ հայոց լեզվի ամբիոնում՝ որպես դոցենտ: Շուրջ երեք տասնամյակ Հ. Բարսեղյանը եղել է բանասիրության գծով գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի անդամ, իսկ 2006-2008 թթ.՝ այդ խորհրդի նախագահ, ապա հրաժարվել է առաջացած տարիքի պատճառով: 2010 թ. ընտրվել է Եվրոպական գիտությունների և արվեստների միջազգային ակադեմիայի իսկական անդամ:

Հովհաննես Բարսեղյանի կենսագրության այս ուրվագիծը կարելի է ամբողջացնել նույնքան կարևոր այլ տվյալների թվարկումով ևս (դրանց ամբողջական ցանկը ներկայացված է նրա 90-ամյակի առիթով հրատարակված «Կենսամատենագիտության»¹ մեջ), սակայն դրանց սոսկական թվարկումը շատ քիչ բան կսսի հիրավի ինքնատիպ և ծանրակշիռ գիտական ու մանկավարժական վաստակ ունեցող այն անհատականության մասին, որի ոչ միայն աշխատությունները, այլև կուռ ու կազմակերպված բանավոր խոսքը ինչպես դասախոսությունների ընթացքում, այնպես էլ այլ առիթներով մշտապես դեպի իրեն են ձգել ունկնդիրների ուշա-

¹ Տե՛ս «Հովհաննես Բարսեղյան. կենսամատենագիտություն», Եր., 2011:

դրությունը, իսկ դրանց դասախոսին դարձրել են ուսանողության տասնյակ սերունդների սիրելին: Եվ բնավ էլ պատահական չէր այն համընդհանուր ցավն ու ափսոսանքը, որ նրա մահվան օրերին կարելի էր լսել իր նախկին ուսանողներից կամ ընթերցել էլեկտրոնային մամուլի էջերում:

Իր մանկավարժական գործունեության ընթացքում պրոֆ. Յ. Բարսեղյանը վարել է հայերենագիտական («ժամանակակից հայոց լեզու», «Հայոց լեզվի պատմություն», «Հայոց լեզվի պատմական քերականություն» և այլն) և ընդհանուր լեզվաբանական («Լեզվաբանության ներածություն») դասընթացներ, սակայն նրա գիտական հետաքրքրությունների բուն ոլորտը հայոց լեզուն էր՝ գրաբարից մինչև արդի հայերեն՝ իր բոլոր դրսևորումներով: Նա հեղինակել է տասը մենագրություն՝ զուգահեռաբար գործուն մասնակցություն ունենալով ինչպես «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանի» կազմման, այնպես էլ տերմինաբանական կոմիտեի աշխատանքներին: Այդ տարիներին (1964-2006) նա պարբերաբար կազմել և հրատարակել է «Տերմինաբանական ուղեցույցի» (ապա՝ «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատուի») 6 համար՝ ամեն անգամ այն ամբողջացնելով նոր նյութերով:

Յ. Բարսեղյանի գիտական ժառանգության մեջ հատուկ կարևորություն ունի «Հատուկ անուն. տեսական, նկարագրական ակնարկ» մենագրությունը, որի առաջին հատվածը՝ «Հատուկ անվան հասկացությունը», երևույթի տեսական ակնարկ է ընդհանուր լեզվաբանական մոտեցումով, մյուս երկու հատվածներում՝ «Հատուկ անվան տեսակները», «Հատուկ անվան տառադարձությունն ու ուղղագրությունը», ներկայացվում է հայերենի համապատասխան նյութը, իսկ «Հավելվածում» «թվարկվում են այն տեղանուններն ու անձնանունները, որոնց ուղղագրությունը կամ տառադարձությունը հաստատված է տերմինաբանական կոմիտեի համապատասխան որոշումներով»²:

Յ. Բարսեղյանն այն երեք անխոնջ գիտնականներից էր՝ պրոֆեսորներ Թ. Հակոբյանի և Ստ. Մելիք-Բախշյանի հետ միասին, ովքեր ավելի քան երեսուն տարվա համառ աշխատանքով կարողացան ստեղծել հայ բառարանագրության գլուխգործոցներից մեկը՝ «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանը»: 720 մամուլ ծավալով (շուրջ 5000 էջ) հինգհատորանոց այս բառարանը, որի վերջին՝ հինգերորդ հատորը լույս տեսավ 2001 թ., երբ չկային մյուս երկու հեղինակները, հիրավի, նշված գիտնականների կյանքի մեծագույն գործն է: Թե հին պատմություն և մշակույթ ունեցող յուրաքանչյուր ժողովրդի համար ինչ նշանակություն ունի այդպիսի բառարանը, և ինչպիսի դժվարություններ պիտի հաղթահարել այն ստեղծելու համար, լավագույնս վկայում է այն հանգամանքը, որ նման բառարան կազմելու նախնական աշխատանքներ ձեռնարկել է նաև բազմավաստակ գիտնական և բառարանագիր Յ. Աճառյանը, բայց և շուտով հրաժարվել այդ մտքից՝ զգալով, որ «այդպիսի բառարան ստեղծելու համար անհրաժեշտ է մարդկային սովորական կյանքին ավելացնել.... ևս

² Յ. Խ. Բարսեղյան, Հատուկ անուն. տեսական, նկարագրական ակնարկ, Եր., 1964, էջ 107:

«մի քանի տասնյակ տարի»³: Բառարանագրական այս գլուխգործոցը թե՛ աշխատանքային ծավալներով, թե՛ նշանակությամբ և թե՛ կատարման որակով (որ ամենից կարևորն է) իրավամբ կարող է համեմատվել **Նոր հայկազյան բառարանի** հետ:

Կյանքի վերջին շրջանում Յ. Բարսեղյանը, հրաժարվելով դասախոսական աշխատանքից, ձեռնամուխ եղավ «Հայաստանի պատմական և արդի տեղանունների բառարան» ստեղծելու աշխատանքին՝ հիմք ընդունելով «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանի» շուրջ մեկ միլիոն քարտ պարունակող շտեմարանի տվյալները: Այս նախաձեռնության նպատակն էր, մի կողմից, լրացնել վերոհիշյալ բառարանի բացթողունները և ուղղել տեղ գտած վրիպումները, մյուս կողմից, նրանում արտացոլել վերջին քսան տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում և հարակից շրջաններում (ըստ էության Պատմական Հայաստանի տարածքում)⁴ տեղի ունեցած վարչատարածքային, աշխարհաքաղաքական, ժողովրդագրական և տեղանվանական փոփոխությունները: Չնայած առաջացած տարիքին՝ Հովհաննես Բարսեղյանին հաջողվեց գլուխ բերել տեղանունների բառարանի իր՝ եռահատոր տարբերակը, որի առաջին հատորը արդեն լույս է տեսել:

Պիտի նշել, որ Յ. Բարսեղյանը բառարանագրական հարուստ փորձ ու վաստակ ունի, դեռևս 1973 թ. նա հրատարակել էր «Հայերեն ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական բառարանը», որն իր տեսակի մեջ առաջին ամենից ընդգրկուն (պարունակում է շուրջ 152000 բառահոդված) և միանգամայն հաջողված փորձն է հայերենագիտության մեջ: Նրանում տրված են ոչ միայն գործածվող տերմինների բազմաձևությունները, այլև ամբողջացված են գիտության առանձին ճյուղերի տերմինները: Ըստ ամենայնի, ինչպես «Հատուկ անուն» մենագրության, այնպես էլ ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական բառարան գրելու գաղափարը պրոֆ. Յ. Բարսեղյանը մտահղացել է տերմինաբանական կոմիտեում ծավալած գործունեության ընթացքում:

Հնարավոր չէ խոսել Յ. Բարսեղյանի գիտամանկավարժական գործունեության մասին, առանց հիշելու ակադ. Է. Աղայանի հետ ստեղծած «Հայոց լեզու. հնչյունաբանություն» (IV դասարանի համար) և «Հայոց լեզու. ձևաբանություն» (V-VII դասարանների համար) դպրոցական դասագրքերը, որոնցով տասնամյակներ շարունակ հայերենի հիմունքներն են ուսանել աշակերտների տասնյակ սերունդներ:

Յ. Բարսեղյանի մարդկային նկարագրի կարևոր գծերից էր այն, որ նա ոչ միայն իր անվանի ուսուցիչների (Ս. Աբեղյան, Յ. Աճառյան, Գ. Ղափանցյան, Գ. Սևակ) երախտագետ սանն էր և առիթը բաց չէր թողնում նրանց գիտական վաստակը արժևորելու, այլև իր արժանավոր ժամանակակիցների, օր.՝ ակադ. Գ. Ջահուկյանի առաջին գնահատողներից էր: Այս

³ Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախշյան, Յ. Խ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Եր., 1986, էջ VIII:

⁴ Եթե «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանը» ի սկզբանե անվանվեր այնպես, ինչպես Յ. Բարսեղյանն անվանեց իր եռահատորը, ապա հասկանալի պատճառներով, պարզապես կարգելվեին նրա ստեղծման աշխատանքները...

առունով ուշագրավ են հատկապես Գ. Ջահուկյանի 70-ամյա հոբելյանի առիթով նրա գրավոր ակնարկը «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի էջերում և բանավոր ելույթները գիտակրթական տարբեր հաստատություններում:

90-ամյա Յ. Բարսեղյանը տպագրության էր պատրաստել «Հայերենագիտությունը իմ ուսուցիչների և գործընկերների գնահատմամբ» ժողովածուն և ձեռնարկել էր գրելու «Արդի հայերենի գոյականի և հոլովման տեսություն» աշխատությունը: Այս ամենը վկայում է, որ պրոֆ. Բարսեղյանին, վերը հիշված բնութագրերից բացի, հատուկ էր նաև մեծ աշխատասիրությունը, և այդ առունով ևս նա իր անվանի ուսուցիչների արժանավոր շարունակողներից էր: Դրանով հանդերձ՝ նա առանձնապես գոհ չէր իր ստեղծած գիտական վաստակից. երբեմն դժգոհում էր, որ, երկար տարիներ դասավանդելով «Հայոց լեզվի պատմական քերականություն» առարկան, չի գրել համապատասխան աշխատություն:

Պրոֆեսոր Յ. Բարսեղյանը հայերենագիտության երախտավորներից էր, այն ճշմարիտ մեծերից, որոնց կորուստը նույնիսկ առաջացած տարիքում չի կարող ցավ չպատճառել:

ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԶԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ
INFORMATION ABOUT THE AUTHORS

- 1. ՎԱԶԳԵՆ ՍԱՖԱՐՅԱՆ** – բանասիրական գիտությունների դոկտոր, ԵՊՀ հայ գրականության ամբիոնի պրոֆեսոր
ВАЗГЕН САФАРЯН – доктор филологических наук, профессор кафедры армянской литературы ЕГУ
VAZGEN SAFARYAN – Sc. D. in Philology, Professor of the Chair of Armenian Literature, YSU
- 2. ԱՍՏԳԻԿ ԲԵԿՄԵԶՅԱՆ** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի դոցենտ
АСТХИК БЕКМЕЗЯН – кандидат филологических наук, доцент кафедры теории литературы и литературной критики ЕГУ
ASTGHİK BEKMEZYAN – PhD, Associate Professor of the Chair of the Theory of Literature and Literary Criticism, YSU
Էլ. փոստ՝ astghik.bekmezyan@gmail.com
- 3. ՆԱԻՐԱ ԵԼԻՆՅԱՆ** – բանասիրական գիտությունների թեկնածու, Երևանի «Հայբուսակ» համալսարանի ռուսաց լեզվի և արտասահմանյան գրականության ամբիոնի դասախոս
НАИРА ЕЛИНЯН – кандидат филологических наук, преподаватель кафедры русского языка и зарубежной литературы ереванского университета «Айбу-сак»
NAIRA YELINYAN – PhD, Lecturer of the Chair of Russian Language and Foreign Literature, Yerevan "Haybusak" University
- 4. ԶՈՒԽՐԱ ԵՐՎԱՆԴՅԱՆ** – բանասիրական գիտությունների թեկնածու, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի հայոց և ռուսաց լեզուների ամբիոնի դասախոս
ЗУХРА ЕРВАНДЯН – кандидат филологических наук, преподаватель кафедры армянского и русского языков Армянского государственного университета экономики
ZUKHRA YERVANDYAN – PhD, Lecturer of the Chair of Armenian and Russian Languages, Armenian State University of Economics
- 5. ԱՐՏԱՇԵՍ ՍԱՐԳՍՅԱՆ** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի դոցենտ
АРТАШЕС САРКИСЯН – кандидат филологических наук, доцент кафедры армянского языка ЕГУ
ARTASHES SARGSYAN – PhD, Associate Professor of the Chair of the Armenian Language, YSU
- 6. ԼՈՒԻԶԱ ՄԵԼԿՈՆՅԱՆ** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի ասիստենտ
ЛУИЗА МЕЛКОНЯН – кандидат филологических наук, ассистент кафедры армянского языка ЕГУ
LUIZA MELKONYAN – PhD, Assistant Professor of the Chair of the Armenian Language, YSU
Էլ. փոստ՝ melqonyanluiza@mail.ru
- 7. ՖՐԻԴԱ ԶԱԿՈՔՅԱՆ** – ԶԶ ԳԱԱ Զ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հայցորդ

ФРИДА АКОПЯН – соискательница Института языка им. Р. Ачаряна НАН РА

FRIDA HAKOBYAN – Dissertee of the Institute of Language after H. Acharyan of NAS RA

8. **ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ** – բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊՀ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչ

ВАРДАН ПЕТРОСЯН – кандидат филологических наук, доцент, заведующий кафедрой общего языкознания ЕГУ

VARDAN PETROSYAN - PhD, Associate Professor, Head of the Chair of General Linguistics, YSU

**«ԲԱՆՔԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ» ՀԱՆԴԵՍԻ «ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ»
ՀԱՐՔԻ 2014 Թ. ՀԱՄԱՐՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Բեքմեզյան Աստղիկ – Բառի համատեքստային իմաստավորումը Հոլվի. Թումանյանի քառյակներում	3.15*
Ելինյան Նահրա – Ժամանակակից մարդու դրաման Հարոլդ Փինթերի «Ծննդյան օր» պիեսում	3.26
Երվանդյան Ջուխրա – Սուշեղ Գալշոյանի ակնարկների գեղագիտական աշխարհը	3.34
Հովհաննիսյան Սուսաննա – Թումանյանը Էդվարդ Ջրբաշյանի կյանքում	1.24
Ջանփոլադյան Սազդա – Գրական ազդեցությունների և կապերի խնդիրները Էդ. Ջրբաշյանի աշխատություններում (ռուս.).....	1.32
Սաֆարյան Վազգեն – Աբովյանի բանաստեղծության ակունքներում	3.3
Ստեփանյան Սերգեյ – Պաուլ Ցելանի Radix, Matrix բանաստեղծության վերլուծության փորձ	1.16
Քալանթարյան Ժենյա – Գրականագիտության բազմադիմությունը	1.3

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբրահամյան Աշոտ – Էդուարդ Աղայանի ներդրումը տեսական լեզվաբանության և նրա ուսուցման մեջ	2.15
Ավետյան Սարգիս – Հայերեն բարբառային ուլա հնչյունակապակցության առաջացման հարցի շուրջ	2.95
Գաբրիելյան Յուրի – Հարաժամանակայնությունը որպես լեզվի ուսումնասիրության հայեցակետ	1.42
Գևորգյան Գայանե – Հայերենի բարբառների եղանակաժամանակային կազմությունների կառուցվածքային քննություն	2.88
Դիլբարյան Նարինե – Գեորգ վարդապետ Մեղրիկի աղոթքների լեզուն	1.50
Եպիսկոպոսյան Դավիթ – Հորդորի և հրամանի դրսևորման առանձնահատկություններն անգլերենում.....	1.68

* Թվերից առաջինը նշանակում է «Բանբեր Երևանի համալսարանի» «Հայագիտություն» շարքի համարը, իսկ երկրորդը՝ հոդվածի էջը:

Կարապետյան Սիրարփի – Որոշիչ-որոշյալ կապակցությամբ բարդությունները հայերենում և անգլերենում	1.61
Հակոբյան Ֆրիդա – Հայերենի բառապաշարի համակարգչային շտեմարանի կառուցման ուրվագիծ	3.60
Հանանյան Գաղթուհի – Աղայանը բարբառագետ.....	2.50
Հայրապետյան Աշոտ – Բառակերտությունը որպես լեզվի ստեղծագործական հատկանիշի իրացման միջոց	2.23
Հարությունյան Խաչիկ – Հոլովման համակարգը XV դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններում	2.123
Հարությունյան Ծովհնար – Հունարեն Χαριτες - հայերեն Ձիրք	2.132
Հովհաննիսյան Հասմիկ – Աղմկային բաղաձայնների կոկորդային վարքագիծը հայերենում. շնչեղացում և վանկային սահմաններ	2.68
Հովհաննիսյան Սիրանուշ – Էլեկտրոնային տեքստի ընդհանուր բնութագիրը խոսքի այլ տեսակների զուգադրությամբ	2.136
Մելքոնյան Լուիզա – Արևմտահայերենից արևելահայերեն բառերի ներթափանցման ուղիները	3.53
Սկրտչյան Նելլի – Լատիներենի առաջին հայերեն դասագիրքը	2.59
Շահվերդյան Թերեզա – Գրաբարի հնչույթային համակարգն ըստ Է. Աղայանի.....	2.31
Պետրոսյան Վարդան – Հնչույթի տեսության հոլովույթը Է. Աղայանի աշխատություններում	2.3
Պողոսյան Նորայր – Դարձվածային նոր միավորներ XVI–XVIII դարերի հայերեն աղբյուրներում.....	2.107
Սարգսյան Արտաշես – Քերականական համաձայնության սահմանումը	3.45

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Պետրոսյան Վարդան – Հովհաննես Խաչատուրի Բարսեղյան (հայագիտության երախտավորը).....	3.71
---	-------------

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ * СОДЕРЖАНИЕ * CONTENTS

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ LITERARY CRITICISM

- Վազգեն Սաֆարյան** – Արվյանի բանաստեղծության ակունքներում..... 3
Vazgen Safaryan – У истоков поэзии Абовяна
Vazgen Safaryan – At the origins of Abovian's poetry
- Աստղիկ Բեքմեզյան** – Բառի համատեքստային իմաստավորումը Հովհ. Թումանյանի քառյակներում 15
Астхик Бекмезян – Контекстное осмысление слова в четверостишиях О. Туманяна
Astghik Bekmezyan – Context Comprehension of the Word in the Quatrains of H. Tumanyan
- Նաիրա Ելինյան** – Ժամանակակից մարդու դրաման Հարոլդ Փինթերի 26
«Ծննդյան օր» պիեսում
Наира Елинян – Драма современного человека в пьесе Гарольда Пинтера "День рождения".
Naira Yelinyan – The Drama of the Contemporary Man in the Play "Birthday" by Harold Pinter
- Ջուխրա Երվանդյան** – Սուշեղ Գալշոյանի ակնարկների գեղագիտական 34
աշխարհը
Зухра Ервандян – Эстетический мир очерков Мушега Галшояна
Zukhra Yervandyan – The Aesthetic world of Mushegh Galshoyan's essays

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ЯЗЫКОЗНАНИЕ LINGUISTICS

- Արտաշես Սարգսյան** – Քերականական համաձայնության սահմանումը .. 45
Арташес Саркисян – Определение грамматического согласования
Artashes Sargsyan – The Definition of Grammatical Agreement
- Լուիզա Մելքոնյան** – Արևմտահայերենից արևելահայերեն բառերի ներ- 53
թափանցման ուղիները
Луиза Мелконян – Пути проникновения слов из западноармянского языка в восточноармянский
Luiza Melkonyan – The Ways of Penetration of Words from Western Armenian to Eastern Armenian
- Ֆրիդա Հակոբյան** – Հայերենի բառապաշարի համակարգչային շտեմա- 60
րանի կառուցման ուրվագիծ
Фрида Акобян – Предварительная схема построения электронного банка данных лексики современного армянского языка
Frida Hakobyan – An Outline of Building a Lexical Database for the Armenian Language

ԳԻՏԱԿԱՆ ԿՅՈՒՆ
НАУЧНАЯ ЖИЗНЬ
SCIENTIFIC LIFE

Վարդան Պետրոսյան – Հովհաննես Խաչատուրի Բարսեղյան (հայագիտության երախտավորը).....	71
Vardan Petrosyan – Ованнес Хачатурович Барсегян (Выдающийся арменовед)	
Vardan Petrosyan – Hovhannes Khachatur Barseghyan (The Outstanding Armenologist)	
Տեղեկություններ հեղինակների մասին	76
Сведения об авторах	
Information about the Authors	
«Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի «Բանասիրություն» շարքի 2014 թ. համարների տարեկան բովանդակությունը	78
Содержание журнала "Вестник Ереванского университета" (серия "Филология") за 2014 г.	
The annual contents of the "Philology" issues of the "Bulletin of Yerevan university" in 2014	

Դասիչ՝ 77716

Խմբագրության հասցեն. Երևան, Ալեք Մանուկյան փող. 1, 107
Адрес редакции: Ереван, ул. Алека Манукяна 1, 107
Address: 1, 106, Alek Manoukian str., Yerevan, Republic of Armenia

Հեռ. 060 710 218, 060 710 219

Էլ. փոստ՝ ephbanber@ysu.am
Կայք՝ ysu.am

Վերստուգող սրբագրիչ՝
Контрольный корректор
Proofreader

Գ. Գրիգորյան
Г. Григорян
G. Grigoryan

Համակարգչային ձևավորում՝
Компьютерная верстка
Computer designer

Մ. Աբգարյան
М. Абгарян
M. Abgaryan

Ստորագրված է տպագրության 20. 12. 2014:
Տպաքանակ՝ 120: Չափսը՝ 70x108 1/16: Թուղթ՝ օֆսեթ:
Տպագրական 5 մամուլ:

.....

«Լիմուշ» ՍՊԸ, Երևան, Պուշկինի փող., 40-76: